

Հ Հ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA

Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМЕНИ Р. АЧАРЯНА
H. ACHARYAN INSTITUTE OF LANGUAGE

ԼԵԶՈՒ
ԵՎ
ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ЯЗЫК И ЯЗЫКОЗНАНИЕ
LANGUAGE AND LINGUISTICS

1 (22)

2020



ԵՐԵՎԱՆ • ЕРЕВАН • YEREVAN

Հանդեսի հիմնադիրն է ՀՀ ԳԱԱ Ն. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը:
Լույս է տեսնում 2003թ., տարին երկու անգամ:

**Գլխավոր խմբագիր՝ Համբարձումյան Վ.Գ.
Խմբագրական խորհուրդ՝**

Աբրահամյան Վ. Շ., Ավետիսյան Յու. Ս., Բարլեզիզյան Ա. Կ., Բրուտյան Լ. Գ.,
Գալստյան Ա. Ս. (գլխավոր խմբագրի տեղակալ), Թրագուտ Յ. (Ավստրիա),
Խաչատրյան Գ.Կ., Կատվալյան Վ.Լ., Կորտլանդտ Ֆ. (Նիդեռլանդներ),
Հովհաննիսյան Լ. Շ., Հովսեփյան Լ. Ս., Մոհամմադի Մ. Մ. (Իրան), Պետրոսյան Վ.
Զ., Սարգսյան Ա. Ե., Սարգսյան Մ. Ա. (պատասխանատու քարտուղար), Սաքայան
Դ. Գ., (Կանադա), Սիմոնյան Ն. Մ. (գլխավոր խմբագրի տեղակալ), Տեր-Մերկերյան
Ռ. (Ֆրանսիա), Տոնապետյան-Դեմոպուլոս Ա. (Ֆրանսիա):

Главный редактор Амбарцумян В. Г.

Редакционная коллегия

Абрамян К. Ш., Аветисян Ю. С., Барлезизян А. К., Брутян Л. Г., Галстян А. С.
(заместитель главного редактора), Катвалян В. Л., Кортландт Ф. (Нидерланды),
Оганесян Л. Ш., Овсепян Л. С., Мохаммади М. М. (ИРИ), Петросян В. З., Сакаян Д. Г.
(Канада), Саргсян А. Е., Саргсян М. А. (ответственный секретарь), Симонян Н. М.
(заместитель главного редактора), Тер- Меркерян Р. (Франция), Тонапетян-
Демопулос А. (Франция), Трагут Я. (Австрия), Хачатрян Г. К.

Chief Editor Hambardzumyan V. G.

Editorial Board

Abrahamyan K. Sh., Avetisyan Yu. S., Barlezizyan A. K., Brutyan L. G., Galstyan A. S.
(deputy chiefeditor), Khachatryan G. K., Sh., Katvalyan V. L., Kortlandt F. (Netherlands),
Hovhannisyan L. Hovsepyan L. S., Mohammadi M. M. (Iran), Petrosyan V. Z., Sargsyan
A.E., Sargsyan M. A. (editorial secretary), Sakayan D. G. (Canada), Simonyan N. M. (deputy
chiefeditor), Ter-Merkeryan R. (France), Donabédian-Demopoulos A. (France), Tragut J.
(Austria).

© Լեզու և լեզվաբանություն

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ. 2020

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՅԱԼ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՏԱՐ

Ակադեմիկոս Գևորգ Բեգլարի Ջահուկյանի կյանքը եղել է նվիրում գիտությանը:

Նա 1962 թ. տվել էր իր համաձայնությունը, այդ մասին հայտնի է ԳԱ նախագահ Վ. Հ. Համբարձումյանի մի առիթով ասածից, դեկավարելու Ակադեմիայի լեզվի ինստիտուտն այն պայմանով, որ ամեն օր աշխատանքի լինի ցերեկվա ժամը 13-ից մինչև 17-ը, ինչպես ինքն է ասած եղել՝ առավոտյան 3-4 ժամ զբաղված է լինելու իր աշխատանքներով (ասում են՝ նախագահը նկատել է՝ «ի՞նչ է, մենք չենք աշխատում»)։ և այդպես էլ եղել է մինչև 2005 թ.:

Իսկ դա համալսարանի Բանասիրականը երկրորդ հերթով՝ օրվա 14-ից մինչև 19-ը դասեր առածներիս, լեզվի ինստիտուտում ասպիրանտ և հետագա այլ զբաղմունք ունեցածներիս համար մի տեսակ հրաշալի էր, մեր սովորություն բռնում էր. մենք ինստիտուտում տարիներ ի վեր աշխատեցինք օրվա ջահուկյանական ռեժիմով:

Նա խիստ ռեժիմի գիտնական էր, իր պատկերացումներում՝ անդրդվելի. սիրում էր ասել՝ «Ինձ մի՛ խանգարեք», թեկուզ աշխատանքային հարցով դիմելու լինեինք. շաբաթվա երեքշաբթի և ուրբաթ օրերին էր միայն 2-ական ժամով ընդունում աշխատակիցներիս, հատկապես 60-80-ական թվերին: Գիտական ցանկացած հարցի առնչվելիս, երբ նրա ընդունելությունն էինք ստանում, սիրում էր ասել՝ «Ես այդ մասին մտածել եմ», «Ես այդ գրել եմ». «Ամոթ չլինի հարցնել՝ իմ այս գիրքը կարդացե՞լ եք». լավագույն դեպքում՝ «Ա՛յ, տեսնո՞ւմ ես», և մի ձեռքի մատները մյուսից հանկարծ հեռանում, և ձեռքերը բացվում էին:

Ջահուկյանը լեզվաբանությունը, ավելին՝ հայագիտությունը, իր շուրջն էր առել, ամեն ինչի մեջ ինքն էր. և հիմա ենք իմանում, որ դա ամեն մի նվիրյալ գիտնականի խիզախումների նախապայման է, վկան՝ նրա գրքերն ու հոդվածները (հայերեն, ռուսերեն, օտար լեզուներով), նրանցում արտահայտված տեսությունները, մտքերը:

Նա 20-րդ դ. 60-90-ական թթ. հայ լեզվաբանության ամենամեծ դեմքն է: Այդ բնագավառի նման մեծությունը, ասենք, պիտի հիշվի ամեն անգամ, ամեն գիտական հարցի առիթով:

Հետաքրքիր շփումների անձնավորություն էր: Նրա տանը ես եղել եմ երկու անգամ (առաջինը «Լիդիերենի բառարան»-ը վերցնելու), երկրորդը մեկ օրում՝ չորս անգամ, առաջին անգամը՝ զարմացավ, քանի որ խանգարում եմ, երկրորդին՝ հանդիմանեց, որ պիտի ուշադիր լինեմ, երրորդին՝ զայրացավ, չորրորդին՝ «Ա՛յ, կլինես ղեկավար, կտեսնես՝ ինչ է նշանակում անուշադիր լինել», և ծիծաղեց իր յուրօրինակ ծիծաղով. իսկ առիթը իմ թեկնածուականի դոկումենտների էջերին (այդ և հակառակ երեսին) ստորագրելն էր, պիտի այդ օրը լիներ. ամեն անգամ մի թուղթ մնում էր չստորագրված (նա այդ օրվանից երկուսուկես ամսով գնում էր արձակուրդ):

Իմ նկատմամբ, ասեմ. միշտ բարյացակամ է եղել. իմ ամենօրյա աշխատանքը գնահատող. ինքն է ինձ իր մոտ կանչել և հորդորել նոր-նոր սպագրվող գիրքս ներկայացնել իբրև ատենախոսություն, այն ժամանակ. այդ տարիներին էլ իմ երկու ատենախոսությունը ներկայացվեց ռուսերեն, գնահատվեց միութենական ԲՈՂ-ի կողմից: Նա դրական լավագույն հատկանիշներով օժտված անձնավորություն էր, կյանքի ամեն մի դժվարություն տոկուն ձևով հաղթահարած, ժուժկալ, ըստ այդմ՝ բացառիկ ձեռքբերումների հասած: Իմաստուն էր, թվում էր՝ ամեն ինչ գիտի. ես երբեմն մտքեր ու արտահայտություններ էի հորինում կամ դրանք թարգմանում գրաբար, և թե՛ «Ո՞վ է ասել, դու ես հորինում, բայց վատը չէ, կարծես»,- ասում էր:

Լեզվի ինստիտուտը տնօրինեց տարիներ շարունակ, ունեցավ աշակերտներ, որոնք, ես վստահ եմ ասում, նրան հիշում են երախտագիտությամբ: Այդ տարիներին աշխարհում հայերենի վերաբերյալ յուրաքանչյուր հարց լուծվում կամ դրվում էր լուծման մեծ գիտնականի՝ Գ. Բ. Ջահուկյանի իմացությամբ, համաձայնությամբ:

Նրան ճանաչում էին ամենուրեք, հատկապես գիտության ոլորտներում՝ բուհ, ինստիտուտ, ակադեմիա:

Վ. Գ. Համբարձումյան

ԱՆԳԼԵՐԵՆ ԵՎ ՀԱՅԵՐԵՆ ՀԱՆՊԱՏՐԱՍՏԻՑ ԽՈՍՔԻ
ԸՆԴՀԱՏՈՒՄՆԵՐԻ
ՄԻ ՔԱՆԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ

*Բանասիր. գիտ. դոկտոր. Կ.Շ. Աբրահամյան,
Բանասիր. գիտ. թեկնածու Կ.Ա. Վեյյան*

Բանալի բառեր. հանպատրաստից բանավոր խոսք, շարահյուսական հատույթ, շարակարգային հարաբերություն, խոսքի “վթարներ”, մինի-վթարներ, խոսքային ուղղումներ:

Ключевые слова: спонтанная разговорная речь, синтаксический фрагмент, синтагматическое отношение, речевые “аварии”, мини-аварии, речевые исправления.

Key words: spontaneous spoken language, syntactic fragment, syntagmatic relations, syntactic “accidents”, mini-accidents, speech repairs.

Հանպատրաստից բանավոր խոսքի առանցքային առանձնահատկություններից է *հատույթավորվածությունը* և *ոչ ինտեգրվածությունը*, որոնց հետևանքը լինում է չնախապատրաստված խոսքի *ոչ կապակցված* շարահյուսությունը: Վերջինս կարող է դիտարկվել որպես ոչ միայն հանպատրաստից բանավոր խոսքում առաջացող սխալների և ժամանակի սղության, այլև առերես հաղորդակցման արդյունք, «երբ տեղեկատվության մեծ մասը հայտնի է տվյալ իրադրության մասնակիցներին, և հարկ չկա, որ այն հնչեցվի»¹:

Բանավոր խոսքում առաջացող շարահյուսական հատույթները կարելի է սահմանել որպես անավարտ միավորներ, որոնք օժտված են թե՛ նախադասությանը և թե՛ բառակապակցությանը հա-

¹ Հմմտ. J. Miller, R. Weinert 2009, 23:

տուկ շարահյուսական հատկանիշներով: Ուշագրավ է այն, որ դրանք չունեն *շարակարգային* հարաբերություններ նույն խոսքաշարի այլ նախադասությունների և բառակապակցությունների հետ: Նման շարահյուսական հատույթները կարող են առաջանալ խոսքային վրիպումներից կամ սխալներից: Մյուս կողմից՝ նրանք կարող են ունենալ նաև այլ՝ գործաբանական դրդապատճառներ:

Շարահյուսական հատույթավորումը համընդհանուր երևույթ է՝ հատուկ տարբեր, այդ թվում տիպաբանորեն տարբեր լեզուների, ինչպիսին են անգլերենը և հայերենը: Շարահյուսական հատույթների պատճառ կարող են լինել այսպես կոչված շարահյուսական «*վթարները*»: Վերջիններս մենք անվանում ենք այնպիսի խոսքային ընդհատումներ, որոնք ի հայտ են գալիս հանպատրաստից խոսքում տարբեր գործաբանական պատճառներով, ինչպես նաև խոսքային վրիպումների արդյունքում:

Հարկ է նշել, որ գործառական դրսևորումներով շարահյուսական վթարները համասեռ չեն և իրենց տարաբնույթ տեսակներով կազմում են մի ամբողջական հարացույց: Հիմք ընդունելով շարահյուսական վթարների ձևային (ֆորմալ) և բառային յուրահատկությունները՝ առանձնացնում ենք դրանց երեք հիմնական տեսակ՝ *մաքսի-վթարներ*, *մինի-վթարներ* և *միկրո-վթարներ*՝ յուրաքանչյուրն իր տարաբնույթ ենթատեսակներով:

Շարահյուսական վթարների ձևային (ֆորմալ), գործաբանական, ինչպես նաև իմաստային առանձնահատկությունների ուսումնասիրությունն ավելի է կարևորվում, երբ այն կատարվում է գուգադրական-վերլուծության հարացույցում, տվյալ դեպքում՝ անգլերենի և հայերենի նյութի հիման վրա:

Շարահյուսական վթարների ուսումնասիրությունը զուգադրական տիպաբանության լույսի ներքո էլ՝ ավելի կբացահայտի դրանց լեզվամշակութային ազգային առանձնահատկությունները, ինչպես նաև զուգամետ (կոնվերգենտ) և տարամետ (դիվերգենտ)

գործառական հատկանիշները՝ տիպաբանորեն տարբեր լեզուներում:

Սույն հոդվածում ներկայացվում են մինի-վթարների որոշ գործառական դրսևորումներ հիշյալ լեզուներում: Վերլուծության համար փաստական նյութ են ծառայել զգալի թվով ոչ պաշտոնական հարցազրույցներ, որոնք անցկացվել են լեզվակիրների հետ ԱՄՆ-ի, Անգլիայի և Հայաստանի տարբեր քաղաքներում:

Ինչպես արդեն նշվել է, շարահյուսական վթարների յուրաքանչյուր տեսակն ունի իր ենթատեսակները: Դա վերաբերում է նաև մինի-վթարներին՝ իրենց ենթատեսակներով՝ պայմանավորված տարբեր գործառական դրսևորումներով:

Դրանցից է մինի-վթարների մի այնպիսի ենթատեսակ, որի հիմքում տարատեսակ *ուղղումներն* են: Մեր տվյալները ցույց են տալիս, որ շատ հաճախ հանպատրաստից խոսքում միտքը մի պահ ընդհատվում է, քանի որ հաղորդակցվողը ցանկանում է շտկել իր խոսքաշարը, ուստի անմիջապես հաջորդող խոսքաշարը, ըստ էության, նախորդող ընդհատված հատվածի (հատույթի) ուղղումն է:

Ուղղումները կարող են պայմանավորված լինել նախորդող խոսքաշարում տարաբնույթ վրիպումներով, որոնք առաջանում են տարբեր պատճառներով, այդ թվում նաև “հիշողության կառուցվածքով և սահմանափակումներով պայմանավորված խոսքային դրսևորումներով”²: Նշենք նաև, որ խոսքային ուղղումներն իրենց դրսևորումներով նույնպես համասեռ չեն և կարող են ունենալ տարբեր տեսակներ, որոնք ներկայացնում ստորև:

Այսպես, խոսքաշարի ընդհատման պատճառ կարող է լինել բառի կամ բառակապակցության *ավելացումը*: Բերենք անգլերենի հանպատրաստից խոսքում այս առանձնահատկությամբ մինի-վթարների հետևյալ օրինակները.

² N. Chomsky 1970, 10:

1. *I grew up in..basically in Dallas*, from about third grade on. (interview with C. Thompson),

2. **If I had a chance to live anywhere, I think I would probably... other than Austin, I would move to New York, probably for all the work opportunities** (interview with J. Duke), 3. **And in the last twenty years the girls .in schools *have.. academically have* been achieving higher standards than the boys.** (interview with Sheily)

Օրինակները ցույց են տալիս, որ խոսքային ընդհատումները և ավելացումները տեղի են ունենում այն պատճառով, որ խոսողը ցանկանում է ճշգրտել իր ընթացիկ խոսքաշարը, քանի որ ավելացված բառերը՝ *basically, academically* (օրինակներ 1, 3) և բառակապակցությունը՝ *other than Austin* (օրինակ 2) խոսողի տեսանկյունից որոշակիորեն կոնկրետացնում են խոսքաշարը:

Երբեմն ավելացած հատվածն ընդարձակ բառակապակցություն է, որն իր հերթին կարող է որոշակի փոփոխություն առաջ բերել հաջորդող խոսքաշարում.

You don't..In the world of architecture in the United States, we don't have any female..female architects. (interview with J. Greenwood)

Այս դեպքում էլ ընդհատված խոսքաշարի *you* դերանվան ավելացումից հետո այն փոխարինվեց *we* դերանունով, որը, թերևս, իմաստային փոփոխություն չի առաջացնում, քանի որ երկու դերանուններն էլ գործածվում են ընդհանրացված իմաստով:

Հայերենում մինի-վթարների այս տեսակն առավել շատ է հանդիպում. ըստ մեր հարցազրույցների տվյալների՝ հայերենում նմանատիպ մինի-վթարները երեք անգամ գերազանցում են անգլերենին: Համեմատենք հետևյալ օրինակները.

1. *Հիմնականում զբաղված են.... Գավառ քաղաքի տղամարդիկ զբաղված են* հիմնականում տնտեսությամբ... (Լ. Ն.-ի հարցազրույցից),

2. *...կարելի է փնտրել բանակից համատարած խուսափման երրիտասարդության տղաների շրջանում* բանակից համատարած

խուսափման էտ հոգեբանության ձևավորման մեջ նաև էտ կանացի դաստիարակության դերակատարումը: (Վ. Գ.-ի հարցազրույցից),

3. *Համեմատած Սովետական Միության ժամանակաշրջանում կանանց դերը կանանց և տղամարդկանց դերը ընտանիքում և ընդհանրապես հասարակական կյանքում. բաժանված էր կոնկրետ չափանիշների. (Վ. Թ.-ի հարցազրույցից),*

4. *Այս պահին, ճիշտ է, մենք՝ կանայքս, կարողանում ենք դպրոցում աշխատել կամ որպես.. ը. պոլիկլինիկայում որպես բուժ-բույր, բժիշկ աշխատել,.. : (Ն.Կ.-ի հարցազրույցից):*

Ինչպես որ անզերեհում էր, հայերենում ևս ավելացումները ներկայացված են որպես կանոն եզակի բառերով կամ երկու բառից բաղկացած կապակցություններով: Սակայն երբեմն հանդիպում ենք բավականին ընդարձակ կառույցների.

Եվ ներկայումս տեսնում եմ և.. ը. ոչ պետական կառուցվածք-ներում, բայց մասնավոր կառուցվածքներում այդ երիտասարդնե-րը՝ և աղջիկները և տղաները լավ էլ վարձատրվում են: (Ն.Կ.-ի հարցազրույցից)

Խոսքաշարի ուղղման մեկ այլ տեսակի գործառական յուրա-հատկությունն այն է, որ նրանում հաղորդակցվողը ցանկանում է *փոխարինել* մի բառը մեկ այլ բառով: Օրինակ՝ անզերեհ.

1. ...I find my friends who teach *in other..inpublic* schools and in .. community colleges,...(interview with P. Jott),

2. Ah..*it would be a .. public..it would be a much..* higher pay,... (interview with P. Jott),

3. I would say um. .. probably ..jobs are .. gained or earned . more and more unmarried, and there are more women who are in um.different fields than the *traditional American..traditional female* fields, um. computer science, politics, economics, um. IT. (interview with T. England)

Այս դեպքում մեկ բառի փոխարինումը մյուսով (other - public, public - much, American - female) ուղեկցվում է կից նախորդող բառի կամ բառակապակցության (in, it would be, traditional)

կրկնությամբ: Սակայն կան դեպքեր, երբ նման կրկնությունները տեղի չեն ունենում, ինչպես հետևյալ օրինակում. I've never had any sort of obstacles of being a woman *to..you know, imy* position. (interviewwith C. Preston)

Ուշագրավ է, որ բառի փոխարինմամբ ուղղումները տեղ են գտել միայն իգական սեռի ներկայացուցիչների խոսքում: Այս տարատեսակի՝ *բառի փոխարինմամբ* մինի-վթարները հանդիպում են հայերենում ևս: Ավելին, ինչպես և նախորդ դեպքում, հայերենում այս տեսակի մինի-վթարները լինում են ավելի հաճախ, քան անգլերենում: Ըստ մեր հարցումների՝ կրկնակի չափով: Բերենք մի քանի օրինակ.

1. Բայց մի ուրիշ կողմից էլ վատ, ցածր, կտրուկ ցածր կենսամակարդակը, աղքատությունը, անհավասարությունը մեծացրել են նաև *բնեռային մի ուրիշը.. ընտանիքների մի ուրիշ* կատեգորիայի թիվ,...: (Վ. Գ.-ի հարցազրույցից),

2. Ինչ վերաբերում է զուտը. Համեմատության համար, եթե վերցնենք տասնհինգ-քսան տարվա ընթացքի կտրվածքով, ը. միանշանակ և՛ հասարակության հասունացման զուգահեռն՝ ը. գլոբալիզացիայի տենդենցներին զուգահեռը. Կինը ավելի շատ սկսել էր. Ներգրավվածություն ունենալ հասարակական բոլոր ոլորտներում, ը. ինչո՞ւչէ, նաև իրավաբանության ոլորտում, *մեր մասնագիտական.. զուտ մասնագիտական* գործերով: (Մ.Ա.-ի հարցազրույցից),

3. Իրավական առումով, ըստ իս, ինչքան էս կողքից նայում եմ, հուրախություն ինձ, ամբողջը. Ազգաբնակչության իրավական գիտակցումն ա բարձրանում և բարձրացել է համեմատ *հինգ.. տասնհինգ* քսան տարի առաջ և բարձրանում ա, մարդիկ սկսել են մտածել իրենց իրավունքների մասին և սկսել են գոնե փորձել պաշտպանել իրենց իրավունքները, էս գոնե այդպես եմ կարծում: (Գ.Ղ.-ի հարցազրույցից):

Ոչ միայն անգլերենում, այլև հայերենում բառերի փոխարինման ժամանակ հարակից բառերը կրկնվում են (տե՛ս 1-ին և 2-դ օրինակները): Խոսքաշարի ուղղման երրորդ տարատեսակն այն է,

որ հաղորդակցվողը ցանկանում է ուղղում մտցնել իր խոսքաշարում՝ *հանելով որևէ, ըստ իրեն, խոսքաշարից ավելորդ բառ*։ Օրինակ՝ անգլերեն.

1. *I can just..I can* give the example of, you know, my family members, with my sister. (interview with P. Boham),

2. *But I think now.. I think* women in..in.. in society have um., especially here in Newcastle, I think., you know, I don' t feel change that much here for fifteen twenty years. (interview with C. Preston)

Այսպես, 1-ին օրինակում ընդհատմանը հաջորդող կրկնվող խոսքաշարում (I can) բացակայում է մինչ այդ գործածված just բառը, իսկ 2-րդում՝ now բառը: Հաջորդող խոսքաշարում նախորդող բառի բացակայությունը, թերևս, կարելի է բացատրել նաև այն հանգամանքով, որ տվյալ բառը համատեքստում էական հաղորդակցական կշիռ չունի, ուստի դադարից հետո հաջորդող խոսքաշարում այն չի հնչեցվում: Նման օրինակ նկատել; ենք նաև հայերենում.

[...] **Գիտե՞ք՝** ինչու, ոչ թե ինչ-որ ես գովազդում եմ մեր անելիք աշխատանքները, այլ մեր *նման ավելի* ը.. կան էլի խմբեր, կան, որոնք աշխատում են կոնկրետ . այնպիսի բիզնեսի ոլորտ ստեղծեն Հայաստանում,...: (Պ.Ֆ.-ի հարցազրույցից):

Դժվար չէ նկատել; , որ *ավելի* բառին հաջորդող դադարից հետո այն այլևս չի հնչեցվում: Տվյալ բառի բացթողումը, հնարավոր է, որ նպատակային լինի, քանի որ խոսողը չի ցանկացել համեմատության մեջ դնել բիզնեսի ոլորտում աշխատող այլ խմբերը: Հարկ է նաև նշել, որ վերջին տիպի դեպքերը շատ հազվադեպ են թե՛ անգլերենում և թե՛ հայերենում:

Մի շարք դեպքերում խոսքաշարն ընդհատվում է այն պահին, երբ հաղորդակցվողը *հիշում*՝ն հնչեցնում է իր տեսակետից կարևոր տեղեկատվություն, որից հետո նա շարունակում է նախորդ ընդհատված խոսքաշարը: Օրինակ՝ անգլերեն. [...]Regarding other things within the community, uh.probably, one place we haven't seen

much change is in . elective officials, like *the city.. like the mayor, the city council*.[...] (interview with A. Greenwood)

Կարելի է ենթադրել, որ *like the mayor* բառակապակցությամբ արտահայտված տեղեկությունը, ըստ խոսողի, ավելի կարևոր է, քան *like the city council* բառակապակցությամբ արտահայտվածը, քանի որ հիշելով այն՝ նա ընդհատում է խոսքաշարը և հնչեցնում *like the mayor* հատվածը, ապա նոր վերադառնում նախորդող խոսքաշարին՝ *like the city council*: Երբեմն խոսքաշարի ընդհատումը տեղի է ունենում անմիջապես նախադասության սկզբում, երբ հեղինակը հասկանում է, որ ճիշտ չի պլանավորել իր մտքի շարահյուսական արտահայտումը: Օրինակ՝ անգլերեն.

1. *That's certainly..* Obviously, if you go to other places in US, that's not true. (interview with A. Greenwood).

2. *But um. it's still..*there is a change because of the economy. (interview with T. England),

3. *So women..there are lots of women* managers, women line managers, so I've always been in an . environment where women have quite a big role anyway. (interview with C. Preston)

Վերջին օրինակում նախադասության սկիզբը փոխվում է՝ ըստ ներմուծված *there are lots of* բառախմբի: Հետաքրքրական է, որ մինի-վթարների վերջին երկու տարատեսակները հայերենի նյութում բացակայում են:

Այսպիսով, կարելի է նշել, որ ճշգրտումներով / ուղղումներով պայմանավորված մինի-վթարները բնորոշ են թե՛ անգլերենին և թե՛ հայերենին, որը երկու լեզուներում հանպատրաստից բանավոր խոսքի զուգաձև հատկանիշն է: Նկատի առնելով երկու լեզուների փաստական նյութի վերլուծության արդյունքները, կարելի է եզրակացնել, որ խոսքային ընդհատումներն իրենց բոլոր դրսևորումներով և տարատեսակներով հանպատրաստից բանավոր խոսքի հատուկ մի երևույթ է, որը, հավանաբար, կարող է հավակնել լեզվական համընդհանրույթի (սուբունիվերսալիայի) կարգավիճա-

կի, և դա այն այն դեպքում, եթե նմանատիպ ուսումնասիրությունների փաստական նյութը տիպաբանորեն համալրվի ավելի մեծ թվով լեզուների համապատասխան տվյալներով:

Գրականություն

Miller J., Weinert R. 2009, Spontaneous Spoken Language.Syntax and Discourse, Oxford University Press, p. 3:

Chomsky N. 1970. Aspects of the Theory of Syntax, the M.I.T. Press, Cambridge, Massachusetts, p. 10:

К. Ш. Абрамян, К. Велян. О некоторых причинах прерываний в английском и армянском спонтанной речи. - В статье рассматривается одна из неотъемлемых черт спонтанной речи, а именно синтаксические прерывания или, иначе - синтаксические “аварии”. Последние имеют целый ряд как формальных признаков, так и причин. Предметом анализа в данной статье являются основные свойства одного из подтипов *мини-аварий* -разнородные по своим функциональным характеристикам речевые исправления. Как показывают данные анализа, речевые исправления свойственны как английской, так и армянской спонтанной речи, что позволяет предположить их универсальный характер.

K. Sh. Abrahamyan, K. Velyan. On some causes for interruptions in spontaneous talk in English and Armenian. - The article discusses one of the inherent features of spontaneous talk, namely, syntactic interruptions,or syntactic “accidents”, put otherwise. The latter have a wide range of formal properties, as well as reasons behind them. The article highlights the key properties of one subtype of *mini-accidents*, more specifically – speech repairs, which are not functionally homogenous. As the data for analysis indicate, speech repairs can be found both in English and Armenian, which suggests that speech repairs and syntactic interruptions caused by them could be considered to be a universal phenomenon.

DIALECTAL VARIANTS OF THE CONCEPT OF ARMENIAN

WORDS *ԽՈՒՆԿ* [XUNK] “INCENSE”

Doctor of Philol. Science H. H. Mesropyan

haykanushm@mail.ru

Key words: Armenian dialect, religious ritual, burning incense, dialectal vocabulary, literary borrowing, phonetic-semantic analysis, local versions.

Ключевые слова: Армянский диалект, религиозная лексика, ритуал, курение ладана, молитва, литературное заимствование, фонетико- семантический анализ, территориальный вариант.

Բանալի բառեր. Հայերենի բարբառ, կրոնական բառապաշար, ծես, խունկ ծխել, փոխառություն, հնչյունական-իմաստարանական վերլուծություն. տարածքային տարբերակ:

Burning incense is a religious ritual of spiritual piety and for that purpose incense and incense oils were used. Burning incense is performed during the Holy liturgy and other religious ceremonies to spread the smell of the incense. The aim of burning incense ceremony is to sanctify the church and the people with Godly blessing; thus each prayer rises to the God with the smoke of censer: “My prayer goes up as the incense before your Lord”, says Prophet David [Psalm: 140:2].

“The service officer who performs the burning incense is the deacon who is handed the censor by the bishop during the ordaining and lets him to burn the incense”. However during the ceremonies all the clergy burn the incense while leading the procession, explains Archbishop Maghakia Ormanyan¹.

Burning incense is performed during the following periods of piety; while saying “Lord for all”, at the beginning of reading the Armenian church psalms from the Gospel and during the psalm “ Whitsuntide”,

¹ Archbishop Maghakia Ormanyan 1992, 61.

while singing “Glory to Lord” and “Holy God”, singing the main songs and saying prayers or “Long live” during the Liturgy². Incense is also burned during the ceremonies performed out of church such as during the Pentecost, funerals and other religious ceremonies. Sometimes it becomes necessary to burn incense for non-religious purposes in the houses, various institutions, cemeteries and elsewhere.

While speaking about the root stem *խունկ* [xunk] (“incense” in Armenian) Hr. Acharyan considers it as a borrowing word from Persian and it was known as “qend” (“to light”) in the Indo-European protolanguage and in Latin it was known with “incondo” (“to burn”) version. Besides, H. Acharyan mentions a number of compound words formed with the word *խունկ* [xunk] (“incense”) such as *խնկել* [xnkel] ‘burn incense’, *խնկաբեր* [xnkaber] “thuriferous”, and *խնկալից* [xnkalic^c], *խնկածու* [xnkacu], *խնկակալ* [xnkakal], *խնկադագ* [xnkaɫac^c], *խնկիչ* [xnkič^c], *խնկենի* [xnkeni], *խնկարկու* [xnkarku], *դեղախունկ* [deɫaxunk], *դեղնախունկ* [deɫnaxunk], *եղեգնախունկ* [eɫegnaxunk], *հայխունկ* [hayxunk], *չամչախունկ* [č’amč’axunk], *զմնախունկ* [zm’naxunk], *լիախնկայ* [liaxnkay], *խնկողկուզիկ* [xnkoɫkuzik], *խնկատերև* [xnkaterev], *խունկեղեգն* [xunkeɫegn], *խնկաբոյր* [xnkaboyr] ‘incense-perfumed’ as well as derivative words *խունկի* [xunki], *խնկագունիլ* [xnkagunil], *խնկալոջ* [xnkaloj], *խնկածիչ* [xnkacxič^c], *խնկածուխ* [xnkacux], *խնկիկ թուր* [xnkik t’ut^c] etc³.

The Dictionary of St. Malkhasyants writes about the word *խունկ* [xunk] (“incense” in Armenian) “Juice with sweet aroma which licks from various kinds of trees, becomes solid and makes pleasant odor while burning”⁴.

² Sargisean 1996.

³ Acharyan 1973, 421.

⁴ St. Malkhasyants, Armenian 1944, 300.

The Gypsy language, Kurdish, Turkish borrowed the word *խնւնկ* [xunk] (“incense” in Armenian). Turkish speaking Greeks also borrowed the word from Turkish speaking Armenians living in Cesarea.

As the ceremonies are performed with the immediate participation of the people the words referring to the ceremony were applied by the people and later on as borrowings they were imported into the dialect vocabulary, mainly preserving the word forms of the literary language.

Unchanged version of the word *խնւնկ* [xunk] (“incense” in Armenian); specific to literary Armenian is utilized in the dialect of Karin and in the speeches of the same dialects in Achaltskhe, Achalkalaki, Tsalka, Balkho, Mets Samsar, as well as the speeches of the settlements of Manazkert, Badnos, Berkri, Archak, Mandan, the villages of Nackijevan, Tanakert, Bist, the settlements of Vahan and others in Karmir region.

The literary borrowing word *խնւնկ* [xunk] (“incense” in Armenian) had vowel and consonant sound interchange in the Armenian dialects by adding the sound *ը* [ə]. Only a few speeches have the synonym of the word “incense”. We meet in Van folklore: «For pretty to embalm incense and for ghastly to smoke droppings»⁵. And in zoke’s tradition: «Zokar is always embalm incense on their deads every week» (Agulis)⁶.

1) Sound interchange of the consonants *խ* [x] and *կ* [k]:

a) *խ* [x] > *հ* [h]. The periodical “Tkhrake” mentions that the sound version of *խնւնկ* [hunk] is implicated in Ayntap⁷. This is a unique area where the sound *հ* [h] is implicated for the voiceless *խ* [x]. As known the dialect phonetics has *հ* [h] > *խ* [x] correspondence (Khoy, Vaspurakan) and the opposite sound interchange is very rare (such as in Araratian dialect’s Lori speaking *խաղող* > *հաղող*, *խաղ* > *հաղ*). This

⁵ Ghanalanyan 1951, 160.

⁶ Zakaryan 2008. 149:

⁷ “Byurakn” (magazine) 1900, 42, 671.

fact is explained by the Turkish phonetic rules. It's known that litteral Turkish has no “kh” *ju* [x] deaf consonants and replaces it in loan words with *h* [h] sound (for examlpe: *jułnp* [xmor] - *hamur*, *junun* [xot] - *otu*, *juuɣ* [xač^c] - *haç*). The idiom of Ayntap in this case has repeated the influence of Turkish, and by this the form «*hnıúq*» [hung] passed to the Turkish vocabulary.

b) *ɥ* [k] > *q* [g], *q̣* [gʸ], *ɥ̣* [kʸ]: As known the Persian borrowing word *junıúł* [xunk] had also its original version of *junıúq* [xung]. Many of the Armenian dialects borrowed the version with the voiced consonant *q* [g]. The studies denote that the phonetic-semantic unit *junıúł* [xunk] is considered normative in literary Armenian, and the version *junıúq* [xung] is more common in the Armenian dialects. For instance the form *junıúq* [xung] is registered in the Eastern Armenian group dialects of Constantinople, Tigranakert, Rodosto, Sebastia, Arabkir, Zeytun, Kharberd, Hajn, Mush, Sochava and Nor Nakhijevan as well as eastern group dialects of the areas of Ararat, Jugha, Shamakhi, Agulis, Tiflis and the dialects of Persian Armenian regions of Urmia, Salmast. Besides the above mentioned main areas as phonetic islands the version *junıúq* [xung] is registered in settlements inhabited with refugees from Sasoun such as Ashnak, Nerkin Sasnashen, Lernarot as well as in the settlements of Sasoun such as Enguznak, Saghdun, Gelieguzan, Gomk, Hosner, also in Alashkert, in the villages of Ghalacha, Aragats of Aparan region inhabited with new-comers from Alashkert, in the villages of Madina, in Martuni region, Mijin Tagh of Khotrjur, Hakhveris of Igdır region, Taghavank of Khut region, Alichagrak of Verin Basen region, Unie (Ballugh) of Hamshen region, Armash and Kharberd of Nikodemia, Gyabolner of Bulanikh, Liz of Nerkin Bulanikh, among the Persian areas in Muzhumbar near Tavrız, Shurishkan and Milakert of Peria, in the settlements inhabited with new-comers from Khoy such as Kagh of Nakhijevan, Antarut and Byurakan of Ashtarak region, Aragats of Ejmiatsin region, settlements inhabited with new- comers from Maku,

Vardenis of Aparan region, in the village of Karmir of Gavar region, Tsakhkavan village of Ijevan region, Ptghni of Kotayk region inhabited with new-comers from Bayazet and in many other places.

As known the simple sound *q* [g] is mainly palatalized and becomes *q'* [gʲ] in the area of Vaspurakan. Such pronounced *խունկ* [xungʲ] is registered in Mosk, Van, in the areas nearby Van, such as Aghbak, Gortsot, in Khalents of Ararat region, in Proshnents of Bitlis, in Artashat and Masis inhabited with new-comers from Vaspurakan and many other places.

The ending sound *կ* [k] is palatalized *խունկ* [xunk] in Burastan of Artashat region inhabited with new-comers from Khoy.

2. Sound interchange of the vowel *ու* [u]: *ու* [u] > *ըու* [əu], *օ* [aw], *ւի* [ä], *նի* [ü], *ուն* [au], *ւն* [äu], *օն* [awu], *օն* [awü], *օն* [äwü], *խու* [iu].

Instead of simple *երու* the dialect of Haghin settlement in Moks belonging to the western group has *երու* compound sound combination and *խունկ* [xə'ung] version. In a number of dialects the vowel *ու* was the object of sound interchange becoming *օ* [äw] simple vowel, *ւի* [ä], palatals *օր* *ուն* [au], *օն* [awü], *օն* [awu], *խու* [iu], *օն* [awu] compound vowel combinations, diphthongs. In similar examples voiceless *կ* [k] or sometimes *գ* [g] voiced sound are implicated in the end of the word. For example *խօնկ* [xawnk] (Chapar of Martakert region in Nagorni Kharabag), *խօնկ* [xawng] (Bantag of Alashkert region, Zolakar of Martuni region). *խօնկ* [xawng] version is implicated in Marash, the city of Goris, Vaghatur, Verinshen, Brun, Khot, Khndzoresk and Shinuhar of Goris region, Kakavaberd, Urgutun of RNK, Janyatagh, Madaghis, Khazanichi, Kolatak, Garnakar and Tblghi of Martakert region. *խօնկ'* [xawngʲ] version is implicated in Arajadzor of Martakert region, *խօնկ'* [xawngʲ] in Mamrtantsi of Moks, *խունկ* [xaung] in Khtrbek of Svedia, *խունկ* [xang] in Karchevan, *խօնկ* [xäwng] in Verin Horuk, Ushi inhabited with new-comers from Bitlis and many other places. The

examples denote that closer to the eastern areas the vowel u becomes simpler and closer to the west they become more compound.

3. Addition of er vowel.

The version of the word *խնւնգ* [xung] is implicated with the addition of the sound *ը* [ə] categ in the eastern territories especially in Artsakh, Syunik and Shamshadin. *խօնգը* [xawngə] (Nor Shen in Martuni region, RNK), *խօնգնը* [xawngnə] (Karahunj of Goris), *խնւնգը* [xung Bulanikh] (Berd) etc. Such versions simultaneously express the definite and indefinite category.

In a number of places the word *խնւնգ* [xung] is implicated with more than one versions. For instance Aslanbek where *խնւնգ* [xung] (absolute) are implicated simultaneously with *խօ* [xäw] // *խի* [xü] borrowed versions. More than one versions are registered in Vozm *խօննւնգ* [xawüwnkʸ] // *խօննւնգ* [xawânʸ], in the village of Khalents of Mosk- *խօննւնգ* [xawungʸ] // *խաւննւնգ* [xaungʸ].

4. The implication of the synonyms of the word *խնւնկ* [xunk] (“incense” in Armenian).

In many Armenian dialects the word *խնւնկ* [xunk] has its equivalents synonyms such as *կընդրուկ* [kəndruk] (Agulis, Yerevan, Tprghis), *կընտրուկ* [kəntruk] (Akaltskha) and *լիբանոս* [libanos] (Lori). The latter is considered high quality, noble type of incense. Lots of languages as well as Armenian dialects have the Semantic word *զմնոս* [zmurs] (“sealing wax, balsam”) which is also incense or resin with pleasant smell⁸.

“New Dictionary of the Armenian Language,” mentions the words *պուխուր* [puxur] and *պեհար* [pehar] as synonyms to the word *խնւնկ* [xunk]⁹. However we did not find such registered words in any area. Nevertheless in his S. Amatuni mentions the word *կամախի* [kamaxi]

⁸ Avetikean, Syurmelean, Avgerean 1836, 739.

⁹ Ibid, p. 984.

implicated in Ararat region as synonym to *խունկ* [xunk]¹⁰. *Կամախի* [kamaxi] is a substitute to the incense which is sweet smell smoke utilized during the funerals to spread pleasant aroma.

A number of words and word forms of the dictionary are associated with “incense” and “incense burning”.

The incense is usually kept in a silver pot which is called an incense-holder. The inhabitants of Van call it *բուխուրդան* [buxurdan] (بخور نداد in Persian). According to Acharyan’s rule and the phonetics rules specific to Van-Vasporakan that word must have *պնխուրդան* [puxurdan] phonetic version especially “New Dictionary” also mentions voiceless plosive form *պուխուր* [puxur] (بخور in Persian). We assume that Van dialect preserved the original form of the borrowed word as a new borrowing in this case from Persian.

In Tigranakert dialect mentions *արդյւման* [arłämän] for the incense-holder which was brought as a souvenir by the pilgrims returning from Jerusalem.

As we can see, the word *արմատան* [armałan] is a borrowing from Persian which has the meaning of “a gift brought from a far-away place” and in this case the word was a subject of the interchange of the consonants *ւ* [m] and [ł]. We can consider that interchange was the result of subconscious connection of the word with *աման* [aman] (pot) meaning and emphasizing the connotation of *արդ+աման* [arł+aman] compound. We can conclude from this form that because of misunderstanding Tigranakert dwellers accepted the word arg as a synonym to *խունկ* [xunk] (“incense”). In Bogdanovka Poga local dialect the synonym of the word “like an incense” *խնկաման* [xnkaman] is *թաս* [tʰas] “cup”, in Malatya: *խընգաձըխիգ* [xəngəxəxig] (< *խունկ* [xung]+*ու* [a]+*ձուխ* [cux]+*իկ* [ik]) “a plate for emblem of incense”, in Shamakhi Sagyan place: *խունգանոց* [xungana^{wc}] (<*խունկ* [xunk] +*անոց* [anoc^c]), in Edovkia *փարդուք* [pʰarduk^c] words.

¹⁰ Amatuni 1912.

We think that in Edovkia dialect the synonym of a word *իսարդուք* [p^carduk^c] is connected with Persian word *իսարդա* [p^carda] پرده (*իսարդա* [p^carda] – «curtain»).

The change of the meaning of that word has done because of the simmilarity of words smoke and curtain. The smoke spreaded in the church is resemble with tulle curtain.

The little cover of the incense pot in many dialects is called shushan *շուշան* [šušan] (*շուշոն* [šušəⁿ], Zeytun, *շնիշան* [šüşan], Agulis, Salmast etc.). In this case the cover of the incense pot was resembled with the flower lily.

St. Malkhasyants' Dictionary registered the compound word *խունկ ծրխել* [xunk cəxel] (“to smoke incense”) as a synonym to *խնկարկել* [xnkarkel] (“to burn incense”) with the meaning of “to praise” and “to flatter”¹¹. [We meet in Van folklore: «*Խորոտիս խունկ պիտեր խնկելու, գեշին՝ փրթրի ծուխ, ծրխելու*» [“Xorotin xunk piter xkelu, gešin -p^cət^cri cux, cəxelu”] «For pretty to embalm incense and for ghastly to smoke droppings»¹². And in zoke's tradition: «*Զօկարը միշտ ալ յօրսնց մսնսնկերի վարսն ախախտ շարսն օր խունկն ըն ծխուն*» «Zokar is always embalm incense on their deads every week» (Agulis)¹³.

In Kesab, Aramo, Svedia and other dialects to the verb *խնկարկել* [xnkarkel] (“to burn incense”) is synonym *բուրվաւ անել* [burva^l anel] (“to do censer”), *բուրվաւ գցել* [burva^l gc^el] (“to put censer”) word-combinations. Hrachya Acharyan considers synonym to this combinatins *խունկ արկանել* [xunk arkanel] (“incense doing”) word-combinatin, which is also mentiond in “New Dictionary”¹⁴.

¹¹ Malkhasyants 1944, 300.

¹² Ghanalanyan 1951, 160,

¹³ Zakaryan, 2008 149:

¹⁴ Avetikean, Syurmelean, Avgerean 1836, 984.

In folklore there are a number of phrases, sayings, riddles and proverbs with the word *խունկ* [xunk] (“incense”). In Van dialect the saying «Անզոր խաչիս՝ մա («թե») խունկ էս ծրիւտ, մա փրթիթ» [“Anzor xač'in ma xunk ēs cəxē, ma pəθ'ir”] (“It is the same to burn incense for a powerless”) which could be explained as “It is senseless to do good to a worthless person” The phrasal expression of *խոնկով - մոմով փրնտրել* [xənkov-momov pəntrel] “to look for with incense and a candle” in Polis means “to yearn much, to miss greatly”. Tigranakert dialect has the riddle «Խունկէ դուն, չսմանէ ժամ» [xungə dun, čämänə žäm] “incense house”. The same area has the saying- «Միր ժամէ մի՛քս, քու խունկիթ, մումիթ քրքի թող մընս (էղնա)» [Mir žämə mi'kə, kəu xungit, mumit kəzi t'awł mənə (ēlna)] “Keep your incense” which can be explained that “We don't need your help, stay away from us”¹⁵.

In the pastime the pot called *խնկանոց* [xnkanoc] was used to burn the incense in which had a small chainless burner with porous lid.

In regional dialect versions the word *խունկ* [xunk] (“incense”) often complets verbal combinations with the word *մոմ* [mom] (“candle”); incense and candle, *խոնկով-մոմով* [xənkov-momov]. «Ամսուրապատու սրբիս խունկ ու մոմ տանող չի ըլի» [Anmurazatu sərbin xunk u mom tanoł č'i əlni] (“There will be noone who will bring a candle and incense to the church not fulfilling dreams”) (Ashtarak). «Խոնկով-մոմով սրբա-յութուն գրնալ չի ըլի» [Xənkov-momov arkəyutəyun gənal č'i əlni] (“You can't go to the heaven with incense and candle”) (Shirak, Tiflis). «Խունկ ու մոմ էի սրբերիս, ձուք ու ծամն էրա լրբերիս» [Xunk u mom ēi sərberin, jut u camon ēla lərberin] (“I was candle and incense for churches but I became blame for bad people”) (Alashkert) [A. Ghalanyan, Armenian proverbs, page 114, 128, 180]: The ligh of burningcandle in the curch symbolizes the God, Jesus Christ.

¹⁵ Haneyan 1978, 174.

In main Armenian dialects is existent the *ւնւ* [mom] (“change”) of phonetics of the *n* [o] vowel in word candle: *n* [o] > *ն* [ō] close, *ն* [ö] palantine, *նէ* [öə], *նւ* [u] simple, *նի* [ü] palantine, *ը* [ə], *ի* [i], *էօ* [ē^w], *նէ* [uē], *նւօ* [ua^w] accordanses.

So, it's written *ւննւ* [mōm] (Qoshk, Ayntap, Erzurum, Aghavnatun and Haytax in Ejmiatsin region), *ւննւ* [möm] (Mirbar in Bulanugh, Lesk in Van), *ւննէւ* [möēm] (Bantagh in Alashket, Zolakar in Martuni), *ւ^էօւ* [mēo^wm] (Sebastia), *ւննէւ* [muēm] (Salmast), *ւնն^օւ* [muom] (Balkho and Bezhanu in Akhalkalak, tsalka), *ւիւ* [mim] (Zeytun, Khtrbek in Swedia), *ւննւ* [müm] (Zeytun, Gugha and Tsghalktbila in Akhalkhe), *ւնւ* [mum] (Tigranakert, Agulis, Akn, Goris, Yerevam, Kharabakh, Moks, Maragha, Shamakhi, Vozm, Tiflis, Zaglik, Shahumyan, Shulaver, Elar in Abovyan, Janyatagh in Martakert NKR, Madaghis, Hamshen, Unie, Baqlugh, Hardif in Qghi, Beylan, Sovylugh in Antiok and Atykh), *ւըւ* [məm] (Aslanbek) and etc.

Thus, the completed research denotes that the word *խնւնկ* [xunk] is utilized in all the Armenian dialects with various versions. The more common the implication of the religious word in the dialects the more phonetic variations it has. The word *խնւնկ* [xunk] has not numerous synonyms which as the examples denote are mainly specific to Western Armenian local versions.

Bibliography

Acharyan H. 1973 . Dictionary of Armenia Root-Words, vol. 2, Yerevan (in Arm.).

Amatuni S. 1912. The Armenian Word and Things” , Vagharshapat (in Arm.).

Archbishop Maghakia Ormanyan. 1992, Ritual Dictionary, Yerevan (in Arm.).

Avetikean G., Syurmelean Kh., Avgerean M. 1836. New Dictionary of the Armenian Language, vol. 1, Venice (in Old Arm.).

Bible, H. 1994. Etchmiadzin (in Old Arm.).

“Byurakn”(Magazine), 1900, 42, [[http://tert.nla.am/archive/ NLA%20AMSAGIR/byurakn/1900/1900\(42\).pdf](http://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/byurakn/1900/1900(42).pdf)] (in Arm.).

Ghanalanyan S. 1951, *Armenian Proverbs*, Yerevan (in Arm.).

Haneyan A., 1978. *Tigranakert Dialect*, Yerevan (in Arm.).

Malkhasyants St. 1944, *Armenian explanatory Dictionary*, Yerevan , vol. 2 (in Arm.).

Sargisean G. 1996, *Brief manual pastoral theology*, H. Etchmiadzin (in Arm.).

Zakaryan M. 2008, , *Dialect of Agulis*, Yerevan (in Arm.).

Հ. Հ. ՄԵՐՈՍՅԱՆ. Խունկ հասկացության անվանումները հայերենի բարբառներում.- *Խունկ* հասկացության անվանումները հայերենի տարածքային տարբերակներում ներկայանում են հնչյունական, բառակազմական, հոմանշային և լեզվական-արտահայտչական այլ համարժեքներով: Որպես ծիսական արարողության կարևոր բաղադրիչ՝ *խունկ*-ը՝ քրիստոնյա հանրության գործուն բառապաշարի միավոր է: Այն բարբառներում գրական փոխառություն է, ծագումով՝ ըստ Հյուբշմանի և Աճառյանի, փոխառություն իրանական լեզուներից: Նրանով կան ոչ միայն սովորական, այլև դարձվածային միավորի արժեքով կազմություններ: Ունենք *խունկ*, այլև *ւնւ* բառերով կազմված բարդություններ, բառակապակցություններ, առած-ասացվածքներ և ժողովրդական-խոսակցական բանաձևումներ:

А. О. Месропян, Названия понятия *խունկ* [xunk] “ладан” в армянских диалектах. - Наименования понятия *խունկ* [xunk] ‘ладан’ в армянских территориальных вариантах представляются фонетическими, словообразовательными, синонимично-выразительными эквивалентами. Как важный компонент ритуального обряда, понятие *խունկ* [xunk] является действующей единицей лексики христианского общества. В диалектах оно происходит из литературного языка, по Г. Гюбшману и Р. Ачаряну - иранское заимствование. Имеется ряд лексических образований не только в собственном смысле, но и как фразеологические единицы: Выделяются еще словосочетания, изречения, пословицы и поговорки, формулы народно-разговорной речи, один из компонентов которых являются как слово *խունկ* [xunk] ‘ладан’, так и *ւնւ* [tom] ‘свеча, свечка’.

ԲԱՌԱԻՄԱՍՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԸՄԲՈՒՆՈՒՄԸ
ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՍՈՒՆՔՆԵՐՈՒՄ

Բանասիր. գիտ. թեկնածու Ա. Ռ. Մարտիրոսյան

Բանայի բառեր. բառաիմաստային համակարգ, բառային իմաստաբանություն, բառի իմաստային տեղաշարժ, համատեքստ, լեզվի համակարգ, լեզվի ճանաչողական մեխանիզմ, բառի արտահայտության և բովանդակության պլան, լեզվական աշխարհայացք, իմաստային դաշտ:

Ключевые слова: *лексико-семантическая система, понятие развития лексическая семантика, лексико-семантический сдвиг, контекст, система языка, когнитивный механизм языка, план выражения и содержания слова, языковое мировоззрение, семантическое поле.*

Key words: *– system of lexical meanings, lexical semantics, transference of lexical meanings, context, language system, cognitive mechanisms in the language, the aspects of expression and content planes in the word, language mindset, semantic field.*

Լեզվի բառային կազմի իմաստային տեղաշարժերի օրինաչափությունների սահմանման խնդիրը լեզվաբանության առավել քիչ ուսումնասիրված բնագավառներից է. այդ քննությունն անհնար է իրականացնել առանց տվյալ լեզվի պատմական գոյավիճակների զանազան շերտերի՝ հասարակագիտական, մշակութաբանական, աշխարհայացքային և այլնի իմացության: Հարցի ուսումնասիրությունը հանգում է այն գաղափարին, որ բառաիմաստային տեղաշարժերի (փոփոխությունների) կանոնակարգման փորձերը սերտորեն կապվում են տվյալ ժամանակաշրջանի հանրային մտածողության՝ լայն առումով մտածական գործունեության հետ: Այս իմաստով տեղին է Վ. ֆոն Հումբոլդտի այն հայտնի միտքը, որ լեզուն ոչ միայն մտքերի արտահայտման միջոց է, այլև նրա կայացման ձև, մտքերի ձևավորման օրգան և սրանով իսկ միաժամանակ ձևավորված միտք:

Լեզվի բառային համակարգի իմաստային տեղաշարժերի խնդրին լայն առումով սկսել են անդրադառնալ միայն XIX դ. վերջերին: Այսպես, նկարագրական լեզվաբանության ամերիկյան դպրոցի հիմնադիր Լ. Բլումֆիլդը, խոսելով լեզվում գործառոդ տարբեր համակարգերի զարգացման մասին, մասնավորապես նշում է, որ «...ցանկացած տվյալ պահին լեզուն հանդես է գալիս որպես բառային և քերականական հմտությունների կայուն համակարգ», և լեզվական շարունակական փոփոխությունների դանդաղ գործընթացի «...ուղղակի վկայությունը մենք ունենում ենք այն դեպքում, երբ այս կամ այն լեզվական կոլեկտիվի մոտ պահպանվում են առավել վաղ փուլերում նրա լեզուն հավաստող գրավոր հուշարձաններ»¹: Լեզվում, տվյալ դեպքում նրա բառային կազմում ընթացող իմաստային տեղաշարժերը նա պայմանավորում է նախորդ՝ հին իմաստին նորը հավելելու կամ պակասեցնելու հանգամանքով: Իմաստափոխության գործընթացում նա հիմնականում տեսնում է երկու տիպի տեղաշարժ՝ ընդլայնում և նեղացում:

Բառիմաստի հնացումը պայմանավորվում է նրա կիրառության հաճախականության նվազմամբ²: Ըստ Բլումֆիլդի՝ իմաստափոխության նման փաստերն ուշագրավ են արտալեզվական տեսանկյունից, «...սակայն ցույց չեն տալիս, թե ինչպես ժամանակի ընթացքում կարող են փոփոխվել առանձին լեզվական ձևերի իմաստները»³:

Հարցի ուսումնասիրության պատմության շրջանակում խիստ արժեքավոր են գերմանացի նշանավոր լեզվաբան, երիտքերականների դպրոցի գաղափարաբան Հ. Պատուի տեսակետները, որոնք նա շարադրել է 1920 թ. հրատարակված «Լեզվի պատմության սկզբունքները» դասական աշխատությունում: Իմաստային փոփո-

¹St' u Блумфилд 1968, 311:

²Նույն տեղում, 477:

³Նույնտեղում, 471:

խությունների հիմքում նա սահմանագատում է բառերի ուզուալ, այսինքն՝ արտահամատեքստային, և օկագիտնալ, այսինքն՝ դիպվածային (անհատական խոսքային ակտում կոնկրետացված) իմաստները, այսինքն՝ բառերը ակտուալացվում են նախադասության մեջ. այս տեսակետն էր պաշտպանում նաև նրան հաջորդող Շ. Բալլին⁴: Պաուլը չի շոշափում կոնցեպտ տերմինը, սակայն նրա դատողություններում, այնուամենայնիվ, նկատվում են կոնցեպտի և հասկացության, կոնցեպտի և նշանակության, պատկերի և հասկացության հարաբերակցության հիմնախնդիրները: Այս առումով նա, մասնավորապես, նշում է հետևյալը. «Մարդու հոգում առկա պատկերացումների ամբողջությունը ձգտում է հնարավորինս իր արտահայտությունը գտնել տվյալ լեզվի բառապաշարում: Սակայն քանի որ տվյալ լեզվական հանրույթի յուրաքանչյուր անդամ ունի պատկերացումների իր շրջանակը, որը խիստ տարբերվում է մյուսներից և շարունակ ենթարկվում է փոփոխությունների, ապա բառերին առնչակից պատկերացումներում անվերապահորեն հայտնաբերվում են բազում անհատական յուրահատկություններ, որոնք սովորաբար երբեք հաշվի չեն առնվում՝ բառերի և բառակապակցությունների նշանակությունը բնորոշելիս (օրինակ՝ *ձի, շուն*)»⁵: Նա փորձում է նկարագրել փոխաբերացման (метафоризация) ճանաչողական՝ կոգնիտիվ մեխանիզմը, իմաստափոխության գործընթացում դիտարկում է առարկայական մի ոլորտը մյուսին նմանեցնելու (уподобление) հիմքերը՝ մաս - ամբողջ, գործառական անցում, տարածական փոխանցում (ориентационная метафора), ժամանակային և պատճառական հիմքով կապված փոխաբերություններ և այլն⁶: Պաուլը հատկապես կարևորում է փոխաբերության լեզվում աշխարհի պատկերի արտացոլման հիմնախնդիրը, խոսքի ուսումնա-

⁴ Балли 2003.

⁵ Стéу Пауль 1960, 126 (Prinzipien der Sprachgeschichte, 1880):

⁶ Նույն տեղում, 114-120:

սիրման պարագայում հոգեբանական գործընթացների անտեսումը, սակայն սրա հետ մեկտեղ չի նույնականացնում տրամաբանության, հոգեկերտվածքի, լեզվի կարգերը. հոգեբանականը չպետք է խառնել քերականականի հետ⁷:

Ուշագրավ են նաև 19-րդ դարի նշանավոր լեզվաբան Ն. Կրուշնսկու դիտարկումները լեզուներում ընթացող պատմական փոփոխությունների մասին: Նա ոչ միայն նրբորեն նկարագրել է լեզվական համակարգի ձևաբանական տարրերի գործառությունն ու կապը, այլև վեր է հանել բառերի քերականական դասակարգման իմաստաբանական հիմքերը: Լեզվի զարգացման հիմնական օրենքը նա համարում է «...բառերի աշխարհի համապատասխանությունը մտքերի և իրերի աշխարհին»⁸ եզրակացնելով, որ բառերի ընդհանուր տիպերը պետք է համաձայնեցվեն նրանց կողմից նշանակվող իրերի և հասկացությունների համակարգերի հետ⁹: «Առարկաներ, նրանց որակը, գործողությունը կամ վիճակը և այլն նշանակող բառերը միմյանցից տարբերվում են ոչ միայն իրենց բովանդակությամբ, այլև արտաքուստ, իրենց կառուցվածքով և, հայտնապես, իրենց հնչյուններով»¹⁰, որ «...առավել նշանակալի» և առավել «հավաք» «սերտ համակարգերը» նկարագրվում են դեռ հնագույն ժամանակներից հոլովման և խոնարհման համակարգեր անվան ներքո»¹¹, իսկ «...քերականության այս երկու համակարգերին հաճախ հավելում են երրորդը՝ ածականների փոփոխություններն ըստ աստիճանների (motio) սակայն սա չի նշանակում, թե մյուս համակարգերը նվազ կարևոր են միայն նրա համար, որ դրանք չեն ճանաչվում որպես քերականության համակարգեր և այն ամենը, ինչ քերականություններում հայտնի է բառաստեղծում ընդհանուր

⁷ Նույն տեղում, 57:

⁸ Ст' u Крyшевский 1883, 67-69:

⁹ Նույն տեղում, 108-109:

¹⁰ Նույն տեղում, 68:

¹¹ Նույն տեղում, 109, 120:

անվամբ, ներկայանում է բազում համակարգերով»¹²: Փաստորեն, Կրուշնսկին չի ընդունում «բառափոխության ձևեր» և «բառակազմության ձևեր» հասկացությունների նույնացումը՝ պաշտպանելով բառերի իմաստային-քերականական դասակարգման կառուցվածքային ամբողջականությունը: Նա առաջարկում է դասակարգման իր սկզբունքը՝ բոլոր բառերը տարբերակելով ըստ նշանակալիության և ոչ նշանակալիության: Այսպես, նշանակալիներում նա դնում է անունը և բայը, իսկ ոչ նշանակալիների խմբում՝ սպասարկու բառերը կամ տարբեր աստիճանի մասնիկները. առաջին աստիճանում, օրինակ, մակբայները, որոնցում նշանակալիության բաղադրիչը դեռևս շատ գորեղ է, իսկ երկրորդում՝ նախդիրները ... և այսպես՝ մինչև մասնիկները, ինչպես ռուսերենի 70-ն, որը գուրկ է ամենայն նշանակալիությունից և ինքնուրույնությունից:

Լեզվի՝ որպես հասարակական երևույթի առավել համակողմանի ուսումնասիրության XIX դ. մեծանուն ներկայացուցիչներից էր նաև Վ. Ֆոն Հումբոլդտը: Նա գտնում էր, որ լեզվի միջոցով կարելի է բացահայտել աշխարհի ողջ բազմազանությունը: Պատմահամեմատական լեզվաբանության հիմնախնդիրը նա ձևակերպել էր այսպես. «Գլխավորն այստեղ... լեզվի, նրա ծագման խորքերի և կիրառության ոլորտների տարածվածության նկատմամբ ճշմարիտ և արժանահավատ հայացքն է», որը ենթադրում էր ուսումնասիրել լեզվի գործառությունը «...նրա ողջ ծավալով. ոչ միայն խոսքի նկատմամբ նրա հարաբերության..., այլև նրա հարաբերությունը մտածական գործունեության և զգայական ընկալման նկատմամբ»¹³:

Անդրադառնալով լեզվի ծագումնաբանությանը՝ Հումբոլդտը վերլուծության է ենթարկում երկու հնարավոր վարկած: Այն փաստը, որ լեզուն ունի բարդ կառուցվածք, կարող է մի դեպքում հան-

¹²Նույն տեղում:

¹³ Ст' у Гумбольдт 2000, 75:

գեցնել այն թվացյալ գաղափարին, թե իբր այն արդյունք է ժամանակի ընթացքում պարզ կառուցվածքների աստիճանական բարդացման կամ այն ստեղծողների «վիթխարի մտածական ջանքերի» պտուղ է: Հումբոլդտը երկուսն էլ հերքում է՝ նշելով. «Որքան էլ բնական թվա լեզուների աստիճանական ձևավորումը, նրանք կարող էին առաջանալ միայն անմիջապես» և «...որպեսզի մարդը կարողանար հասու լինել գոնե մեկ բառի..., ողջ լեզուն ամբողջությամբ՝ իր բոլոր փոխկապակցություններով, արդեն պիտի դրված լիներ նրա ներսում»¹⁴: Այս դրույթով, փաստորեն, նա լեզուն դիտարկում է որպես կառուցվածքային մեկ ամբողջություն՝ առաջին անգամ առաջ քաշելով *լեզվի ներքին ձև* հասկացությունը՝ նշելով, որ անգամ նվազագույն լեզվական տարրը չի կարող առաջանալ առանց լեզվի բոլոր մասերը թափանցող ձևի միասնական սկզբունքի առկայության. «...մասնավորությունները պետք է ներառվեն լեզուների ձև հասկացության մեջ ոչ որպես մեկուսացված փաստեր, այլ միշտ. միայն այնքանով, որքանով նրանցում քողարկվում է լեզվի ձևավորման միասնական սկզբունքը»¹⁵:

Իր զեկուցումներից մեկում խոսելով բասկերի լեզվի մասին՝ Հումբոլդտը առաջ է քաշում կարևոր, մինչ օրս անհերքելի մի դրույթ. լեզուների բազմազանությունը պայմանավորված է ոչ թե միևնույն առարկային տարբեր հնչյունական ձևավորումներ (անվանումներ) տալու հանգամանքով, այլ այն «տարբեր կերպ տեսնելու ունակությամբ», լեզվական աշխարհայացքով կամ աշխարհընկալմամբ:

Լեզուն դիտարկելով որպես նշանային համակարգ՝ նրա հիմնական գործառույթը նա համարում է աշխարհաճանաչումը: Այս համատեքստում միաժամանակ նա մերժում է այն գաղափարը, որ լեզուն զուտ գործիք է աշխարհը ճանաչելու՝ նշելով. «Բառը, իրոք,

¹⁴ Նույն տեղում, 313-, 314:

¹⁵ Նույն տեղում, 73:

նշան է մինչև այն աստիճան, քանի դեռ այն գործածվում է առարկայի կամ հասկացության փոխարեն: Սակայն հորինվածքի և ներգործության տեսակետից այն առանձնահատուկ և ինքնուրույն էություն է, անհատականություն՝ բոլոր բառերի հանրագումար. լեզուն աշխարհ է՝ ընկած արտաքին երևույթների աշխարհի և մարդու ներաշխարհի միջև»¹⁶: Ըստ Հումբոլդտի՝ լեզվում ընդգրկվում են առավելապես այն օբյեկտները, որոնք կազմում են մարդու պահանջմունքների և հետաքրքրությունների շրջանակը և արտացոլում են ոչ այնքան զուտ արտալեզվական աշխարհի սուբստանցիոնալ հատկանիշները, այլ, ավելի շուտ, մարդու վերաբերմունքը նրան կատմամբ: Տարբեր լեզուներում այդ հարաբերությունները դրսևորվում են յուրաքանչյուր լեզվին բնորոշ իմաստային մասնատման միջոցով, այսինքն՝ հնչարտաբերումը միավորվում է ոչ թե անմիջականորեն առարկայի հետ, այլ իմաստայնորեն մշակված միավորների միջոցով, որոնք արդեն որպես բովանդակային կազմավորումներ կարող են հիմք հանդիսանալ հենց նշանակման ակտի և խոսքային հաղորդակցության համար:

Բառի ներքին ձևի՝ բովանդակության և մտածողության փոխհարաբերության խնդիրներին է անդրադարձել նաև Ա. Պոտեբնյան՝ Ռուսաստանում 19-րդ դ. 2-րդ կեսի լեզվաբանության առաջին խոշոր տեսաբանը, իր հայտնի «Միտք և լեզու» հիմնարար աշխատությունում (1862 թ.): Շարունակելով Հումբոլդտին՝ նա զարգացրեց վերջինիս կողմից առաջ քաշված բառի ներքին ձևի և նյութի օրգանական կապի գաղափարը՝ մասնավորապես նշելով. «Բառի ներքին ձևը մտքի բովանդակության հարաբերությունն է գիտակցությանը. այն ցույց է տալիս, թե ինչպես է պատկերվում մարդուն իր սեփական միտքը: Միայն սրանով կարելի է բացատրել, թե ինչու միևնույն լեզվում կարող են լինել միևնույն առարկան նշանակող շատ բառեր, և հակառակը, մեկ բառը, լիովին համաձայն լեզվի

¹⁶Նույն տեղում, 304:

պահանջներին, կարող է նշանակել տարասեռ առարկաներ»¹⁷: Նա գտնում է, որ բառի ներքին ձևը լեզվակիրների կողմից գիտակցվող նրա մերձավոր ստուգաբանական իմաստն է, որի շնորհիվ բառը փոխաբերության միջոցով կարող է ձեռք բերել նոր իմաստներ: Պոտենցիան առաջարկում էր հստակ տարբերակել բառի արտաքին՝ հնչունական կողմը ներքինից՝ այդպիսով հիմք դնելով բառի արտահայտության և բովանդակության պլաններ նախագաղափարին:

Խորհրդային շրջանում ռուս լեզվաբանական միտքը, յուրացնելով հարցի առնչությամբ նախորդների գաղափարները, մի նոր աստիճանի բարձրացրեց լեզվի բառաիմաստային համակարգի զարգացման տարժամանակյա ուսումնասիրության հիմնահարցերը՝ փորձելով կանոնակարգել դրանք: Այս առումով հիմնարար են ռուս անվանի լեզվաբան Վ. Վինոգրադովի ուսումնասիրությունները, մասնավորապես նրա «Բառի պատմությունը» մեծադիր աշխատությունը¹⁸: Այստեղ ուշագրավ են նրա դիտարկումները պատմական իմաստաբանության նպատակների ու խնդիրների շուրջ: Խոսելով XVII-XIX դդ. ռուսաց գրական լեզվի բառապաշարի մասին՝ նա առաջադրում է լեզվի բառային կազմի պատմական իմաստաբանության ուսումնասիրության առարկայի, նրա շրջանակների մի շարք արժեքավոր դրույթներ, մասնավորապես. «...առանձին բառերի իմաստների պատմության ուսումնասիրությունը տակավին պատմական իմաստաբանություն չէ...հարկ է բառերի իմաստային պատմությունը կապել գրական լեզվի բառակազմության պատմական իրողությունների և...ձևաբանական փոփոխությունների պատմության հետ... այն իմաստային շարքերի պատմության հետ, որոնցում ընդգրկված է կամ որոնց հետ առնչակցվում է այդ բառը իր կրած իմաստային փոփոխությունների ընթացքում...»¹⁹:

¹⁷ Ст'ю Потебня 1999, 91:

¹⁸ Ст'ю Виноградов 1994:

¹⁹ Նույն տեղում, 24:

Ինչպես տեսնում ենք, լեզվի բառապաշարի պատմական զարգացման հարցի խոր քննությունը Վինոգրադովը տեսնում է ավելի լայն շրջանակում: Խնդրի բարդությունն այն է, որ լեզուն, սովյալ դեպքում նրա բառային կազմը՝ միավորված ձևաբանական-իմաստային շարքերում, տարբեր գոյավիճակներում ձևավորում են բարդ հարաբերակցություններ, որոնք լեզվի բառաիմաստային համակարգում փոխկապակցված են և փոխալայնանավորված:

Ռուսաց լեզվի զարգացման պատմության այս կամ այն փուլի բառային համակարգերը հետազոտված չեն, մատնանշված չեն դրանցում կատարվող տեղաշարժերի այն օրինաչափությունները, որոնցով կառավարվում են ռուսաց գրական լեզվի իմաստները. Վինոգրադովի կարծիքով դրանք տակավին բացահայտված չեն: Ինչ վերաբերում է առանձին բառերի իմաստային տեղաշարժերի ուսումնասիրությանը, ապա այն չի կարող ամբողջապես ներառել սովյալ լեզվի զարգացման պատմության ընթացքում առկա բոլոր կենդանի դրսևորումները, որովհետև «...բառերը շարժվում և փոխվում են ամբողջ լեզվի հետ...»²⁰:

Մեր քննության շրջանակներում ուշագրավ են Լ. Շչերբայի դիտարկումները²¹: Լեզվի զարգացման ներքին մեխանիզմների մասին խոսելիս նա, մասնավորապես, նշում է, որ ինքը «...լեզուն պատկերացնում է ոչ թե շարունակ առավել կամ պակաս կայուն, այլ համակողմանի անկայուն հավասարակշռության վիճակում հաճախ միմյանց հակասող մի շարք գործոնների ազդեցության հետևանք»²²: Լեզվի աստիճանական զարգացման ընթացքում նա կարևորում է հատկապես նրա հնչյունական օրենքների փոփոխելիությունը բառապաշարի տարբեր շերտերում:

²⁰ Նույն տեղում, 26, 27:

²¹ Шчерба 1945, 173-186:

²² Նույն տեղում, 180:

Որպես համեմատություն նա բերում է *керосин* բառը, որը որպես հասարակաբանություն հնչում է *карасин*, նույն համաբանությամբ՝ *Пелагея - Палашка* անձնանունը: Սրանով նա կարևորում է տարբեր լեզուների կառուցվածքի համեմատական հետազոտությունը (այդ թվում՝ հնչյունական կառուցվածքի), որը վիթխարի նշանակություն կարող է ունենալ տվյալ լեզվի աստիճանական զարգացման ներքին մեխանիզմների բացահայտման համար: Շչերբան տարբերակում է բառակազմության իմաստային միջոցը, այսինքն՝ բառերի կիրառությունները նոր իմաստով, սակայն բառակազմական տեսակետից ածանցյալներ չի համարում, օր.՝ *труба* և *трубач* բառերը, որոնք չի կարելի դիտարկել իբրև նույնահիմք բառեր, որովհետև նրանք մատնանշում են տարբեր առարկաներ՝ ի տարբերություն *трубка* և *трубочка* բառերի, որոնք նույնահիմք են, ուստի բառարանային գրանցում պետք է ունենան նաև նվազական-փաղաքշական ածանցներով բառերը²³:

Ինչպես տեսնում ենք թե՛ Շչերբան՝ անուղղակիորեն և թե՛ նրա աշակերտ Վ. Վինոգրադովը՝ ուղղակիորեն առաջ են քաշում այն գաղափարը, որ լեզվի բոլոր համակարգերը (հնչյունական, բառային, քերականական և այլն) պետք է դիտարկվեն իրենց զարգացման պատմական հաջորդականության մեջ, միմյանցով պայմանավորված փոփոխությունների տիրույթում:

Բառային իմաստաբանության ոլորտում ծանրակշիռ են XX դ. 2-րդ կեսի ռուս լեզվաբանական դպրոցի հայազգի ներկայացուցիչ Յու. Ապրեսյանի ուսումնասիրությունները²⁴:

Բառագիտությանը նվիրված իր հիմնարար աշխատություններից մեկում²⁵ նա հանգամանալի վերլուծության է ենթարկում XIX դ. համաշխարհային լեզվաբանության լավագույն ներկայացուցիչներ

²³ Նույն տեղում, էջ 182-183:

²⁴ Апресян 1967: Апресян 1974: Апресян 1980: Апресян, 2009:

²⁵ Апресян 1995:

րի դրույթները տեսական իմաստաբանության բնագավառում: Նա գտնում է, որ «...բառագիտությունն առաջին հերթին պետք է պատասխանի՝ ինչ են նշանակում բառերը հարցին...», իսկ «...նախորդ դարաշրջանի տեսական իմաստաբանությունը գրեթե բացառապես զբաղվել է այն հարցի պատասխանով, թե ինչպես են բառերը նշանակում»²⁶: Նկատի ունի բառիմաստի զարգացման միջոցների ուսմունքը՝ նեղացում և ընդլայնում, տարբերակում և չեզոքացում, փոխաբերություն և փոխանունություն և այլն:

Բառիմաստի զարգացման նախորդ ուսմունքներում առկա են նաև ավելի նուրբ դիտարկումներ՝ «...բառիմաստի տարածական նշանակություններից դեպի ժամանակային անցումներ, բայց ոչ հակառակը, nomina anatomica-ից (անատոմիական անուններից - Ա.Մ.) դեպի ֆիզիկական առարկաների անուններ, բայց ոչ հակառակը, շոշափելիքի, հոտառության և համի միջոցով ընկալվող հատկանիշների անուններից դեպի տեսողությամբ և լսողությամբ ընկալվողները և հակառակը...»²⁷:

Ըստ Ապրեսյանի՝ սա է պատճառը, որ տևական ժամանակ իմաստաբանությունը և բառագիտությունը զարգացել են միմյանցից անկախ: Նշված հետազոտության մեջ նա հանգամանալի վերլուծության է ենթարկում իմաստաբանության, բառագիտության, փիլիսոփայության նախորդ շրջաններում գերակայող ուսմունքները՝ եզրակացնելով, որ «...վերաիմաստավորման կանոնների կիրառության հնարավորությունները սահմանափակվում են մեկ ընդհանուր օրենքով: Այն ձևակերպելու համար ըստ նշույթավորման աստիճանի, հարկավոր է կանոնակարգել երկու կարգի օբյեկտներ՝ համատեքստեր, որոնցում գործածություն է ստանում բանալի բառը, և հոմանիշային միջոցներ, որոնցով այն կարող է սկզբունքո-

²⁶ Տե՛ս նույն տեղում, 6:

²⁷ Նույն տեղում:

րեն փոխարինվել»²⁸: Ասվածից հետևում է, որ Ապրեսյանը բառի-մաստի զարգացումը, այն է՝ իմաստային տեղաշարժերը դիտարկում է բառի բառարանային գրանցումից դուրս՝ համատեքստում՝ քերականական իմաստների գործուն ընդգրկմամբ, ժամանակային առանցքում ձևավորված հոմանիշային շարքերի ածանցյալներում:

Իմաստաբանության հիմնախնդիրներին նմանօրինակ խորությամբ է մոտեցել նաև Գ. Ջահուկյանը իր՝ «Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն» հիմնարար աշխատությունում²⁹: Համառոտ քննելով առկա իմաստաբանական ուսմունքները (Գ. Ֆրեզե, Բ. Ռասել, Լ. Վիտզենշտայն, Ն. Խոմսկի, Ջ. Կաց, Ջ.Ֆոդոր և այլն)՝ նա եզրակացնում է, որ դեռևս տարորոշված չէ «...իմաստային բաղադրիչների և իմաստային տարրական հատկանիշների այն կոնկրետ շրջանակը, որ հնարավորություն կտա ընդգրկելու լեզվական բոլոր կարգի միավորները..., իմաստային նվազագույն տարրի՝ սեմայի (իմակի) բնույթի և սեմեմայի (իմույթի) հետ նրա ունեցած փոխհարաբերության...» հարցը, որ «...ներանք (առկա ուսմունքները – Ա.Մ.) փորձում են լեզվականը լուծել լեզվականով...մինչդեռ լեզուն ստեղծված է արտալեզվական աշխարհի առարկաները, երևույթներն ու հարաբերությունները արտահայտելու համար...»³⁰: Ջահուկյանը դիտարկում է լեզվական հարցերի քննության երկու եղանակ՝ հետևյալ գերակա հաջորդականությամբ՝ հաղորդակցական ակտից (իմա՝ խոսքից) դեպի լեզվական երևույթների էության մեկնաբանություն կամ «...ընդհանուր գոյաբանական ու իմացաբանական հարցերից և, լեզվական հարցերը դիտելով որպես այդ հարցերի մի ածանցյալը, փորձել բացատրել վերջիններս առաջինների միջոցով...»³¹:

²⁸ Նույն տեղում, 344:

²⁹ Ջահուկյան 1989:

³⁰ Տե՛ս Ջահուկյան 1989, 12-13:

³¹ Նույն տեղում:

Հեղինակի համար ընդունելի է լեզվական հարցերի քննության երկրորդ տարբերակը՝ քննության առարկա դարձնելով հայերենի արմատների արտահայտության և բովանդակության պլանների առանձնահատկությունները, կատարելով արմատների իմաստային վերլուծություն՝ ըստ իր մշակած համընդհանուր լեզվաբանական կադապարի:

Որպես ամփոփում նշենք, որ մենք փորձեցինք խիստ համառոտակի ներկայացնել բառի, նրա իմաստային համակարգի զարգացմանն առնչվող XIX-XX դդ. լեզվաբանության մեջ գործառող տեսական որոշ ուղղություններ, որոնք ավելի կամ պակաս համոզիչ լինելով՝ վերջիվերջո հանգեցնում են այն գաղափարին, որ ոչ միայն համատեքստն է ձևավորում բառը, այլև բառն իր իմաստային դաշտով ձևավորում է համատեքստ (տեքստ, դիսկուրս):

Գրականություն

Ջահուկյան Գ. Բ. 1989, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Ե.:

Апресян Ю. Д. 1967, Экспериментальное исследование семантики русского глагола. М., «Наука».

Апресян Ю. Д. 1974, Лексическая семантика (синонимические средства языка). М.

Апресян Ю. Д. 1980, 37 Типы информации для поверхностно-семантического компонента модели «Смысл ↔ Текст» // «Wiener Slawistischer Almanach», Wien.

Апресян Ю. Д. 1995, , Избранные труды, т. 1. Лексическая семантика. Синонимические средства языка (2-ое изд., исправленное и дополненное), М.

Апресян Ю. Д. 2009, Исследования по семантике и лексикографии. Т. I: Парадигматика. М.

Балли Ш. 2003, Язык и жизнь, М.

Блумфилд Л. 1968. Язык, М.

Виноградов В. В. 1994, История слова (отв. редактор Н. Ю. Шведова), М., «Толк».

Гумбольдт В. фон. 2000. Избранные труды по языкознанию, М.

Крушевский Н. В. 1883, Очерк науки о языке // “Изв. и учен. зап. Имп. Казан. ун-та, Казань, т. XIX, январь-апрель”.

Пауль Г. 1960, Принципы истории языка, М. (Prinzipien der Sprachgeschichte, 1880):

Потебня А. А. 1999, Собрание трудов: Мысль и язык, М.,

Щерба Л. В. 1945, Очередные проблемы языкознания // “Известия Академии Наук Союза ССР” , т. IV, вып.5, М.

А. Мартирвсян. Понятие развития семасиологической системы в лингвистических учениях. - В статье рассмотрены некоторые теоретические положения, функционирующие в армянской и мировой лингвистике XIX-XX вв., на основе которых были сделаны попытки выявить закономерности развития лексико-семантической системы языка.

A.Martirosyan. On the development of the system of lexical meaning in Studies of Linguistics.- The article refers to some specific theoretical insights on the regularities of the development of the system of lexical meanings – stated by linguists in Armenia and the world in the 19th and 20th centuries.

ՇԱՐԱՀՅՈՒՍԱԳԻՏԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ

Բանասիր. գիտ. թեկնածու Լ. Գ. Թեյյան

Բանայի բաներ. շարահյուսական կառուցվածք, շարահյուսագիտություն, նախադասություն, ստորոգում, միակազմ նախադասություն, բարդ նախադասություն, տերմինային իմաստ:

Ключевые слова: синтаксическая структура, синтаксическая наука, предложение, предикация, односоставное предложение, сложное предложение, терминологическое значение.

Key words: Syntactic structur, syntactic science, sentence, predicastion, mononuclear sentence, composite sentence. terminological meaning.

Ժամանակակից հայերենի շարահյուսական կառուցվածքի ուսումնասիրությունը, հատկապես Մ. Աբեղյանի շարահյուսագիտական ժառանգության հրապարակ գալուն հաջորդած՝ մինչև մեր օրերը հասնող շրջանում, ներկայանում է բավականին հարուստ գիտական ավանդույթի տեսքով: Ստեղծված բազմաբնույթ գրականությունը՝ դասագրքեր, ձեռնարկներ, մենագրություններ, հոդվածներ և այլն, նվիրված են ինչպես հայերենի շարահյուսության համակարգված քննության, նորմավորման, ուսուցման մեթոդական խնդիրներին, այնպես էլ շարահյուսական առանձին միավորների գնահատման, շարահյուսագիտական տեսական հարցերի, հաճախ էլ տարատեսակ մեկնաբանությունների, բանավեճերի առիթ տվող իրողությունների լուսաբանմանը:

Այսօր շրջանառվող շարահյուսագիտական գրականության, մասնավորապես բուհական համակարգում գործառող դասագրքերի ու ձեռնարկների, ինչպես նաև գիտական պարբերականներում հրատարակված նյութերի դիտարկումն ու համադրումը երևան են հանում այս կարգի որոշակի տարրմբոնումներ, նույն քերականական իրողության ոչ միանշանակ մեկնաբանություններ, որոնք երբեմն շարահյուսության առանցքային հիմնախնդիրներ են շոշափում, հաճախ էլ

առնչվում են մասնավոր, նախադասության վերլուծության հետ կապված և այլ կարգի խնդիրների: Մենք նպատակ չունենք այստեղ դրանց քննական վերլուծությունը ներկայացնելու. մեր մի քանի դիտարկումները, կարելի է ասել, առավելապես տերմինաբանական ուղղվածություն ունեն. կփորձենք մեր նկատառումները ներկայացնել որոշ շարահյուսական միավորների ու երևույթների տերմինավորման, տերմինների ոչ հետևողական կիրառությունների, տերմինների բովանդակության ոչ միանշանակ ընկալումների առնչությամբ:

1.Նախադասություն. ստորոգում: Շարահյուսության հիմնական միավորի սահմանման խնդիրը միանշանակ լուծում չի ստացել լեզվաբանության մեջ, հայերենագիտության մեջ նույնպես նախադասություն տերմինով անվանվող միավորը ոչ միասնական, երբեմն տարամիտվող ընկալումների առիթ է տվել: Մանրամասների մեջ չխորանալով՝ նշենք, որ մեր քերականություններում նախադասության՝ որպես շարահյուսական միավորի, և ստորոգում հասկացության պատկերացումները սերտորեն փոխկապակցված են, և այս երկու տերմինների բովանդակային ընդգրկման սահմանները բնականորեն պայմանավորված են մեկը մյուսով:

Ստորոգում տերմինը, ինչպես հայտնի է, կապվում է Մ. Աբեղյանի անվան հետ. այն սահմանվում է որպես հատկանիշի վերագրումն առարկային և նշվում է, որ «Ստորոգումն արտահայտվում է մի առանձին խմբի կամ տեսակի բառերով, որոնք կոչվում են բայ: Խոսք կազմում են միայն բայերը»¹: (Աբեղյանի համակարգում «խոսք» նշանակում է «նախադասություն», իսկ «բայ»՝ «բայի դիմավոր ձև»):

Հետագա քերականների կողմից նախադասությունը սահմանվում է որպես ստորոգում ունեցող (կամ էլ «ամփոփ միտք արտահայտող», որ խորքային մակարդակում նույն նշանակությունն ունի) միավոր: Բնական է, որ ստորոգում հասկացության ու տերմինի արեղյանական մեկնաբանության դեպքում առկախ են մնում դի-

¹ Աբեղյան 1965, 361:

մավոր բայ չպարունակող հաղորդակցային միավորների (Աշուն: Կանգնե՛լ:) գնահատման ու անվանման հարցերը. նախադասությու՞ն են սրանք, թե՞ ոչ (կամ՝ ստորոգում ունե՞ն արդյոք դիմավոր բայով կազմված այն միավորները, որոնք գուրկ են ենթակայից (Մթնեց: Ցրտում է:). այս դեպքում ինչի՞ն կամ ու՞մ է վերագրվում դիմավոր բայով արտահայտված հատկանիշը): Այս հարցերը հետագա քերականություններում երկակի լուծում են ստանում:

Ա. Ձևավորվում և ապա լայն տարածում է ստանում այն մոտեցումը, ըստ որի նշված կարգի՝ դիմավոր բայ չպարունակող հաղորդակցային միավորները նույնպես նախադասություններ են: Ստորոգման հատկանիշն էլ որոշ իմաստով հարմարեցվում է սրանց. ընդունվում է, որ այս կարգի նախադասություններին հատուկ է այսպես կոչված հնչերանգային ստորոգում, և այսպիսով հնչերանգի դերը նախադասության մեջ հավասարեցվում է դիմավոր բայի դերին:

բ. Ըստ այս տեսակետի, որ մեզանում առաջ է քաշել և հիմնավորել ակադ. Է. Աղայանը, նախադասություն են համարվում և այդ տերմինով կոչվում են միայն բառիս արեղյանական ըմբռնմամբ ստորոգում ունեցող, այսինքն միայն դիմավոր բայով ձևավորվող հաղորդակցային միավորները: Ստորոգումից գուրկ միավորները, որոնք բավականին գործածական են հայերեն խոսքում (քերականությունների մեջ միակազմ անդեմ անվանական, անդեմ բայական և բառ-նախադասություն կոչվածները) Աղայանի կողմից անվանվում են ասություն տերմինով: Աղայանը քննադատում է հնչերանգին ստորոգման գործառույթ վերագրող լեզվաբաններին. այլ լեզուներում հնչերանգը (նաև շարադասությունը) կարող են ստանձնել այդ դերը, հայերենում ստորոգում արտահայտելու «մենաշնորհը» պատկանում է դիմավոր բային²:

Այն, որ Է. Աղայանը խիստ սկզբունքային մոտեցում ունի լեզվական միավորների, կոնկրետ դեպքում՝ նախադասության ոչ միայն գնահատման, այլև դրանց տարբերակների ստույգ տերմինավորման

² Աղայան 1987, 1, 121-135:

հարցերին, երևում է նրա մի այլ հոդվածից, որը բանավիճային բնույթ ունի: Բանն այն է, որ մեր շարահյուսագետներից Ռ. Իշխանյանը փորձել է զարգացնել Մ. Աբեղյանի «բայակենտրոն» ուսմունքը՝ առաջարկելով նախադասության՝ որպես շարահյուսական միավորի նոր մեկնաբանություն: Ըստ այսմ, նախադասությունն ունի միայն մեկ գլխավոր անդամ՝ դիմավոր բայը, ենթական նրա լրացումներից մեկն է, և, որպես հետևանք, ավելորդ են դառնում ստորոգման հատկանիշը, ստորոգյալը. բոլոր նախադասությունները, բնականաբար, համարվում են միակազմ, սակայն դրանց բոլոր դրսևորումների համար Ռ. Իշխանյանը պահում է նախադասություն տերմինը՝ անվանման հարցը համարելով ոչ սկզբունքային: «Որոշ լեզվաբաններ, - գրում է նա, - առաջարկում են անդեմներին նախադասություն անունը չտալ: Մազուտ անվանման հարց է: Եթե չեն ուզում, թող չտան, բայց փաստ է, որ անդեմ (կամ առանց դիմավոր բայ) հաղորդակցական միավորներ հայերենում կան, թեև համեմատաբար քիչ. մենք հարմար ենք համարում դրանց ևս տալ նախադասություն անունը՝ անդեմ մականունով»:³ Է. Աղայանը բավականին կտրուկ է արձագանքում այս դատողությանը. «Նա (Ռ. Իշխանյանը- Լ. Թ.) ուզում է այդ կարգի ասությունները նախադասություն անվանել և անվանում է, որովհետև, ինչպես երևում է նրա գրածից, անվանման համար լոկ ցանկություն է հարկավոր, իսկ թե անվանումը արտահայտում է հասկացություն, և այդ հասկացությունն էլ համապատասխանում է օբյեկտիվ իրականությանը,- դա նրա համար ոչ մի նշանակություն չունի»:⁴

Բանավեճի բուն առարկայի էությունն այստեղ մեր խնդիրը չէ անշուշտ, ուստի վերադառնանք մեզ հետաքրքրող հասկացությունների ու տերմինների հարաբերության հարցերին:

Ստորոգում հասկացության՝ լեզվաբանական գրականության մեջ ընդունված լայն մեկնաբանությունը մեր շարահյուսագի-

³ Իշխանյան 1988, 1, 47:

⁴ Աղայան 1988, 1, 67:

տության մեջ շրջանառվում է համեմատաբար ուշ շրջանում: Դասագրքերում ու ձեռնարկներում հաճախ է վկայաբերվում ստորոգման այդ սահմանումը, որը համապատասխանաբար պիտի նոր բովանդակություն հաղորդի նաև նախադասություն հասկացությանն ու տերմինին: Հ. Պետրոսյանի «Հայերենագիտական բառարանում» ստորոգումը արդեն սահմանվում է որպես «շարահյուսական կարգ, որով նախադասության բովանդակությունը վերագրվում, հատկացվում է իրականությանը և որը, դրանով իսկ, ընկած է նախադասության կազմավորման հիմքում՝ նրան դարձնելով հաղորդակցական արժեք ունեցող միավոր (կառույց).... Առաջ տարածված էր այն կարծիքը, որ ստորոգումը հատկանիշի վերագրումն է ենթակային»:⁵

Ստորոգման դասական (աբեդյանական) ըմբռումից էապես տարբերվող ժամանակակից մեկնաբանությունների շարքում⁶, մեր կարծիքով, և՛ տեսական, և՛ մեթոդական առումներով առանձնանում է ակադ. Գ. Ջահուկյանի «Ստորոգումը և նրա արտահայտության միջոցները» հոդվածը: Ըստ Ջահուկյանի՝ ստորոգումը քերականական (շարահյուսական) կարգ է՝ բովանդակության պլանի երեք հակադրվող եզրերով («ընկալական կամ կրական», «վերագրական» և «եղելական»), որոնք արտահայտության պլանում դրսևորվում են համապատասխանաբար հնչերանգով (Երևան: Չկրակե՛լ:), է հական բայով (Խավար է: Մարդը մահկանացու է:) և բայական վերջավորություններով (Մթնեց: Հակոբը սովորում է: Մարդը քնեց:)⁷: Այս մոտեցումով արդի հայերենում գործառող հաղորդակցային բոլոր կարգի միավորները, այսինքն՝ երկկազմ, միակազմ, դիմավոր և անդեմ կոչվող նախադասությունները, ներկայացվում են որպես ստորոգման կարգով օժտված, ընդամին հնչերանգը ներկայացվում է ոչ թե որպես ստորոգում արտահայտող ինքնակա միջոց, այլ որպես տվյալ քերականական

⁵ Պետրոսյան 1987, 549:

⁶ Տե՛ս, օրինակ, Աթայան 1981: Գյուլգատյան 2016 և այլն:

⁷ Տե՛ս .Ջահուկյան 1985:

կարգի արտահայտության պլանի եզրերից մեկը («ընկալական կամ կրական» անվանվող):

Ինչպես արդեն նշեցինք, նախադասության ըմբռնման քննական վերլուծությունը չէ այստեղ մեր խնդիրը, մեզ թվում է, սակայն, որ շարահյուսության այս առանցքային հարցերը քննելիս շատ կարևոր է տեսական հստակ դիրքորոշում որդեգրել մասնավորապես նախադասություն, ստորոգում տերմինների ընկալման և կիրառման հարցում: Եթե մենք սկզբունքորեն հետևում ենք ստորոգման ավանդական ըմբռնմանը, ապա հետևողական լինելու համար, կարծում ենք, պետք է ընդունենք Է. Ադայանի տեսակետը և նախադասություն տերմինը հատկացնենք միայն դիմավոր բայով միավորներին, իսկ եթե հաղորդակցային բոլոր կարգի միավորներին նախադասություն անունն ենք տալիս, ապա բնական կլինի, հետևելով Գ. Ջահուկյանի տեսակետին, դրանց բոլորին էլ վերագրել ստորոգման հատկանիշ (մանավանդ որ ստորոգման «լայն» և «նեղ» ըմբռնումները ոչ թե միմյանց բացառող, այլ համադրելի իրողություններ են):

Նման մոտեցման դեպքում, օրինակ, լիովին ընդունելի կարելի է համարել Գ. Գարեգինյանի բնորոշումը, թե «...պարզ նախադասությունը մենաստորոգումային կառույց է, բարդ նախադասությունը՝ բազմաստորոգումային»⁸, մինչդեռ այս ձևակերպումը քննադատվում է Ա. Պապոյանի դասագրքում, որտեղ բարդ նախադասության կազմում առկա՝ միակազմ պարզ նախադասությամբ արտահայտված բաղադրիչները ստորոգումային միավորներ չեն համարվում:⁹ Գործ ունենք, այսպիսով, նախադասություն – ստորոգումային միավոր հասկացությունների իմաստային հարաբերության տարբեր գնահատումների հետ:

2. Այժմ մի երկու նկատառում շարահյուսական այլ տերմինների կիրառության մասին:

⁸ Գարեգինյան 1984, 5:

⁹ Տե՛ս Պապոյան, Բաղիկյան 2003, 213-214:

Տերմինի՝ որպես բառի իմաստային առանձնահատկությունն այն է, որ այն պետք է ըստ հնարավորին համարժեք, առանց հուզաարտահայտչական երանգների, արտահայտի տվյալ գիտական հասկացության բովանդակությունը: Տերմինային բազմիմաստությունը և հոմանիշությունը, ինչպես հայտնի է, գիտական տվյալ համակարգում ցանկալի չեն, սակայն փաստ է նաև, որ հոմանիշ տերմինները սակավադեպ չեն գիտության լեզվում, դրանք որոշ ժամանակ, (հաճախ տասնամյակներ) կարող են համագոյակցել, մինչև որ դրանցից մեկը ամրակայվում է տվյալ նշանակությամբ, մյուսը սովորաբար դուրս է մղվում կամ այլ գործառույթ է ստանձնում (հմմտ. խնդրառություն - հոլովառություն - կառավարում, գլխավոր նախադասություն - գերադաս նախադասություն, երկրորդական նախադասության կրճատում - բարդ նախադասության փոխակերպում պարզի, հակառակ հիմունքի պարագա - զիջման պարագա և այլն):

Այնուհետև, տերմինի ներքին ձևը (հատկապես նոր ստեղծվող տերմինների դեպքում) շատ հաճախ ակնարկում է իր նշանակած հասկացությունը, սակայն սա պարտադիր իրողություն չէ, և հետևաբար ճիշտ չէ տերմինի նշանակած հասկացությունը հարմարեցնել նրա ստուգաբանական իմաստին: Ակադ. Ս. Աբրահամյանը մի առիթով այսպիսի դիտարկում է արել. «Լեզվաբանության մեջ տերմինների փոփոխումը չի խրախուսվում, և դա առհասարակ ճիշտ է ու պատճառաբանված: Դա պատճառաբանված է հատկապես այնպիսի տերմինների վերաբերմամբ, որոնք դարերի կյանք ունեն, իրենց ստուգաբանական իմաստով վաղուց չեն համապատասխանում տվյալ քերականական իրակությանը և պարզապես դարձել են պայմանական անուններ. ինչպես՝ ենթակա, ստորոգյալ, դերբայ և այլն»¹⁰:

Այս առումով հազիվ թե ընդունելի համարվեն հետևյալ բնույթի ձևակերպումները. «...չի կարող գլխավոր անդամ լինել մի բան, որի անունը ենթակա է: ... նախադասության գլխավոր անդամը, ի հա-

¹⁰ Աբրահամյան 2004, 62:

կադրություն ենթակայի, վերանվանում ենք գերակա (բայ-ստորոգյալ՝ ըստ Մ. Աբեղյանի)»¹¹: (Ի դեպ, արևմտահայերենի քերականություններում ենթակայի համար գործածում են ստուգաբանորեն հակադիր իմաստ ունեցող տեր բայի անվանումը, ստորոգյալի համար էլ՝ ստորոգիչ, որ արևելահայերենում հոմանիշ է հանգույց տերմինին)¹²:

Ահա նույն կարգի ևս մի օրինակ: Բարդ նախադասության բաղադրիչների՝ առանց բառային միջոցների կապակցությունը անվանելու համար մեր քերականագիտության մեջ գործածվում են շարահարություն, շարահարական կապակցություն (Մ. Աբեղյանի հետևողությամբ) և անշաղկապություն, անշաղկապ կապակցություն (հավանաբար ռուս քերականների ազդեցությամբ) տերմինները: Ձեռնպահ մնալով սրանցից որևէ մեկը նախընտրելի համարելուց՝ արձանագրենք միայն, որ այս հոմանիշ տերմինները շարահյուսական աշխատություններում կիրառվել են ճիշտ միևնույն նշանակությամբ: Այս առումով էլ տեղին չեն թվում Ա. Պապոյանի քննադատական դիտողությունները՝ ուղղված մասնավորապես Ն. Պատնասյանին և Գ. Գարեգինյանին: Նա գրում է. «Եթե անշաղկապ գիտաբարը կարող է քիչ թե շատ արդարացվել համադասական կապակցության եղանակը բնութագրելիս, ապա այն բնավ արդարացված չէ ստորադասական հարաբերության ճիշտ գնահատման տեսակետից: Խնդիրն այն է, որ ստորադասական հարաբերության դրսևորման միջոցներ են ո՛չ միայն շաղկապները (հասկանալի է ստորադասական), այլև հարաբերական դերանունները: Ստորադասական շաղկապների բացակայության դեպքում կապակցությունը թերևս նույնպես կարելի է կոչել անշաղկապ: Հետևողական լինելու պարագայում հարաբերական դերանունների բացակայությամբ նախադասությունն էլ պետք է կոչվեր անհարաբերական»:¹³ Այլ կերպ ասած՝ դրվում է տերմինի բառացի իմաստի և նրա նշանակած քերականական իրակության ճշգրիտ համապատասխանության

¹¹ Գյուլգատյան 2016, 205-206:

¹² Տե՛ս Գալստյան 2014, 83-104:

¹³ Պապոյան, Բաղիկյան 2003, 228:

պահանջ, որը, հատկապես շարահյուսական տերմինների դեպքում, ոչ միշտ է արդարացված: Սրան հակառակ՝ կարևոր է շարահյուսական (և ընդհանրապես՝ գիտական) տերմինի՝ տրամաբանորեն ճշգրիտ ու անհակասական լինելու պահանջը: Այս տեսակետից, թվում է, օրինակ, որ «կախյալ շարահարություն», «անկախ շարահարություն» տերմիններն արդեն իսկ տրամաբանորեն անխոցելի չեն. բանն այն է, որ «շարահարությունը» հարաբերություն է, իսկ «կախյալ» կարող է լինել ոչ թե հարաբերությունը, այլ նրա եզրերից մեկը՝ ստորադասը:

Ի դեպ, նույն կարգի հակասությունն նկատում է Դ. Գյուլգաստյանը լեզվաբանության մեջ մեծ տարածում ստացած «ստորադասական կապակցություն» անվանման մեջ. այստեղ էլ, ըստ նրա, կապակցությունը անվանելիս նկատի է առնվում «ո՛չ լրացում – լրացյալի, այլ մի՛միայն լրացման հարաբերությունը լրացյալի նկատմամբ»:¹⁴ Հարաբերությունն անվանելու համար լեզվաբանն առաջարկում է «տարադասություն» տերմինը (ի հակադրություն «համադասության»), որը թեև առայժմ անսովոր, տրամաբանական առումով առավել հաջողված պետք է համարել: Ավելորդ չենք համարում նշել նաև, որ Դ. Գյուլգաստյանի այս աշխատությունը պարունակում է մեր լեզվի շարահյուսական շատ իրողությունների նորովի մեկնաբանություններ, նոր հասկացություններ ու տերմիններ (տե՛ս գրքին կցված «Տերմինարանը»), որոնց գոնե մի մասը կարող է հաջողությամբ կիրառվել նաև ավանդական շարահյուսագիտական աշխատանքներում:

Գրականություն

Աբեղյան Մ. 1965. , Հայոց լեզվի տեսություն, Ե.:

Աբրահամյան Ս. 2004, Հայոց լեզու: Շարահյուսություն (Բուհական ձեռնարկ), Ե. :

Աթայան Է, 1981. Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը, Ե.:

¹⁴ Դ. Գյուլգաստյան 2016, 196:

Աղայան Է. 1987. Նախադասություն և ասություն // «Բանբեր Երևանի համալսարանի», 1:

Աղայան Է. 1988. Նախադասության մասին // «Բանբեր Երևանի համալսարանի», 1:

Գալստյան Ա. 2014, Արևելահայերենի և արևմտահայերենի լեզվաբանական տերմինների զուգադրական քննություն // «Արևելահայերենի և արևմտահայերենի տերմինային համակարգերի զուգադրական քննություն», Ե. :

Գարեգինյան Գ. 1984, Ժամանակակից հայոց լեզու, Ե.:

Գյուլգառյան Դ. 2016. Գրական արևելահայերենի քերականության հիմունքներ, Ե.:

Իշխանյան Ռ. 1988. Դիմավոր բայը որպես շարահյուսական միավոր // «Բանբեր Երևանի համալսարանի», 1988, 1:

Պապոյան Ա., Բաղիկյան Խ. 2003, Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Ե.:

Պետրոսյան Ն. Զ. Հայերենագիտական բառարան, Ե. :

Ջահուկյան Գ. 1985, Ստորոգումը և նրա արտահայտության միջոցները // «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», հ. 1:

Л. Г. Телян.- Некоторые наблюдения по синтаксису. Две основные категории армянского синтаксиса – предикация и предложение, подвергаются разным определениям и интерпретациям в учебниках, учебных пособиях и различных научных публикациях. В статье сделана попытка сопоставления, анализа и оценки существующих точек зрения. Рассматриваются также неоднозначные толкования и употребления нескольких других синтаксических единиц и соответствующих терминов.

L. G. Telyan – On Some Observations about Syntax. The two major categories of the Armenian Syntax – predication and sentence – are defined and interpreted in different ways in textbooks and different scientific papers. The article is an attempt of comparison, analysis and evaluation of the current viewpoints. The paper comprises contradictory interpretation and the variety of use of certain syntactic units and of the respective terms.

ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ
ԹՄԴԵՎՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ «ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ» ԵՎ
«ԳՅՈՒՏ ՆՇԽԱՐԱՑ» ԵՐԿԵՐՈՒՄ

Բանասիր. գիտ. դոկտոր Ա. Հ. Աբաջյան
abajyan.anna@ysu.am

Բանասիր. գիտ. թեկն. Ա. Լ. Յուզբաշյան
anahit.yuzbashyan@ysu.am

Բանայի բառեր. դարձվածային միավոր, վկայաբանական գրականություն. Թադևոս Առաքյալի գործունեությունը, լեզվական միավոր. դարձվածային իմաստ. դարձվածային միավորի գործածություն:

Ключевые слова: Фразеологическая единица, мартирологическая литература, деятельность Апостола Фадея, языковая единица, фразеологическое значение, применение фразеологического единицы.

Key words: Phraseological unit, martirological literature, activities of Apostol Phadeus, linguistic unit, phraseological meaning, use of phraseologism.

Նշված երկասիրությունները, լինելով վարքագրական բնույթով սրբախոսական, ունեն քարոզչական ուղղվածություն, ուստի և նպատակ ընթերցողի հոգուն ու մտքին ներագրու դարձնելու նկարագրվող յուրաքանչյուր իրողություն:

Հայտնի է, որ դարձվածային միավորները ցանկացած խոսքային տիրույթում ունեն ոճական կարևոր արժեք, գործառույթի եզակի դրսևորում, քանի որ միտված են ասելիքը տպավորիչ դարձնելուն. «Դրանք իրենց իմաստային նրբերանգներով հաղորդվող մտքին տալիս են դիպուկություն ու կենդանություն, բարձր ոճերում նաև՝ վեհություն և հանդիսավորություն...»¹⁵:

Աստվածաբանական գրականության մեջ, մանավանդ քարոզչական բնույթի երկերում դարձվածքները խոսքի կառուցման անհրաժեշտ բաղադրիչ են, քանի որ ասելիքը պատկերավոր ներկայացնելով՝ հեղինակը ընդգծում է երկու կարևոր հանգամանք.

¹⁵ Բաղիկյան 2000, 12:

ա) քրիստոնեության՝ իբրև հոգևոր հավատի, և փիլիսոփայության՝ իբրև աստվածաբանական դավանանքի, եզակի ուժը և կարևորությունը,

բ) մարդու՝ առ Քրիստոս հասնելու ճանապարհին հանդիպող բոլոր խոչընդոտների հաղթահարման անհրաժեշտությունը, քանի որ դա է ուղին դեպի «երկնային գաւիթ», որտեղ է *Հուլյսը* «երկնային գաւրութեան»:

Հոգևոր հավատին ուղղված յուրաքանչյուր միտք ընթերցողին պիտի վստահեցնի իր ճշմարտության մեջ և միևնույն ժամանակ յուրաքանչյուր քրիստոնյայի հասու դարձնի. «Ով հաւաստեալ խնդրեցէ, նա գտցէ» մտքին, քանի որ անբասիր հավատն առ Աստված կենաց բանալին է: Սրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ աստվածաբանական գրականության յուրաքանչյուր երկ պատկերավոր է դառնում դարձվածային միավորների (այսուհետև՝ ԴՄ) ներկայությամբ և նրանց տեղին գործածությամբ:

Դարձվածային միավորները, մեր մոտեցմամբ, ներառում են բուն դարձվածքները, որոնք նաև կոչվում են իդիոմատիկ միավորներ, որոնցում կապակցությունը կազմող բառերի վերախմաստավորմամբ ձևավորվել է տվյալ դարձվածքը, օր.՝ *փոխի յաշխարհէ*, այլև դարձվածային այն արտահայտությունները, որոնցում այն կազմող բառերից մեկն է փոխաբերական իմաստով գործածված, օր.՝ *ի լոյսն կենդանի, ճանապարհ կենդանի, դեղ անմահութեան, զբանն կենաց, երկնային գունդ, երկնաւոր գաւիթ, երկնաւոր թագաւոր*¹⁶ ևն:

Պ. Բեդիրյանի կարծիքով՝ կայուն կապակցությունները թեկուզև մեկ բաղադրիչի փոխաբերական իմաստով գործառույթի դեպքում չեն դառնում ԴՄ-ներ. օր.՝ *կէտ ժամանակակաց, դեղ անմահութեան* և նման կառույցները հեղինակը համարում է բաղադրյալ անուններ¹⁷:

¹⁶ Դարձվածքների արժևորումը լեզվաբանական գրականության մեջ միանշանակ չէ. մանրամասն տե՛ս Բադիկյան 1986, 15-43:

¹⁷ Բեդիրյան 1973, 28:

Կարծում ենք՝ սրանք ևս ԴՄ-ներ են և ներառված են մեր այս քննության մեջ:

Այսպես, «Վկայաբանություն...» երկի վերջում գրված է. «Ես Սամուել եպիսկոպոս անարժան ծառայ Քրիստոսի թարգմանեցի¹⁸ զվկայություն սուրբ առաքելոյն Թադէոսի եւ զսրբոյն կուսին Սանդիստոյ եւ ետու ամենայն Հայաստան աշխարհի»¹⁹:

Հ. Քյոսեյանը աշխատությունը համարում է շարադրված 485 թ. հետո, որի հեղինակն է Սամվել եպիսկոպոսը: Նա մերժում է Ղ. Ալիշանի այն մոտեցումը, որ Սամվելը ասորի Շմուելն է, որը Սահակ Պարթևի ժամանակ նրան հակառակ կաթողիկոս էր կարգված, բերում՝ հետևյալ փաստարկները. ա) ասորական գրականության մեջ այն բացակայում է, բ) *թարգմանել* նշանակում է *պատմել, վկայել, ավանդել*, որ արված է երկում, գ) նրանում առաջ քաշված գաղափարները չեն կարող լինել Շմուելիին, քանի որ դրանք հակառակ են նրա կրոնաքաղաքական դավանանքին²⁰:

Թադէոս առաքյալի նշխարների գյուտի պատմության ժամանակը Ե-Ձ դդ. սահմանագլխին է, «երբ դավանաբանական վեճերի սաստկացման շրջանում հրամայական անհրաժեշտություն էր դարձել ոչ միայն եկեղեցու դաւանական ինքնորոշումը, այլև առաքելական ակունքների վկայակոչումով նրա հաստատագրումն՝ իբրև պատմական աներկբայ իրողություն»²¹:

Բնագրային նյութը ներկայացնում է.

ա) Աստվածային հրաշագործությունը և սերը նրանց հանդեպ, ովքեր հավատում են Աստծուն. սա այն հիմնակետն է, որը շարադրվում է դրանում ընթերցողին հավաստիացնելու միտումով:

¹⁸ Թարգմանեցի, այստեղ՝ պատմեցի:

¹⁹ Մատենագիրք Հայոց, հ. Գ (Ձ դար), 2004, 18:

²⁰ Նույն տեղում, 3: Ըստ այսմ էլ բնագրի համար հիմք են ընդունվել վենետիկյան երկու ձեռագրերը և Ֆրանսիայի ազգային գրադարանի ձեռագիրը. Վերջինիս հետ համեմատված է Ղ. Ալիշանի բնագիրը՝ հրատարակված «Մոփերք»-ում:

²¹ Նույն տեղում:

Շարադրանքի ցանկացած հատված պատկերավոր է, հուզիչ, տպավորիչ: Խոսքը հազեցած է դարձվածային միավորներով, որոնք ուճական հիմնական միջոց են մարդկային հոգու և մտքի մեջ թափանցելու համար:

բ) Քրիստոնեություն ընդունած Սանդուխտ կույսի կտտանքները, որ նա կրում է սիրով: Կույսի ֆիզիկական տանջանքների նկատմամբ կա հեղինակի ամփոփ վերաբերմունքը. «Պի՛նդ կացեք, զի այժմ առնուք *զլուսեղէն պսակն*» (էջ 10): «Քաջալերեցարուք և *պի՛նդ կացեք*. զի ես եկից եւ առից զձեզ առ իս» (էջ 8):

Նյութը տպավորիչ է դառնում ոչ միայն դեպքերի, այլև խոսքային միջավայրի առումով: Բնականաբար աստվածաբանական բովանդակությամբ դարձվածային միավորները տիրապետող են. դրանք կարելի է բաժանել երկու խմբի. ա) մի մասը առկայացված-տեղայնացված է տվյալ խոսքային տիրույթում, բ) մյուս մասը ընդհանրական է և հանդիպում է նաև աստվածաբանական այլ նյութերում:

Դարձվածային արժեքի միավորները գնահատելիս անհրաժեշտ է քննել տվյալ կապակցության բաղադրիչների ուղիղ և փոխաբերական իմաստները, ուստի նրանցից յուրաքանչյուրը տվյալ խոսքում ձեռք է բերում տեքստի բովանդակությանը հարիր գործառույթ: Այս դեպքում հասկանալի է դառնում նրանց մի մասի առկայությունը մեր քննած բնագրերում և բացակայությունը Ռ. Ղազարյանի բառարանում և ՆՀԲ-ում²²:

Շարադրանքում հաճախադեպ են լոյս բաղադրիչով կապակցությունները: Լույսը խորհրդանիշն է աստվածային մաքրության, ուժի, զորության: Տարբեր կապակցություններում գործածվելով ուղիղ, թեք հոլովաձևերով կամ ածանցմամբ՝ այս բաղադրիչը դրանք դարձնում է ԴՄ-ներ: Դիտարկենք օրինակներ՝ «... եւ լոյս նոր *զգեցոյց* քեզ որպէս վերարկու, եւ *պսակն լուսեղէն* ի գլուխ ք» (էջ 14),

²² Ղազարյան 2000: Հմմտ. «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», 1836-1837 (այսուհետև՝ ՆՀԲ):

«...զգեցոյց նմա Քրիստոս Փառս լուսեղէնս զերկնաւոր ճառագայթսն» (Էջ 16), «...վասն զի թողցես զթանձրամած մարմին քո և զգէնուս զլոյսն երկնաւոր եւ զպսակն լուսոյ յաղթութեան մարտիրոսութեան արժանի լինիս *առնուլ ի զլուխ քո*» (Էջ 12):

Ռ. Ղազարյանի բառարանում այս կառույցները վկայված չեն²³: Հեղինակի «Գրաբարի բառարանում» *լոյս* բառի բացատրության 6-րդ կետում փոխաբերական իմաստով արձանագրվում է *աստվածություն* իմաստը (տե՛ս ԳԴԲ, ՆՀԲ):

Լոյս բաղադրիչը ստանում է տարբեր որոշիչներ, որոնցից *աստվածային* իմաստ ունեցող բառերի հետ կազմում է դարձվածային միավորներ, օրինակներ՝ «...Եւ զարդարիլ *վերագոյն* լուսով, բնակել *ի լոյս աստուծութեան* եւ յամենայն ժամ կաս *յուրախութեան վերին լուսոյ*» (Էջ 14), «Ահա փութով հասանես *ի լոյսն կենդանի* առ որ անձկացեալ ես» (Էջ 14), «... եւ ուսուցեր ինձ *զլոյսն կենդանի* զՔրիստոս, զի դու եղեր ինձ ճանապարհ կենդանի և դեղ անմահութեան» (Էջ 14):

Սրանք հիշատակված չեն ԳԴԲ-ում և ՆՀԲ-ում:

Հաճախադեպ են *երկնային, երկնաւոր, երկնից* բաղադրիչով կազմությունները, որոնք ունեն *աստվածային* իմաստը: Օր.՝ «... լուսաւորել *երկնային լուսովն*» (Էջ 5, 8),

«... եւ *լնուլ երկնային սիրովն* ի լուսեղէն փառաց քոց» (Էջ 7), «...եւ ասեցնա. Երանի՛ է քեզ դուստր *երկնաւոր թագաւորին*» (Էջ 8) և այլն:

Երկնային բաղադրիչով միավորներ Ռ. Ղազարյանը չի վկայում: *Երկնային* (*երկնաւոր, երկինք* բառի թեք հոլովածներով) բաղադրիչը *աստվածային* իմաստով կազմում է ԴՄ-ներ: ՆՀԲ-ում *երկնային* բառի համար, ի թիվս այլ իմաստների, կա հետևյալ բացատրությունը. «որ ինչ յերկինս է և ի Սուրբ Գիրքն ասի Երկնից կամ Երկնաւոր»: Բերված օրինակներն են *Երկնային զաւրք, Երկնային դասք* կամ *Երկնայինք*, այսինքն՝ *հրեշտակք են* (ՆՀԲ, էջ 696): Օր.՝ «*երկնաւոր* զաւրթի ծնունդք»

²³ Ռ. Ղազարյան, 2012, (այսուհետև՝ ԳԴԲ):

(էջ 15), «յարկս երկնայինս» (էջ 15), «երկնաւոր զարք», «Եւ եղև շարժումն և ձայն ահեղ երկնաւոր զարաց» (էջ 15) և այլն:

Ոչ դավանաբանական դարձվածային միավորները նույնպէս հաճախադէպ են: Դրանք գերազանցապէս բայական կառույցներ են: Համամիտ ենք Պ. Բեդիրյանի այն դիտարկմանը, որ դարձվածքների մեջ «զլիսավոր ուժը» բնականաբար գոյականներն են, սակայն նրանցում կարևոր է բայական բաղադրիչը²⁴. սա վերաբերում է նաև գրաբարին: Գրաբարում տարածված են եղել *առնել*, *առնուլ*, *լինել*, *կալ*, *թողուլ*, *դնել* և այլ բայերով ԴՄ-ները, ինչը փաստում է բնագրային նյութի մեր ուսումնասիրությունը: Բնագրի ԴՄ-ները ներկայացնենք ըստ այդմ. 1. *Առնել* բաղադրիչով գործառված են հետևյալ ԴՄ-ները. ա) *յամօթ առնել* - ամաչեցնել (էջ 7, 11, 13, 14, 15, 16), բ) *թողութիւն առնել* - ներում շնորհել (էջ 9), գ) *հալածական առնել* - հալածել (էջ 11), դ) *սրամահ առնել* - սրախողխող անել (էջ 9), ե) *բրազոհ առնել* - գանահարել (էջ 7), զ) *ուրախ առնել* - ուրախացնել (էջ 14), է) *արժանի առնել* - արժանացնել (էջ 14), ը) *յանձն առնել* - հանձնել (էջ 17), թ) *անտես առնել* - անտեսել (էջ 15), ժ) *յարտասուս առնել* (այլն՝ *լինել*, *հարկանել*) - արտասվել (էջ 12, 14):

2. *Առնել* բային հոմանիշ *լինել* բայով են հետևյալները. ա) *լինել ի կերպարանս* - կերպարանափոխվել (էջ 8, 9), բ) *լինել փախստական* (ք, ս) (այլն՝ *անկանիմ*) - փախչել (էջ 11), գ) *յարտասուս լինել* (այլն՝ *առնել*, *հարկանել*) - արտասվել (էջ 12, 14):

3. *Առնուլ* բաղադրիչով ունենք՝ ա) *առնուլ զնմանութիւն* - նմանվել (էջ 14):

4. *Դնել* բաղադրիչով ունենք՝ ա) *ունկն դնել* - լսել (էջ 19), բ) *միտ դնել* - մտադրվել (էջ 20), գ) *դնել ի բանտի* - բանտարկել (էջ 7):

5. *Արկանել* բաղադրիչով ունենք՝ ա) *արկանել կոխան* - ոտքի տակ բերել (էջ 16), բ) *ձեռն արկանել* - բռնել (էջ 6):

²⁴ Բեդիրյան 1973, 92:

6. *Կալ* բաղադրիչով՝ ա) *պինդ կալ* կամ *կալ պինդ* - հաստատուն մնալ (էջ 11, 14, 15, 18), բ) *կալ յոտն* - ոտքի կանգնել (էջ 9):

7. *Տալ* բաղադրիչով՝ *աւետիս տալ*- ավետել (էջ 11):

8. *Թողուլ* բաղադրիչով՝ ա) *թողուլ ի ձեռանէ* - անտեսել (էջ 16, 17):

9. *Հարկանել* բաղադրիչով՝ *բուռն հարկանել* – բռնել (էջ 17):

10. *Պագանել* բաղադրիչով՝ *երկիր պագանել* – երկրպագել, մեծարել (էջ 6, 9):

ԴՄ-ները հանդես են գալիս նաև նախդիր բաղադրիչով: Այս կառույցներում ևս ԴՄ-ի գլխավոր միավորը բայն է, ինչպես՝ *յաւօթ առնել* - ամաչեցնել, *յարտասուս լինել* – արտասվել ևն: Վերջիններս հիմնականում *ի(յ)* և *զ* նախդիրներով են հանդիպում: *Զմիտս* բառաձևը *գրաւել* բայի հետ արտահայտում է *ուշադրությունը բնեռել* (էջ 16), *խաբել*, *գողանալ* բաղադրիչների հետ՝ *խաբել* իմաստը (էջ 9, 16), *զահի* բաղադրիչը ԴՄ է դառնում *հարկանել* բայի հետ՝ *զահի հարկանել* – վախենալ, ահաբեկվել (էջ 6, 8, 9, 10), *յայց* բաղադրիչով ունենք *յայց գալ*, *եկիր յայց* (էջ 8) և այլն: Ռ. Ղազարյանը վկայում է *յայց ելանել*, ՆՀԲ-ն՝ *յայց ելանել*, *յայց առնել*: *Զանձին* բաղադրիչով՝ ա) *տալ զանձինս* կամ *զանձինս տալ* – նվիրվել (էջ 11):

Սրանք վկայված են ԳԴԲ-ում և ՆՀԲ-ում: Չկան վկայված *տալ պտուղ* – *կայացնել* իմաստով միավորը. «Եւ տան պտուղ սուրբ հանդիսին» (էջ 5):

Բնագրում բայական բաղադրիչով ԴՄ-ների գործառական վիճակագրությունը (*առնել* բայով՝ 20 օրինակ, *առնուլ* բայով՝ 4, *լինել* բայով՝ 9, *կալ* բայով՝ 9, *հարկանել* բայով՝ 5, *դնել* բայով՝ 4, *թողուլ* բայով՝ 3, *անկանել (իմ)* բայով՝ 2, *երկիր պագանել*՝ 2, *տալ* բայով՝ 5, *արկանել* բայով՝ 3) ցույց է տալիս, որ հաճախադեպ են *առնել*, *լինել*, *կալ* բաղադրիչով միավորները, որը նաև ակնհայտ է ԳԴԲ-ում ներկայացված օրինակներում: Բնագրերում գործածված դարձվածքները գերազանցապես վկայված են ԳԴԲ-ում և ՆՀԲ-ում: Այն միավորները, որոնք ունեն տեքստային կամ խոսքային հանգամանքով պայմանավորված գործառույթ, նշված բառարաններում

վկայված չեն: Օր.՝ *պտուղ տալ* (հանդիսին...) – կայացնել հանդեսը, *նշան առնել*, որի *նշան տալ* հումանիշին անդրադառնում է Լ. Հովհաննիսյանը իրմ հոդվածներից մեկում²⁵:

Վկայված չեն նաև *լոյս* բաղադրիչով միավորներ, որոնք հիմնականում *զգենուլ* բայի հետ են գործածվում: ԳԴԲ-ում վկայված չեն նաև՝ ա) *բան կենաց* – «եղև քարոզ *բանին կենաց* (էջ 5, 6) ուսուցաներ, քարոզեր *զբանն կենաց* (էջ 5, 9, 13), բ) *դնել, առնել պսակ լուսէ* (աստվածային լուսե պսակ) ի գլուխ – գլխին կրել աստվածային պսակ, գ) *պարսպել յուսով* (այս իմաստով նշված բառարաններում վկայված է *յոյս առաջի դնել* միավորը) – հուսադրել դարձվածային միավորները:

Գրաբարի դարձվածքներն ունեն պատկերավոր խոսքի լայն հնարավորություն: Դրանց քննությունը պարտավորեցնում է յուրաքանչյուր հետազոտողի հստակեցնելու ԴՄ-ի առանձնացման համար հիմք ընդունած սկզբունքները, քանի որ տարբեր կերպ են գնահատվում հարադիր բայ և դարձվածք, բաղադրյալ անուն և դարձվածք, կայուն կապակցություն և դարձվածք տերմինները: Այսպես՝ ԳԴԲ-ում կա *ուրախ լինել* – ուրախանալ, *հրաման տալ* – հրամայել, բայց չկան, օրինակ, *առաւաւտ լինել* – լուսանալ կամ *ի տարակուսի կալ* – տարակուսել միավորները: Մենք փորձել ենք պահել ընդհանուր սկզբունքը և ներառել ենք բոլոր միավորները:

Ուսումնասիրված բնագրային նյութում առկա հարուստ դարձվածային միավորների իմաստային քննությունը ապացուցում է, որ դասական գրաբարի լեզվական միավորների ընդունված համակարգը թույլ է տալիս այնպիսի կապակցությունների ձևավորում, որոնց մի մեծ խումբ պիտի դառնա կայուն և սրանց միջոցով, այն կազմող բաղադրիչ միավորների վերահիմաստավորմամբ՝ դարձվածային միավոր: Դրանք խորքային գործառույթ ունեն և պատկերավոր խոսքի կառուցման անհրաժեշտ բաղադրիչ են, հետևաբար պատճառաբանված

²⁵ Հովհաննիսյան 2015, 6:

է ԴՄ-ների և կայուն բառակապակցությունների հաճախադեպ գործածությունը վարքագրական ժանրի երկերում:

Գրականություն

Աւետիքեան Գ., Միրմէլեան Խ., Աւզերեան Ս., 1836-1837, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1-2, Վենետիկ:

Բաղիկյան Խ. 1986, Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Ե.:

Բաղիկյան Խ. 2000, Դարձվածային ոճաբանություն, Ե.:

Բեդիրյան Պ. 1973. Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Ե.:

Հովհաննիսյան Լ. 2015. Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց»-ի լեզվի մի քանի առանձնահատկությունների շուրջ // « Լեզու և լեզվաբանություն», 1-2 (13), Ե.:

Ղազարյան Ռ., Գրաբարի բառարան, հ. Ա-Բ, Ե.:

Ղազարյան Ռ. 20 , Գրաբարի դարձուածաբանական բառարան, Ե.:

Մատենագիրք Հայոց, 2004, հ. Գ (Զ դար), Անթիլիաս-Լիբանան:

А. Г. Абаджян, А. Л. Юзбашян: Идиомы в трудах «Свидетельство апостола Таддея, проповедь, приход в Айк и изобретение реликвий» - Впервые работы, упомянутые в статье, оцениваются с лингвистической точки зрения. Идиомы играют огромную роль в построении образной речи. Большое количество идиомов делает содержание проповеди и описание пыток Сандухта очень трогательными. Они имеют конфессиональное и неконфессиональное(общее) значение. Исследование идиомов в грабаре не завершена до сих пор. Мы сделали анализ об их значениях и структурах. Мы также выделили идиомы, которые не упомянуты в словарях Р. Казаряна «Идиомы в грабаре» и в «Новом Айказяне». Идиомы являются важным компонентом построения образной речи.

A.H. Abajyan, A. L.Yuzbashyan: Idioms in the works “Apostle Thaddeus testimony, preaching, coming to Hayk (Armenia) and the invention of the relics” - This is the first time, that works, which are mentioned in the article, evaluated from the linguistic point of view. Idioms play a huge role in building a figurative speech. The generous amount of idioms makes the content of the preachment and the description of the Sandukht’s tortures very touching. They have a confessional and non confessional(general) meanings. The inspection of grabar’s idioms are not complete untill now. We have made an analysis about their meanings and structures. We have also identified idioms that are not mentioned in the dictionaries of R. Ghazaryan “Idioms in Grabar” and in “New Haykazyan”. Idioms are an essential component of building a figurative speech.

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՆՉՎՈՂ
ԲԱՅԱԿԱՆ ԿԱՅՈՒՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ

Բանասիր. գիտ. թեկնածու Լ. Ն. Ավետիսյան

Բանայի բառեր. գրաբար, քրիստոնեական վարդապետությանն առնչվող բայական կայուն կապակցություններ, վերախմաստավորված կայուն կապակցություններ, վերախմաստավորում չունեցող կայուն կապակցություններ, միաբևեռ կայուն կապակցություններ, իդիոմ-ներ, թեմատիկ խմբեր:

Ключевые слова: грабар, глагольные устойчивые сочетания (УС), связанные с христианским архимандритством, семантически переобразованные УС, непереосмысленные сочетания, унилатеральные УС, идиомы, тематические группы.

Key words: Old Armenian, the verbal stable compounds (SC) relating to the Christian archimandrity, semantically transfiguring SC, non-metaphorical SC, unilateral SC, idioms, thematic groups.

Բայի արժեք ունեցող կայուն կապակցությունները երկու կամ ավելի բաղադրիչներից կազմված պատրաստի վերարտադրելի և մասամբ կամ ամբողջությամբ վերախմաստավորված միավորներ են, որոնց գերադաս բաղադրիչն անպայման բայ է: Ըստ որում, այդօրինակ կառույցները դասվում են անվանողական կապակցությունների շարքը՝ արտահայտելով հասկացություն: Անշուշտ, բայական կայուն կապակցությունները, դրվելով եղանակաժամանակային ձևերով, խոսքաշարում ստորոգման շնորհիվ հաղորդակցական արժեք են ձեռք բերում¹:

Ինչպես լեզուներում ընդհանրապես, այնպես էլ հին հայերենում մասնավորապես բայական կայուն կապակցություններն ամենամեծ քանակությունն են կազմում: Ընդամին, քրիստոնեական վարդապետությանն առնչվող այդ կարգի կայուն կապակցությունները գրաբարում զգալի տեսակարար կշիռ ունեն:

Մույն հոդվածում գրաբարի մակարդակում համաժամանակյա կտրվածքով բացահայտվում են խնդրո առարկա կայուն կա-

¹ Հմմտ. Բաղիկյան, 1986, 161:

պակցությունների իմաստային առանձնահատկությունները: Քննարկվում են քրիստոնեական վարդապետությանն առնչվող բայական կայուն կապակցությունների իմաստային (թեմատիկ) խմբերը, որոնք իրենց հերթին ենթարկվում են իմաստային ներքին խմբավորման, ինչպես նաև անդրադարձ է կատարվում այդ կարգի կապակցությունների իմաստային տիպերին:

Ա. *Բայական կայուն կապակցությունների իմաստային տիպերը*: Լեզվաբանական գրականության մեջ այս առումով առանձնացվում է ընդհանրապես կայուն կապակցությունների իմաստային երկու տիպ՝ վերաիմաստավորում չունեցող կամ ոչ փոխաբերական և վերաիմաստավորված²: Ըստ որում, վերաիմաստավորված այդօրինակ կառույցներն իրենց հերթին լինում են միաբևեռ կայուն կապակցություններ և իդիոմներ³:

Անդրադառնանք մեզ հետաքրքրող բայական կայուն կապակցությունների իմաստային տիպերին առանձին-առանձին:

1. *Վերաիմաստավորում չունեցող կայուն կապակցություններ*: Մասնագիտական գրականության մեջ կայուն բառակապակցությունների շարքն են դասվում ոչ փոխաբերական հարադրական բայերը⁴: Ուշագրավ է, որ ընդհանրապես հարադրական բայերը «Տարբեր խոսքային միջավայրում հանդես են գալիս մերթ իբրև հարադրական բայեր, մերթ էլ իբրև դարձվածքներ: Բայց ամեն բայական հարադրություն դեռ դարձվածք չէ»⁵:

Քրիստոնեական վարդապետությանն առնչվող բայական կայուն կապակցություններում զգալի քանակություն են կազմում վերաիմաստավորում չունեցող կառույցները, որոնց համար կայունությունից բացի հատկանշական են պատրաստի վերարտադրե-

² Տե՛ս Բեդիրյան 1990, 5: Խաչատրյան, 1996, 106, 208:

³ Տե՛ս Назарян 1987, 65:

⁴ Հ մնտ. Բեդիրյան, 1990, 5:

⁵ Տե՛ս Բեդիրյան 1973, 29-32:

լիությունը և շարահյուսական անընդմիջարկելիությունը: Հմմտ. *ժուժկալ լինել (իմ) անձին* (գսպել, ինքն իրեն հաղթել), *խրատ դնել* (խրատել, համոզել), *պաշտօն առնել // մատուցանել* (երկրպագել), *ապաստան լինել (իմ)* (հուսալ, ապավինել), *շնորհս առնել* (ներել), *օճան առնուլ // գտանել* (ներում ստանալ), *կնիք առնուլ* (կնքվել, մկրտվել), *անկանել(իմ) ընդ մահուամբ* (մեռնել), *սկիզբն առնուլ էանալոյ // լինելոյ // կենդանանալոյ* (ստեղծվել), *խօսել (իմ) ի խաղաղութիւն // ի հաշտութիւն* (խաղաղության՝ հաշտության բանակցություն սկսել), *ի խաչ ելանել* (խաչը ելնել. խաչվել), *զերիցութեան ձեռն դնել ի վերայ ուրուք* (ձեռնադրել երեց), *բարի առնել* (բարերարություն անել), *գալ յողորմութիւն* (ողորմել), *արկանել գութ գումամբ* (մեկին գթալ՝ կարեկցել), *զգենուլ բանին գմարսին* (մարմնավորվել իբրև մարդ, մարդկային բնություն առնել - Քրիստոսի մասին), *պաշտօն արկանել* (ժամերգություն կատարել), *գալ ի գղջումն* (զոջալ. ապաշխարել), *հերքել // մերժել // ի բաց կալ ի սուրբ հաւատոյ պարկեշտ կրօնից քրիստոնէութեան* (հեռանալ քրիստոնեական հավատից՝ կրոնից), *յաղօթս կալ առաջի Աստուծոյ* (Աստծուն աղոթել), *ի խաչ հանել, խաչամահ սպանել* (խաչի՝ խաչափայտի վրա բևեռել՝ զամել՝ սպանել): Հմմտ. Ե փոյթ ընդ փոյթ ձեռնամուխ եղեն աւերել քանդել զեկեղեցիս, զտունս աղօթից կործանել, ...զի այնու կարասցեն *հերքել մերժելի բաց կալ ի սուրբ հաւատոյ պարկեշտ կրօնից քրիստոնէութեան* (Թովմ. Արծ., 126): Արժա՛ն է կնոջ մարդոյ հոլանի *յաղօթս կալ առաջի Աստուծոյ* (Ա. Կորն. ԺԱ. 13): Արտաքս հանին քան զայգին, և *խաչամահ սպանին* (Ոսկ. Յհ. Ա. 9):

2. *Վերախմաստավորված (դարձվածային) կայուն կապակցություններ*: Լեզվաբանական գրականության մեջ ընդգծվում է. «Բառային միավորները բառակապակցական փոխհարաբերության մեջ երբեմն վերախմաստավորվում են և ստանում դարձվածային իմաստ»⁶:

⁶ Տե՛ս Համբարձումյան, 2013, 59: Համբարձումյան 2019, 158:

Ինչպես արդեն նշել ենք, քննարկվող կառույցներում ի հայտ են գալիս իմաստային հետևյալ տիպերը՝ ա) միաբնեռ կամ միակողմ վերախմաստավորում ունեցող կայուն կապակցություններ, բ) իդիոմներ կամ իդիոմատիկ արտահայտություններ: Ըստ որում, առաջինները (հետայսու՝ ԴՄ) հատկանշվում են մասնակի, իսկ մյուսները՝ ամբողջական վերախմաստավորմամբ⁷:

Առհասարակ հին հայերենի դարձվածանու մեջ, այս դեպքում՝ քրիստոնեական վարդապետությանն առնչվող բայական կայուն կապակցությունների շրջանակներում համեմատաբար սակավադեպ են վերախմաստավորված (միաբնեռ և իդիոմատիկ) կառույցները:

ա) *Միաբնեռ ԴՄ-ներ*: Այս կարգի կայուն կապակցություններին բնորոշ է դարձվածայնորեն կապված անդամի (անդամների) առկայությունը⁸: Հայտնի է, որ «դարձվածային նշանակություններով օժտված են լիիմաստ բառերը», «դարձվածային իմաստ արտահայտելու համար կառույցի բոլոր բաղադրիչների վերախմաստավորում պարտադիր չէ»⁹: Հմնտ. *կալ պնդակազմ* (հաստատական լինել), *սրտակաթ առնել* (ջերմ սիրով համակել, սիրտը գրավել), *խննարհեցուցանել զունկն* (զիջելով լսել), *ակն ածել ի վերայ ուրուք* (մեկի նկատմամբ հոգ տանել), *ելանել // անցանել յաշխարհե, թափել // արձակել զոգի* (մեռնել), *ընդ բանիւ առնել* (նզովել), *զձեռանէ առնուլ // ձգել // ունել (իւ)* (օգնել), *ըմպել զբաժակն մարդասիրութեան* (հավատով զինվել. քրիստոնյա դառնալ), *պատուել որպէս զնշխարս նահատակելոց սրբոց* (որպես սրբություն ընդունելով՝ խիստ պատվել՝ պաշտել), *տեսանել իբրև զերեսս հրեշտակի* (հավատով՝ հիացմունքով դիտել՝ ուշադրություն դարձնել), *հաղորդեալ լինել (իւ) ի գործ սրբոցն* (հավատին՝ հրաշքին հաղորդակից լինել):

⁷ Հմնտ. Սուքիասյան, Գալստյան 1975, 7-9: Смит, 1959, 6-7:

⁸ Բառի դարձվածային իմաստը կապակցության մեջ և նրա շնորհիվ ձեռք բերված իմաստն է. տե՛ս Ахманова 1969 164, 503):

⁹Տե՛ս Խաչատրյան 1996, 62-63:

Խնդրո առարկա բայական կայուն կապակցությունները դիտարկենք խոսքային միջավայրում. *Պատուեցին* գնոսա *որպէս զնշխարս նահատակելոց սրբոց* (Փարպ., 106): *Տեսանէր* ամենայն մարդ զերեսս նորա *իբրև զերեսս հրեշտակի* (ն. տ., 113): Թափեցան կճղակք ոտիցն և ձեռացն. որպէս զի առ մի նուագ *հաղորդեալ լիցի ի գործ սրբոցն* (Ագաթ., 396):

բ) *Իդիոմներ կամ իդիոմատիկ արտահայտություններ*: Նման կառույցները բնութագրվում են իրենց բոլոր բաղադրիչների լրիվ իմաստային կախվածությամբ, այսինքն՝ ամբողջական վերաիմաստավորմամբ: Լեզվաբանական գրականության մեջ բուն դարձվածքների շարքը դասվում են հենց իդիոմատիկ արտահայտությունները¹⁰: *Հմմտ. արև կրել* (ապրել), *անկանել (իմ) յարևէ* (մեռնել), *զհողմ արածել, ջանալ հողմոյ* (չնչին՝ անցողիկ՝ ոչ հոգևոր բանի հետևից ընկնել), *ոգի ի ձեռն դնել* (հանուն գաղափարի կյանքը վտանգել՝ մահն աչքի առաջ ունենալ), *յոզիս ապաստան լինել (իմ)* (չարաչար նեղվել՝ տանջվել), *գորումն ի ցորենոյ ընտրել* (կարևորն անկարևորից գատել, չարը բարուց զանազանել), *ճաշակել զաշխարհ* (ամուսնանալ):

Դիտարկենք քննարկվող միավորների հետևյալ կիրառությունները. Ոչ վաղագոյն սրբեսչիք *գորումնդ ի ցորենոյդ ընտրել* (Ագաթ., 262): Ամենեքեան միահամուռ զերկրաւոր նախանձ բերելով՝ ոչինչ ընդհատ երևեցան յանցանէ՝ որ ոչ *ճաշակեցին զաշխարհ* (Եղ., VII յեղանակ, 200):

Այնուհանդերձ, կայուն կապակցությունների նման դասակարգումը չի կարելի բացարձակացնել. միննույն կապակցությունը, լինելով բազմիմաստ, կարող է հանդես գալ իմաստային մի քանի տիպերում: Հմմտ. խնդրո առարկա հետևյալ կառույցները, որոնք դրսևորում են միաժամանակ ոչ փոխաբերական (ոչ դարձվածային) և վերաիմաստավորված (դարձվածային) իմաստներով հանդես գալու ներունակություն. *հաւատարիմ լինել (իմ)* – 1. հավատալ (վե-

¹⁰Հմմտ. Մուքիասյան, Գալստյան 1975, 7-9:

րախմաստավորում չունեցող կայուն կապակցություն), 2. հավատարիմ մարդու հանձնվել (վերախմաստավորված կայուն կապակցություն), *ծունր կրկնել* – 1. շատ անգամ ծունր դնել (վերախմաստավորում չունեցող կայուն կապակցություն), 2. երկրպագել (վերախմաստավորված կայուն կապակցություն), *դեղ դնել* – 1. բուժել (վերախմաստավորում չունեցող կայուն կապակցություն), 2. սփռվել (վերախմաստավորված կայուն կապակցություն):

Բազմիմաստ կայուն կապակցությունն իր բոլոր իմաստներով կարող է ներառել նաև իմաստային մեկ տիպի շրջանակներ: Հմմտ.վերախմաստավորում չունեցող կայուն կապակցություններ. *աղօթս առնել* – 1. աղոթել, 2. աղոթքով որևէ բան խնդրել, *ըստզիւտ լինել (իմ)* – 1. մեղադրելի լինել, 2. մեղադրել, *սպաս ունել(իմ) // տանել (իմ)* – 1.պաշտել, 2. հոգ տանել, *երդումն ուտել* – 1. ավելորդ տեղը երդվել, երդումը դրժել, 2. երդվել, պարտավորվել, *ի կորուստ մտանել* – 1. կորստյան մատնել, 2. կորստյան՝ մահվան վտանգի ենթարկել: Վերախմաստավորված կամ դարձվածային կայուն կապակցություններ. *պնդել զանձն* – 1. ինքն իրեն սիրտ տալ, 2. ինքն իրեն զսպել, ժուժկալել, *ձեռն տալ* – 1. օգնել, 2. զիջել, խոնարհվել, *սպաս առնել* – 1. մեկի կարիքը հոգալ, 2. շողոքորթել:

Բ. *Բայական կայուն կապակցությունների իմաստային (թեմատիկ) խմբերը*: Քրիստոնեական վարդապետությանն առնչվող բայական կայուն կապակցությունների շրջանակներում այս առումով ի հայտ են գալիս մի շարք խմբեր և ենթախմբեր¹¹: Անդրադառնանք դրանց՝ առանձին-առանձին:

¹¹Ընդհանրապես լեզվաբանական գրականության մեջ ըստ այն հանգամանքի, թե որ բնագավառում են ծագել կայուն կապակցությունները, տարբերակվում են հետևյալ խմբերը. 1. գյուղատնտեսության, 2. կենցաղից եկող, 3. Բնության երևույթների, 4. արվեստի, 5. ռազմական, 6. մարդու ֆիզիկական (ֆիզիոլոգիական) վիճակի բնութագրումների մեկնաբանության, 7. կրոնական հավատարիքներից, սնտիապաշտությունից. տե՛ս Աբրահամյան, 1978, 148-151:

1. *Մտավոր-հոգեկան գործողություններ ցույց տվող կայուն կապակցություններ:*

Չարք բարուց զանազանել. *գորումն ի ցորենոյդ ընտրել, անցանել գեր երկնայնոցն իմացութեանց, ընտրել իբրև զարծաթ:*

Բարին խորհել, հավատալ Աստծուն. *զբարի զմտաւ ւածել, հաւատարիմ լինել (իմ), երկնչել (իմ) ի կեղծաւորութենէ որպէս յանհաւատութենէ, նահանգել ի բարիս, ըմպել զբաժակն մարդասիրութեան:*

Ջերմ սիրով համակ(վ)ել. *սրտակաթ առնել, արկանել սէր ընդ ուրուք, գալ զսիրով ուրուք:*

Հույս ունենալ, հաստատակամ լինել. *սպաստան լինել (իմ), կալ պնդակազմ:*

Կեղծավորություն՝ երեսպաշտություն անել. *ըստ մտի այլոց լինել (իմ), աչս առնուլ, սպաս առնել, ընդ միտ մտանել, երդումն ուտել:*

Խրատն անտեսել՝ արհամարհել, հավատը կամ արած լավությունն ուրանալ. *սպախտ առնել զխորհուրդն, առնել ընդ ոտս, անշնորհ առնել, թուլանալ ի հաւատս, մերժել ի բաց կալ ի սուրբ հաւատոյ պարկեշտ կրօնից քրիստոնէութեան:*

Շեղվել ճիշտ ուղուց, չարիք գործել. *ի հրապոյրս ուրուք էլանել, նիւթել զչարիսն:*

Ամբաստանել, նգովել, կորստյան մատնել. *դատախազ լինել (իմ), ըստգիւտ լինել (իմ), ի կորուստ մատնել:*

Ճիշտ ճանապարհից շեղել. *արկանել յուղիղ ճանապարհէ, բառնալ յոյս կենաց, ի պատրանս արկանել // մատուցանել:*

Խրատել, դարձի բերել. *խրատ դնել, յերկիրն բարուք սերմանել, ածել յերկիրդ և ի խրատ, խօսել (իմ) ի խաղաղութիւն // ի հաշտութիւն:*

Ներել, մեղքերին թողություն տալ. *շնորհս առնել, գալ յողորմութիւն:*

Ձղջալ, ապաշխարել. *գալ ի գղջումն:*

Իմաստային տարբեր ենթախմբերի պատկանող մտավոր-հոգեկան գործողություններ ցույց տվող կայուն կապակցությունները

դիտարկենք խոսքաշարում. *Ընտրեսցէ նախ զնոսա իբրև զարծաթ, զի աղտն այրեսցի* (Ագաթ., 324): Որ ի ձեզ տոհմական լիցի՝ զօրաւոր հաւատովք ձեր ի նա՝ *ըմպել ձեզ զբաժակն մարդասիրութեան* զտիչ հրոյն ընտրութեան(ն. տ., 273): Լաւ է յամենայն ժամ *նախանձել ի բարիս* (Բուզ., 66): Եւ զի *զեկն ի գղջումն* յանցուցեալն, յիրաւի կրեաց պատիժ զմահ (Եզն., 74):

2. Առարկայի վիճակն իբրև գործընթաց՝ եղելություն ցոյց տվող կայուն կապակցություններ. *ծնվել, ապրել. գալ ի ծնունդ, սկիզբն առնուլ լինելոյ // կենդանանալոյ // էանալոյ, արև կրել. մահկանացուն կնքել. գալ ի վախճան, անկանել (իմ) յարևել // ընդ մահուամբ, յաշխարհէ ելանել // փոխել, անցանել յաշխարհէ, արձակել // թափել զոգի, վճարել ի կենաց, յաճիւն վախճանել, պակասել ի կենաց, ելանել ի մարմնոյ, մտանել առ Աստուած կենդանի . հարատևել. կալ մնալ յիմիք*: Հմնտ. ինդրո առարկա կայուն կապակցությունները խոսքային միջավայրում. Կամ զլուսին՝ որ ամսոյ ամսոյ հիւժանի, գրեթէ և մեռանի, և ապա *սկիզբն առնու կենդանանալոյ*, զի քեզ զյարութեան օրինակն նկարիցէ (Եզն., 1. Գ, 12): Ապաքէն եթէ կարի շատ յառաջ մատուցեալ ծերացայց, սակայն *ելանելոց եմք ի մարմնոյ* աստի, զի *մտցուք առ Աստուած կենդանի*, որ ոչ ևս ելանիցեմք ի նմանէ (Եղ., V յեղանակ, 101):

Քննարկվող կայուն կապակցությունների իմաստային խմբավորումը սրանով չի ավարտվում. բայական այդօրինակ կառույցներում կան այնպիսի միավորներ, որոնք օժտված են իմաստային մի քանի խմբերում հանդես գալու հնարավորությամբ.

ա) Ֆիզիկական և մտավոր-հոգեկան գործողություններ ցոյց տվող կայուն կապակցություններ. *ժուժկալ լինել (իմ) անձին, պնդել զանձն, գիտել զչափ անձին, զերիցութեան ձեռն դնել ի վերայ ուրուք, լնուլ զձեռն, պատուել որպէս զնշխարս նահատակելոց սրբոց, պաշտօն արկանել, սպաս արկանել // ունել (իմ) // տանել (իմ), զկատարած կենաց հասուցանել, ի կորուստ մատնել, ի չգոյէ*

*ածել ի գոյ, կործանել գտեղիսն Աստուծոյ, աղօթս առնել, երկիր պա-
գանել Աստուծոյ, օրհնութիւնս ի բարձունս առաքել:*

բ) Տարածության մեջ շարժում և մտավոր-հոգեկան գործո-
ղություններ ցույց տվող կայուն կապակցություններ. *ծունր կրկնել,
գալ ի վերայ եկեղեցւոյն:*

գ) Հասարակական կյանքին վերաբերող և մտավոր-հոգեկան
գործողություններ ցույց տվող կայուն կապակցություններ. *խօսել
(իմ) ի խաղաղութիւն // ի հաշտութիւն, բարի առնել, հատուցանել
փոխարէնս բարի փոխանակ չարեացն:*

դ) Հասարակական կյանքին վերաբերող գործողություններ և
առարկայի վիճակն իբրև գործընթաց ցույց տվող կայուն կապակ-
ցություններ. *կնիք առնուլ, օճան առնուլ, վրէժս տալ // լուծանել, ճա-
շակել զաշխարհ, արանց լինել (իմ):*

ե) Մտավոր-հոգեկան գործողություններ և առարկայի վի-
ճակն իբրև գործընթաց ցույց տվող կայուն կապակցություններ. *հաղորդեալ լինել (իմ) ի գործ սրբոցն, ոգի ի ձեռին դնել, զմահն և գ-
կեանս առաջի դնել, յանգիւտ կորուստն յուղարկել (իմ), վաստակ
լինել (իմ), ըմպել զբաժակն մարդասիրութեան, զոգի ի բաց դնել, յո-
գիս ապաստան լինել (իմ), ի խաչ ելանել, զգենուլ բանին զմարմին:*

Դիտարկենք այսօրինակ բայական կայուն կապակցություն-
ների բնագրային հետևյալ օրինակները. Անդադար *աղօթս արարէք*
(Ա. Թեա. Ե. 17): Երազեաց Մովսէս խոնարհ *երկիր եպագ* (Ելք. ԸԴ.
8): Նոյնգունակ *օրհնութիւնս* միշտ *ի բարձունս առաքել* (Յհ. Իմ.): Ն-
մանեալ արարչին ամենեցուն՝ *հատոյց փոխարէնս բարի փոխանակ
չարեացն* (Փարպ., 27): Քանզի ի յարութեան ո՛չ կանայս առնեն և ո՛չ
արանց լինին, այլ այնպէս են (Ղեւ., 97): ԶԱստուած *ի խաչ ելեալ* ի
մարդկանէ քարոզեն (Եղ., 27):

Այսպիսով՝ 1. Հին հայերենում զգալի տեսակարար կշիռ ու-
նեն քրիստոնեական վարդապետությանն առնչվող կայուն կապակ-
ցություններն ընդհանրապես և բայական այդօրինակ միավորները
մասնավորապես:

2. Խնդրո առարկա կայուն կապակցությունները կարելի է ենթարկել իմաստային դասակարգման: Այս առումով բայական կայուն կապակցություններում ի հայտ են գալիս իմաստային տիպեր և խմբեր, որոնք էլ իրենց հերթին ենթարկվում են իմաստային ներքին խմբավորման:

3. Ըստ բաղադրիչների իմաստային կախվածության աստիճանի՝ քրիստոնեական վարդապետությանն առնչվող բայական կայուն կապակցություններում տարբերակվում են վերաիմաստավորում չունեցող (ոչ դարձվածային) և վերաիմաստավորված (դարձվածային) կապակցություններ:

4. Վերաիմաստավորված բայական կայուն կապակցություններն իրենց հերթին լինում են միաբնեռ դարձվածային միավորներ և իդիոմատիկ արտահայտություններ:

5. Բայական կայուն կապակցությունների իմաստային այսօրինակ դասակարգումը չի կարելի բացարձակացնել. միևնույն կայուն կապակցությունը, լինելով բազմիմաստ, կարող է հանդես գալ ոչ միայն իմաստային մեկ, այլև երկու տիպի մեջ:

6. Քննարկվող կայուն կապակցություններում ի հայտ են գալիս հիմնականում մտավոր-հոգեկան գործողություններ և առարկայի վիճակն իբրև եղելություն՝ գործընթաց ցույց տվող միավորներ: Իմաստային (թեմատիկ) այս խմբերին պատկանող կայուն կապակցություններն իրենց հերթին ենթարկվում են իմաստային ներքին դասակարգման: Ըստ որում, միևնույն կայուն կապակցությունը կարող է դրսևորել միաժամանակ իմաստային երկու խմբում հանդես գալու ներունակություն:

7. Քրիստոնեական վարդապետությանն առնչվող գրաբարյան բայական կայուն կապակցությունների դիտարկումը խոսքային միջավայրում հնարավորություն է տալիս բացահայտելու այդ կարգի կառույցների պատկանելությունը գրքային բարձր ոճին, արժևորելու ժողովրդի հոգևոր-մշակութային կյանքում նրանց նշանակությունը, հուզարտահայտչականությունը և, ընդհանրապես,

նման կապակցությունների կարևորությունը սերունդների քրիստոնեական դաստիարակության առումով:

Համառոտագրություններ

Ագաթ. – Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1909:

Բուզ.– Փաստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883:

Եզն. – Եզնկայ Կողբացոյ Բագրեւանդայ եպիսկոպոսի Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826:

Ելք. – Ելք // Աստուածաշունչ մատեան Հին և Նոր կտակարանաց, Հայաստանի Աստուածաշնչային ընկերութիւն, Ե., 1997:

Եղ. – Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Ե., 1957:

Թովմ. Արծ. – Թովմա Արծրունի և Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, Ե., 1985:

Ղեւ. – Ղեւոնդեայ վարդապետի Պատմութիւն, Ս. Պետերբուրգ, 1887:

Յհ. Իմ. – Յովհաննու Իմաստասիրի Օձնեցոյ Մատենագրութիւնք, Վենետիկ, 1833:

Ոսկ. Յհ. – Յովհաննու Ոսկեբերանի Մեկնութիւն աւետարանին Յովհաննու, Պոլիս, 1717:

Փարպ. – Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան, Տփղիս, 1904:

Աստվածաշունչ. համառոտագրությունները՝ ըստ ընդունված կարգի:

Գրականություն

Աբրահամյան Ս. Գ. 1978. , Հայոց լեզու, բառ և խոսք, Ե.:

Բաղիկյան Խ. Գ. 1986. Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Ե.:

Բեղիբյան Պ. Ս. 1973, Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Ե.:

Բեղիբյան Պ. Ս. 1990, Ժամանակակից հայերենի ոչ փոխաբերական կայուն բառակապակցությունները, Ե.:

Խաչատրյան Լ. Ս. 1996, Խոսքիմասային տարաբժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, Ե.:

Համբարձումյան Վ. Գ., 2013, Հովհան Մամիկոնյանի «Տարոնի պատմության» լեզուն և ոճը, Ե.:

Համբարձումյան Վ. Գ., 2019. Լեզվաբանության հիմունքներ, Ե.:

Սուքիասյան Ա. Ս., Գալստյան Ս. Ա 1975, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Ե.:

- Ахманова О. С. 1969. , Словарь лингвистических терминов, М.
Назарян А. Г., 1987. Фразеология современного французского языка, М.
Смит Л. П. 1959. Фразеология английского языка, М.:

Л. Н. Аветисян. Семантические особенности глагольных устойчивых сочетаний, связанных с христианским архимандритством в габаре.- Глагольные устойчивые сочетания (в дальнейшем: УС), связанные с христианским архимандритством, несомненно имеют большой удельный вес в габаре. В данной статье по синхронному анализу рассматриваются вопросы семантики такого рода УС в габаре. Среди глагольных УС, связанных с христианским архимандритством, различаются семантически переобразованные (частично или целостно) или непереосмысленные сочетания характеризующиеся воспроизводимостью.

Семантически переобразованные глагольные УС габара включают: 1. унилатеральные УС, 2. идиомы. Глагольные УС габара, связанные с христианским архимандритством, обладают широкими номинативными возможностями. Они могут быть распределены по тематическим группам. Смысловые особенности древнеармянских глагольных УС, связанных с христианским архимандритством, проявляются в речевой среде и ярко выражают особенности духовной культуры и языкомышления армянского христианина.

L. N. Avetisyan. The semantic specifications of verbal stable compounds relating to the Christian archimandrity in old Armenian.- The verbal stable compounds (therefore: SC) relating to the Christian archimandrity certainly are of considerable number in old Armenian. In the level of old Armenian on synchronic basis the questions of semantics of verbal SC relating to the Christian archimandrity are scrutinized in the present article.

Among verbal SC of Old Armenian relating to the Christian archimandrity semantically transfiguring (partly or fully) or non-metaphorical SC are distinguished. They are characterized with redy reproduction. The semantically transfiguring verbal SC of Old Armenian relating to the Christian archimandrity are include: 1. unilateral SC, 2. idioms. The verbal SC of Old Armenian relating to the Christian archimandrity have wide nominative possibilities. They can be divided due to the thematic groups. The semantic specifications of verbal SC of Old Armenian relating to the Christian archimandrity are expressed in the speech environment and more brightly demonstrate the characteristics of clerical culture and linguothinking of Christian our nation.

ԱՆՁԻ ՀԱՏԿԱՆԻՇ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԲԱՅԱԿԱՆ ԴԱՐՉՎԱԾՍԱՅԻՆ
ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԻՊԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ,
ՌՈՒՍԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

Բանասիր. գիտ. թեկնածու Ս. Ռ. Բաղդասյան

Բանալի բառեր. Կառուցվածքային տիպ, դարձվածային միավոր, բայական բաղադրիչ, երկանդամ և բազմանդամ կառուցվածքներ, գերակայող անդամ:

Ключевые слова: структурный тип, фразеологическая единица, компонент глагола, биномиальные и полиномиальные структуры, превосходящий член.

Key words: structural type, phraseological unit, verb component, binomial and polynomial structures, superior member.

Հոդվածում ուսումնասիրվում են անձի հատկանիշ արտահայտող բայական դարձվածային միավորների կառուցվածքային տիպերը հայերենում, ռուսերենում և անգլերենում:

Դարձվածքները (կամ դարձվածային միավորները) ժողովրդի հոգևոր մշակույթի հարստությունն են և արտահայտում են նրա լեզվամտածողության ինքնատիպությունն ու յուրահատկությունը: Դարձվածքներում իրենց արտահայտությունն են գտել ժողովրդի հարուստ կենսավորձը, նրա պատկերացումները օբյեկտիվ աշխարհի առարկաների և երևույթների մասին, վերաբերմունքը մարդկային հարաբերությունների նկատմամբ: Դարձվածային միավորները խոսքին տալիս են պատկերավորություն, արտահայտչականություն, դիպուկություն և ազատում խոսքը միօրինակությունից, տաղտկալիությունից ու չորությունից:

Գ. Ջահուկյանը «Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները» աշխատության մեջ քննում է դարձվածային միավորը լեզ-

վի շարահյուսական համակարգում՝ նշելով, որ շարահյուսական կապակցության կադապարի մեջ կարող են հանդես գալ ոչ միայն լիմաստ (որոշիչ), այլ նաև ոչ լիմաստ (հարաբերիչ) բառեր, որոնցով ծավալվում ու լրացվում են հոլովական քերականությունների իմաստները»¹: Գ. Ջահուկյանը վերլուծել է ոչ միայն գոյականական և բայական դարձվածքները և այն հատկանիշները, որոնց շնորհիվ դրանք ձևաբանական մակարդակից տեղափոխվում են շարահյուսական մակարդակ, այլ նաև բայական բառակապակցությունները և դրանց դրսևորման տիպերը, գործառույթները, գործող քերականական կարգերը:

Պ. Բեդիրյանը «Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն» աշխատության մեջ գրում է. «Դարձվածքը բառերի կայուն, պատրաստի վերարտադրելի, վերաիմաստավորված կապակցություն է, ուր բաղադրիչ բառերի ինքնուրույնությունը ձևական է, շարահյուսական կապը՝ մթազնաձ»²: Նա քննում է լեզվաբանության այդ ճյուղին առնչվող հարցեր, ուսումնասիրում դարձվածքների բառագիտական և շարահյուսական հիմունքների, դարձվածքների բաղադրիչների իմաստային, կառուցվածքային և քերականական առանձնահատկությունները: Տալով հայերենի դարձվածքների կառուցվածքային տիպերը՝ ուշադրություն է դարձնում նաև դրանց արտահայտման ձևերին գրաբարում, միջին հայերենում և արևմտահայերենում: Համեմատելով տարբեր լեզուների դարձվածքների առանձնահատկությունները, նշում է դրանց նմանություններն ու տարբերությունները:

Խ. Բադիկյանն իր «Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները» աշխատության մեջ նշում է. «Դարձվածի համար ամենակարևոր ու բնութագրող հատկանիշը անմիատարր՝ երկու կամ ավելի բաղադրիչներից կազմված լինելու հանգամանքն է, որի համար էլ չափազանց կարևոր է վերաիմաստավորումը. վերաիմաստավորումը դարձվածի էությունն է, առանց որի ԴՄ-ի գոյություն-

¹ Ջահուկյան 1974, 291 -292:

² Բեդիրյան 1978, 5, 128, 165:

նը անհնար է»³: Նա կատարել է հայերենի դարձվածքների կառուցվածքային վերլուծություն, անդրադարձել վերջիններիս ծագման, առաջացման ու ստուգաբանության հարցերին, ձևաբանական և շարահյուսական առանձնահատկություններին:

Դարձվածային միավորների իմաստաբանության ուսումնասիրությունը հնարավոր չէ առանձնացնել նրանց քերականական կառուցվածքի վերլուծությունից, քանի որ լեզվական միավորի կառուցվածքային ցանկացած էական հակասություն հանգեցնում է նաև իմաստային էական տարբերությունների:

Դիտարկվող երեք լեզուներում՝ հայերենում, ռուսերենում և անգլերենում, բայական դարձվածային միավորներն ամենամեծ թիվն ու գործածության ամենամեծ ոլորտն ունեն: Նրանց կառուցվածքային տիպերում միշտ առկա է բայական բաղադրիչը, որը հանդես է գալիս որպես դարձվածքի գերադաս անդամ: Ե. Գևորգյանը «Հայերենի դարձվածքները» գրքում գրում է. «Բայական դարձվածքները դարձվածքների մյուս տեսակներից տարբերվում են նրանով, որ իրենց կազմում միշտ բայական բաղադրիչ են ունենում: Դա հանդես է գալիս դարձվածքի վերջում և մեծ մասամբ կարող է փոփոխվել ու խոնարհվել բայի եղանակներով ու ժամանակներով»⁴:

Հայերենի բայական դարձվածային միավորների առատության պատճառներից մեկն էլ այն է, որ շատ անվանական դարձվածային միավորներ հնարավորություններ ունեն համալրվելու անորոշ դերբայով և վերածվելու բայականի, օրինակ՝ *չոր / ցամաք հացի կարոտ* («չքավոր») – *չոր / ցամաք հացի կարոտ դառնալ*:

Բայական դարձվածային միավորները կազմվում են երկու հիմնական մասերից՝ անվանական և բայական: Անվանական մասը կարող է բաղկացած լինել մեկ, երկու, երեք և նույնիսկ ավելի բաղադրիչներից, իսկ բայական մասը, որը կառույցի գերադաս անդամն է,

³ Բաղիկյան 1986, 43, 186-222:

⁴ Գևորգյան 1969, 122:

անպայման անորոշ դերբայն է (այդ թվում նաև հարադիր բայ): Բայական դարձվածքի անորոշ դերբայը կարող է ծավալվել տարբեր խոսքի մասերով, և ըստ ծավալման սահմանների էլ՝ բայական դարձվածային միավորները բաժանվում են *երկանդամների* և *բազմանդամների*: Բայական դարձվածքներն, ըստ իրենց բաղադրիչների շարահյուսական փոխհարաբերության և իմաստի կայունության, կարող են լինել *ստորադասական*, *համադասական* և *համաստորադասական*:

1. *Երկանդամ կառույցներ*:

Հայերենի գոյական + անորոշ դերբայ կառույցում գոյականը բայի հետ կապակցության մեջ է մտնում՝ թե՛ ուղիղ և թե՛ թեք ձևերով, թե՛ եզակի և թե՛ հոգնակի թվերով՝ անորոշ դերբայի համար կատարելով շարահյուսական տարբեր պաշտոններ:

Եթե գոյականը դրված է ուղղականով, ապա ենթակայի կամ ուղիղ խնդրի դեր է կատարում: Օր. *գլուխ ունենալ* – 1. Խելոք, գիտակից, հասկացող լինել, 2. Գիտակ՝ ծանոթ լինել, որևէ բան հասկանալ, իմանալ: *Խոտ ուտել* – Անհասկացող, հիմար լինել: *Ածելի լիզել* – Շատ քաջ, խիզախ լինել: *Կայքը կտրել* – Անբարոյական, անբարոյական դառնալ: *Միրտը քարանալ* – Անգութ, անխիղճ լինել: *Միրտ չունենալ* – Անգութ, անխիղճ լինել: *Միրտը կարծրացնել* – Անխիղճ դառնալ, սիրտը պնդացնել: *Կողերը հաշվել* – Նիհար, հյուժված լինել:

Ռուսերենում անձի հատկանիշ արտահայտող երկանդամ դարձվածքներ են հանդիպում անորոշ դերբայ + գոյական կառուցվածքային տիպով: Ռուսերենում, ինչպես նաև անգլերենում, անորոշ դերբայը միշտ նախադաս է լինում: Օր.՝ *Валять дурака* – (IV - իմաստ) Անհասկացող ձևանալ:

Անգլերենում երկանդամ բայական կառույցը հանդիպում է անորոշ դերբայ + ածական տիպով: Օր.՝ *To feel blue* (բառացի՝ կապույտ զգալ) – Տխուր ու թշվառ լինել: *Look / be green* (բառացի՝ երևալ/ լինել կանաչ) – Միամիտ երևալ/լինել, *Turn grey* (բառացի՝ մոխրագույն դառնալ)– Ալեհեր դառնալ; Անորոշ դերբայ + գոյական

(հոգնակի)՝ *Have (got) guts* (բառացի՝ աղիքներ ունենալ) - Վճռական մարդ լինել, ուժեղ բնավորության, կամքի տեր լինել:

2. *Եռանդամ կառույցներ:*

Հայերենում հանդիպում է գոյական + գոյական + անորոշ դերբայ տիպի կառույցը, օր.՝ *գլուխը խելք լինել* – ուշքն ու միտքը վրան լինել, զգաստ վիճակում լինել: Խելոք լինել, որևէ բանից հասկանալ. *գլուխը դուրս գալ* – խելքը կտրել, հասկանալ, խելահաս լինել:

Հայերենում անձի հույզեր արտահայտող եռանդամ բայական դարձվածքներ են հանդիպում գոյական + ածական + անորոշ դերբայ կառուցվածքային տիպով: Նման դարձվածքի հիմքը ածական + անորոշ դերբայն է: Գոյականները կարող են հանդես գալ տարբեր հոլովաձևերով: Օր.՝ *սիրտը քար լինել* - անգույթ՝ անխղճմտանք՝ անզգա լինել. *սիրտը բաց լինել* - անկեղծ՝ պարզասիրտ՝ զվարթ՝ ուրախ լինել:

Հայերենում առկա են նաև ածական + գոյական + անորոշ դերբայ տիպով կազմված եռանդամ դարձվածքներ: Այս դեպքում դարձվածքի հիմքը գոյական + անորոշ դերբայ կապակցությունն է, որին լրացնում է ածականը. կառույցի բացարձակ գերադաս անդամը ետադաս անորոշ դերբայն է: Նման միավորները նույնպես դարձվածային սերտաձուսներ են՝ անտարրալուծելի և անփոփոխելի բաղադրիչներով: Օր.՝ *ոսկի սիրտ ունենալ* - բարի, խղճով լինել. *վատ ասքով նայել* – չարությամբ տրամադրվել, անբարյացակամ լինել. *հաշտ ասքով նայել* – լավ տրամադրվել, բարյացակամ լինել և այլն:

Նմանատիպ կառույցներում համադրվում են ն՝ որակական, ն՝ հարաբերական ածականներ, որոնք հանդես են գալիս որոշյի պաշտոնով, իսկ դրանց գոյական բաղադրիչը կարող է դրվել տարբեր հոլովներով, կատարել շարահյուսական տարբեր պաշտոններ:

Գոյական + գոյական + անորոշ դերբայ կառույցում գոյականը միշտ նախադաս դիրքում է հանդես գալիս. գերադաս անդամը անորոշ դերբայն է, որը հետադաս է, օր. *բերքը քանուն տալ* – եղածը՝ ձեռք բերածը կորցնել, փչացնել. *փորը մեջքին կաշել* – նիհար, հյուժված լինել և այլն:

Հայերենում հանդիպում է նաև հարակատար դերբայ + գոյական + անորոշ դերբայ կառույցը: Անվանական դարձվածքներից շատերը, համալրվելով անորոշ դերբայով, դառնում են բայական դարձվածային միավորներ. օր.՝ *ծեծկած / կոցահարված հավ լինել* – շատ ընկճված լինել. *թրջված հավ լինել* – խեղճացած լինել:

Ռուսերենում հանդիպում են գոյական + նախդիր + գոյական կաղապարով դարձվածային միավորներ, օր. *голова на плечах* – շատ խելոք է:

Ռուսերենում առկա են անորոշ դերբայ + նախդիր + գոյական կառուցվածքային տիպով կազմված եռանդամ դարձվածքներ: Օր.՝ *становиться/ стать/ подниматься на ноги* – ինքնուրույն դառնալ, ոտքի կանգնել; Սովորաբար անորոշ դերբայ + գոյական + գոյական կառույցով են կազմված լինում եռանդամ դարձվածքներ: Օր.՝ *показать товар лицом* – լավ ներկայացնել:

Բազմանդամ բայական կառույցները *անզլերենում* ներկայացված են հետևյալ կառուցվածքային տիպերով՝ *անորոշ դերբայ + ածական + գոյական* (հոգնակի), օրինակ. *wear yellow stockings* (բառացի՝ կրել դեղին գուլպաներ) – (փխբ.) նախանձոտ, խանդոտ. *see pink elephants* (բառացի՝ տեսնել վարդագույն փղեր) – Հարբած լինել:

Անզլերենում հանդիպում են անորոշ դերբայ + (հոդ) ածական + գոյական կաղապարով դարձվածային միավորներ, օր.՝ *have a good / kind heart* (բառացի՝ լավ / բարի սիրտ ունենալ) – բարի, մեծահոգի լինել. *go a grey gate* (բառացի՝ անցնել մոխրագույն դարպասով) – տխուր ու մռայլ լինել. *have a smooth tongue/ have an oily tongue* – պերճախոս լինել, շողոքորթ լինել. *to have a yellow streak* (բառացի՝ դեղին գիծ ունենալ) – (փխբ.) – վախկոտ մարդ լինել:

Այստեղ ևս, ինչպես ռուսերենում, անորոշ դերբայ գերադաս անդամը նախադաս է, իսկ մյուս բաղադրիչներից գոյականը լրացնում է անորոշ դերբային:

3. Քառանդամ կառույցներ:

Լեզուներում հանդիպում են չորս և ավելի բաղադրիչներով կազմված դարձվածային միավորներ: Անձի հատկանիշ արտահայ-

տող բայական քառանդամ և բազմանդամ կառույցները այնքան էլ շատ չեն, որքան եռանդամները հայերենում, ռուսերենում և անգլերենում: Նման կապակցությունները հանդես են գալիս տարբեր կառուցվածքային տիպերով: Այս կառույցների համար նույնպես գերադաս անդամն է անորոշ դերբայը: Հայերենում անորոշ դերբայը վերջադաս է, իսկ ռուսերենում և անգլերենում՝ նախադաս: Օր.՝ *էջի ա-կանջում գուննա փշող* (բրբ.) - ապուշ, հիմար, անտեղյակ. *փորում առյուծի կաթ լինել* - քաջ լինել՝ ձևանալ. *աչք կոխելու չոփ չտալ* (գոհկ.) - շատ ժլատ լինել. *կոպեկի համար արյուն թափել* - չափազանց գծուծ լինել. *մի քոռ կոպեկի խելք չունեցող* - հիմար, անխելք:

Ռուսերենում՝ *быть семи пядей во лбу* - շատ խելացի, ունակ լինել: *дрожать/трястись над каждой копейкой* - շատ ժլատ լինել. *знать где раки зимуют* - խորամանկ, ճարպիկ լինել. *have an old head on young shoulders* - խելացի, իմաստուն լինել. *have a head like a sieve* /բառացի՝ մաղի պես գլուխ ունենալ/ - ցրված, մոռացկոտ մարդ լինել. *have one's heart in the right place* - բարի լինել:

Ռուսերենում հանդիպում են հետևյալ բազմանդամ կառուցվածքային տիպերով բայական դարձվածային միավորներ՝ անորոշ դերբայ + շաղկապ + գոյական + նախդիր + գոյական, օր.՝ *разбираться как свинья в апельсинах* - անփորձ լինել:

Անգլերենում ևս հանդիպում են դերբայ + նախդիր + նախդիր + հոդ + թվական կառուցվածքային տիպով կազմված բազմանդամ դարձվածքներ. օր.՝ *dressed up to the nines* - պճնված լինել. Այսպես նաև՝ անորոշ դերբայ + նախդիր + ածական + գոյական կառույցներ, օր.՝ *be in full dress* - պճնված լինել, անորոշ դերբայ + նախդիր + հոդ + ածական + գոյական, օր.՝ *be in the black mood* (բառացի՝ լինել սև տրամադրության մեջ) - բարկանալ:

Ինչպես նկատում ենք, եթե հայերենում առավել հատուկ են գոյական + անորոշ դերբայ, գոյական + ածական + անորոշ դերբայ, ածական + գոյական + անորոշ դերբայ, հարակատար դերբայ + գոյական + անորոշ դերբայ տիպի կառույցներ, ապա ռուսերենին հատուկ են անորոշ դերբայ + գոյական, գոյական + նախդիր + գոյական, անորոշ

դերբայ + նախդիր + գոյական, անորոշ դերբայ + գոյական + գոյական կառույցները, իսկ անորոշ դերբայ + ածական, անորոշ դերբայ + ածական + գոյական (հոգնակի) կառույցները՝ անգլերենին: Ըստ այսմ՝ կարելի է նշել, որ հիշյալ լեզուներում առկա են ոչ միայն ձևային (բաղադրիչների զուգակցման), այլ նաև իմաստային որոշակի տարբերություններ՝ տիպաբանական զուգադրության մեջ:

Գրականություն

Բաղիկյան Խ. 1985. Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Ե.:

Բեդիրյան Պ. 1978. Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Ե.:

Գևորգյան Ե. 1969. Հայերենի դարձվածքները, Ե.:

Ջահուկյան Գ. Բ. 1974. Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Ե.:

М. Бададян. Структурные типы вербальных фразеологических единиц характеризующие качества человека на армянском, русском и английском.- Глагольные фразеологизмы состоят из двух основных частей: именной и глагольной. Неопределенная производная от глагола может быть разделена на различные части речи, и согласно степени производной глагольные фразеологизмы делятся на биномиальные и полиномиальные структурные типы. Глагольные фразеологизмы в трех рассматриваемых языках - армянском, русском и английском - имеют наибольшее количество и наибольшую область использования. В их структурных типах всегда есть глагольный компонент, который действует как превосходящий член фразы.

M. Badadyan. Structural Types of verbal phraseological Units characterizing a person in Armenian, Russian and English. - Verbal phraseological units are composed of two main parts: nominal and verbal. An indefinite derivative of a verb can be divided into different parts of speech, and according to the extent of the derivative, the verb derivative units are divided into binominal and polynominal structural types. Verbal phraseological units in the considered three languages - Armenian, Russian and English - have the largest number and the largest area of usage. In their structural types, there is always a verb component that acts as a superior member of the phrase.

ՄՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Բանասիր. գիտ. դոկտոր Վ. Գ. Համբարձումյան

vazgengurgeni@mail.ru

hambardzumyanvazgen01@aspu.am

Բանալի բառեր. ստուգաբանություն. բառի նախնական իմաստ. բառի նոր իմաստ. արմատի նոր վերականգնում. ցեղակից լեզուներ. համեմատություն ըստ ձևի և ըստ իմաստի:

Ключевые слова: этимология. новое выделение корня, родственные языки, сравнение по форме и по смыслу.

Key words: etymology. new reconstruction root of a word, cognate languages, comparison according to form and meaning.

Ինչպես ցույց են տալիս հնդեվրոպական լեզուների համեմատական-տիպաբանական նորագույն ուսումնասիրությունները, հայերենին այսօր դարձվում է առավել մեծ ուշադրություն, քան երբևիցե: Հատկապես վերջին տասնամյակներին, մեծապես առաջ են գնացել բառի (արմատի) ստուգաբանությանը վերաբերող աշխատանքները, հնչյունական շատ երևույթներ (օր.՝ հետնալեզվային պայթականների տարբերակային արտացոլումը՝ հե. *k > k / k' / k^h) ներկայումս դիտվում են համակարգի մեջ, և ըստ այդմ տեսական հիմնավորումն ունենում է ավելի մեծ հավաստիություն, վերականգնման համար սահմանվում են հնչյունական նոր օրենքներ, մեծ ուշադրություն է դարձվում նրանց իմաստային (նաև դիցական, առասպելական և այլն) կողմին, անցկացվում են տիպաբանական զուգահեռներ այլ (ոչ հնդեվրոպական) լեզուների հետ:

Ստորև նախ՝ անդրադառնում ենք *այգի* «(խաղողի) աճի միջավայր. այգի» բառի ծագմանը, որ բնիկ է, ունի համեմատելի զուգահեռներ ոչ միայն ցեղակից լեզուներում, այլև հայերենում առհասարակ: Հայերենում նկատելի են (բառ)արմատի հնչյունական և իմաստային տարբերակներ, մի իրողություն, որ բացատրելի է ըստ ժամանակային, տարածքային և գործառական հանգամանքների. նշենք նաև, որ բառի ծագման վերաբերյալ եղել տարբեր փորձեր, որոնք բերվում են մեր այս

քննության ընթացքում: Իսկ մյուս բառ(արմատ)երին՝ *հաւ(անհ)*- «արու-
որձ (գուգընկեր)», *-սկել* «հսկել» և *ա՜նՆ՜Ի* «անատակ, ըմբոստ». այստեղ
անդրադառնում ենք նոր մոտեցմամբ, դրանք ևս բնիկ են՝ ունեն փոքրի-
շատե գուգահեռներ հնդեվրոպական լեզուներում:

1. Հայ. *այգի* < հե. *oi-*ui*(ā)

Հին հայերենում (գրաբարում) *այգի* նշանակում էր միայն «(խա-
ղողի) այգի». հմմտ. ըստ ՆՀԲ-ի՝ «այգի, որ և այգեստան, (լատ.) vinea
«պարտեզ՝ ուր խիտ առ խիտ տնկեալ իցեն որթք *խաղողոյ*, ևս և թզե-
նիք և այլն» (ընդգծումները մերն են- Վ.Հ.)¹: Նույն տեղում «(խաղողի)
այգի» իմաստով բացատրություն ենք գտնում *այգի* բառից կազմված
ձևերում. *այգաւէտ* «ուր իցեն յաւէտ այգիք». ի դեպ՝ ՆՀԲ-ն *այգաւէտ* բա-
ռահողվածի վերջում նշում է հետևյալը. «(օրինակս ինչ՝ վրիպակաւ
գրի, գինաւէտ)». սա ամենևին էլ վրիպակ չէ, այլ հավաստում է, որ *այ-
գի* և *գինի* բառերը նույնիմաստ են, միմյանց փոխարեն գործածվող².
այգեգործ / *այգեգործ*, լատ. vinitor) «գործող այգեաց, այգորդ, մշակ և
պահապան այգոյ», *այգեգործութիւն* / *այգեգործութիւն* (լատ. vineae
cultura) «գործել զայգի, մշակութիւն այգեաց», *այգեկիթք* (իմա՝ *այգե-
կութք*) «կութք կամ կթումն այգեաց, ժամանակ խաղող քաղելոյ կամ
կթելոյ զայգիս», *այգեկութ* «որ կթէ զայգին», *այգեմէջք* «միջին վայր այ-
գեաց, սահմանք և ճանապարհք ընդ մէջ այգեաց», *այգեստան* (*այգես-
տանեայք*, *այգեստանի*) (լատ. vinea) «(խաղողի) այգիներ» (ՆՀԲ-ն չի
տալիս այս բառերի բացատրությունը), *այգեւէտ* [տե՛ս *այգաւէտ*. այս
բառի համար միայն բերվում է օրինակ՝ «(գաւառն ըռշտունեաց) *այգ-
եւէտ* բազմութեամբք յոյժ վայելչացեալ զարդարի». *Արծր*. (= Թովմա
Արծրունի), Ե, 6], *այգեգործ*, *այգեկութ* (տե՛ս *այգեգործ*)³ :

Ինչպես դժվար չէ նկատել, բերված բառերի մի մասին կից
տրվում են լատ. vin- (vinum) «գինի» արմատից բաղադրված ձևեր,

¹ Աւետիքեան, Սիրմելեան, Աւգերեան 1836, 80:

² Աւետիքեան, Սիրմելեան, Աւգերեան 1836, 79:

³ Հովհաննիսյան 2014, 4-9:

հայ. *խաղողի, որթի* և դրանց վերաբերող իմաստի նշումներ, որոնք կողմնակիորեն ապացույց են առաջ քաշվող վարկածի: Նման դեպքերում ՆՀԲ-ի հեղինակները տալիս են բառի (տվյալ դեպքում՝ տերմինի) իմաստաբանական (բառարանագիտական) մեկնաբանություն, մի իրողություն, որ հիմք է համեմատական-ստուգաբանական ամեն մի քննության, և ամեննին պատահական չէ, որ եվրոպացի հայերենագիտ-համեմատաբաններն իրենց աշխատություններում մեծապես հենվում են այդ բառարանի տվյալների վրա:

Աճառյանը ևս, ոչ անկախ նախորդ ուսումնասիրողներից, գտնում է, որ *այգի* բառը սկզբնապես նշանակելիս է եղել «խաղողի պարտեզ» և «խաղողի որթ», որ բաղադրություններում հանդես է գալիս հատկապես *այգե-/այգե- (*այգեյ-), այգա-, այգ-* տարբերակներով (հմմտ. *այգեգործ/այգեգործ, այգաւէտ, այգորդ* և այլն), իսկ բառի ծագման վերաբերյալ գրում է. «բնիկ հայ բառ. հիմնական նշանակությունը «որթ». *ի* դնելով իբր բուսական մասնիկ (հմմտ. *կաղնի, ծիրանի*), արմատը կլինի *այգ-* «խաղող», որ յետոյ կորել է», և բերվում են համեմատելի ձևեր ցեղակից մի շարք լեզուներից:

Այնուհետև, բառի ծագման աղբյուրի վերաբերյալ նշվում է հետևյալը. «Այս բոլորի (իմա՝ հայ. և բերվող ցեղակից լեզուների ձևերի- Վ. Հ.) նախաձևն է հնիս. *oiuā «լեռնային մանր պտուղ՝ մոշի, ելակի պէս. քոլպպտուղ» ընդհանուր նշանակութեամբ: Հայերէնում *oi* տալիս է *այ* (հմմտ. *այտ < oid*) և ըստ օրինի դառնում է *գ*», և նշվում են ցեղակից լեզուներից այլ կարգի ձևերի օրինակներ, «որոնք ծագում են հնիս. *eiuā ձևից»⁴:

Ջահուկյանը, իր հերթին, ոչ անկախ Աճառյանից և Պոկոնուց, գտնում է, որ հայ. *այգի* բառը ծագում է հե. *oiu-ia [ei-] բաղադրությամբ ձևից, այսինքն՝ հայերենի համար արմատ է դիտվում *oiu- ձևը, և գուգահեռներ է բերվում ցեղակից տարբեր լեզուներից (ալավոնա-

⁴ Աճառյան 1971, 166: Նկատենք, որ նախկին փորձերից «ուղիղ մեկնություն» է համարվում է. Լիդենինը:

կան, իտալյան, կելտական, գերմանական, այլև թրակերեն և հունարեն՝ միաժամանակ գտնելով, որ այժի բառում *ի*-ով գոյականից կազմվել է ածականացված գոյական [**-(i)ǵā*]⁵:

Այնուհետև, Գամկրելիձեն և Իվանովը ևս, ելնելով Յու. Պոկոռնու տվյալներից, հայ. այժի բառը բխեցնում են հե. *oiu-iyā արմատից (իմա՝ այգ-էաւ «այգով»). հմմտ. ռուս. ива «ուտենի» (նաև հչեխ. jiva «կարմրածառ, գեղձի, կենի»⁶, «ուտ(են)ի»), սերբ.-խորվաթ. iва «ուտ(են)ի», լիտվ. ievà, լատվ. iēva «թխենի, բեկտենի», այլև լատ. ūva «(խաղողի) ողկույզ», հուն. οἶη, ὄη, ὄα «սնձենի, արջածառ»(< *oiua) ձևերը⁷:

Նկատենք, որ այս համեմատությունը հեղինակներն անցկացնում են «բուսական աշխարհ. ծառեր» իմաստային (թեմատիկ) խմբի միավորներից «կարմրածառ, գեղձի, կենի» տեսակին անդրադառնալիս⁸:

Սակայն ավելի իրական կլիներ հայ. այժի բառի ծագումը քննել «բուսական աշխարհ. մշակաբույսեր և խոտաբույսեր» իմաստային (թեմատիկ) խմբի, մասնավորապես «խաղող» և «գինի» ենթախմբի մեջ⁹: Այս դեպքում, կարծում ենք, կունենանք բառի ծագումնային ճիշտ բացատրություն, քան որ եղել են փորձեր նախկինում (առավելապես հիմնված Է. Լիդենի ստուգաբանության վրա):

Նոր տվյալների համաձայն՝ «գինի» ընդհանուր իմաստը կապվում է հե. *(e/o)ǵno- ձևի հետ. հմմտ. իեթ. uǵana- «գինի», սեպ.-լուվ. uiniǵant- «գինի», հիեթ.-լուվ. wiana- «գինի» (< հե. *ui^[o]no-), այլև միկ.-հուն. wo-no-«գինի», հուն. (հմմ.) οἶοψ «գինի» (< հե. *uoǵno-). հմմտ. հայ. զինի «գինի» (< հե. *uoǵiom), արբ. vēnē «գինի» (< հե. *uoǵnā-) և այլն¹⁰:

⁵ Ջահուկյան 1987, 121, 231: Ջահուկյան 2010, էջ 48 (հե. վերականգնված արմատի նշանակումը բառարանում աղավաղված է):

⁶ Թարգմանությունն ըստ Ա. Ղարիբյանի «Ռուս-հայերեն բառարանի». էջ 1227:

⁷ Гамкредидзе, Иванов 1984, 629:

⁸ Гамкредидзе, Иванов 1984, 628-631:

⁹ Հմմտ. Гамкредидзе, Иванов 1984, 647-655:

¹⁰ Гамкредидзе, Иванов 1984, 647:

Համեմատություն է անցկացվում նաև մյուս հնդեվրոպական, այլև առաջավորասիական լեզուների տվյալների հետ՝ մասնավոր (իմա՝ *wajn-) նախաձևի վերականգնումով), միաժամանակ գտնում են, որ «գինի» անվանումը, այսպես կոչված, «տեղաշարժական (միգրացիոն) տերմին» է՝ լինելով բուն հնդեվրոպական բառ (դա է թույլ տալիս արմատի *e/o/ø (զրո) հերթագայությունը)¹¹:

Հայտնի է, որ հե. * u(e/o)no- ձևի պարզ *uei-/*ui- տարբերակային արմատն առհասարակ ունի «հյուսել, ռոբրել», «հյուսել, գործել» իմաստները (հմմտ. լատ. uieō «կապել», «հյուսել», սլավ. viti «հյուսել» և այլն): Եվ ըստ այդմ՝ գտնում են, որ հնդեվրոպական բարբառներում տարբերակային այդ արմատների հիման վրա երևան են գալիս տարբեր կարգի մասնիկներով նոր կազմություններ (իրոք, եթե նկատի ունենանք նաև հայերենի տվյալները).

1) հե. *-t^[h]i- մասնիկով՝ *u(e)ı-t^[h]i-. հմմտ. լատ. uītus «խաղողի որթ», ավեստ. vaēiti- «ուռ(են)ի», «ուռենու ճյուղ՝ շիվ», լիտվ. vytis «ուռենու ճյուղ՝ շիվ» (հմմտ. žil-vitis «ոյուրաթեք ուռի», «որթատունկ»), սլավ. vitī «հյուսվածք, գործք», սերբ.-խորվ. pāviti «որթատունկ», հինդ. féith «ուռ(են)ի», վալլ. gwden «կապ. հանգույց» և այլն. հմմտ. (ըստ իս) հայ. (սեռ. հոլ.) n-(p)-թ(h) (< *np-թ(h). p-ի հետ կապված դժվարությամբ հանդերձ),

2) հե. *-t^[h]u- մասնիկով՝ u(e/o)i-t^[h]u-. հմմտ. հուն. ἵτυς «ուռ(են)ի» (էոլ. Fίτυς «ուռ(են)ի»), լատ. uitus «անվահեց», պրուս. witwan «ուռ(են)ի», apewitwo «(նշտարա-տե-րև) ուռի», հսլավ. větvī «ճյուղ՝ շիվ» և այլն. հմմտ. հայ. (սեռ. հոլ.) n-(p)-թ(nj) (< *np-թ(nj)).

3) հե. *n- մասնիկով՝ uı-n-. հմմտ. հսլավ. věničī «(ծաղկե) պսակ», սերբ.-խորվ. vejènac, չեխ. věnec, vínek, լիտվ. vainikas «(ծաղկե)պսակ», «(դափնե)պսակ» և այլն. հմմտ. հայ. գհ-ն-(h) «(խաղողի եռ եկած) հյութ. գինի»,

¹¹ Гамкрелидзе, Иванов 1984, 648:

4) արթեմատիկ/թեմատիկ *-o- / *-ā կազմություններ՝ **ue/o*)-o-/-a. հմմտ. հուն. *ύήν* «որթ», հինդկ. *vayá* «ճյուղ, շիվ», հուլավ. *věja* «ճյուղ», լատվ. *vija* «(հյուսկեն) ցանկապատ», հիոլ. *fé* «շյուղ, ճաղ. շիվ» (հմմտ. վալլ. *gwial-en* «ճյուղ, ոստ, ուղեշ») և այլն¹²:

Ըստ այսմ¹³ հե. **uei-/*yi-* արմատի^a «հյուսել, ոլորել», «հյուսել, գործել» իմաստները հիմք են «(խաղողի) որթ», «գինի» նախնական իմաստով նշանակման^a «ոլոր(վ)ել», «փաթաթ(վ)ել» հատկանիշով, այլ կերպ ասած^a բույսի անվանումը հիմնված է իր հատկանիշի վրա (հմմտ. *անեւծ//անձիւծ* «մոնչացող»):

Uj(qh) - հիոլ. *eo* «կարմրածառ, գեղձի, կենի»¹³, վալլ. *ywen*, հկոռն. *hiuin*, բրետ. *ivin*, գալլ. *ivo-* «կարմրածառ, գեղձի, կենի» (< հե.**e₁- / *o₁-* «կարմրածառ, գեղձի, կենի»)). և ըստ այդմ էլ ունենում ենք հայ. այ- < *Ñ*». **e₁-/*o₁-* §կարմրածառ. գեղձի, կենի¹⁴:

Եղած փաստերի համալրումը և նորի հետ համադրությունը ցույց են տալիս, որ պետք է ընդունել ոչ թե **oiu-ǵā*, այլ **oi-ǵā* տիպի առանձնացում, որպիսով հատկանշվում է հետևյալը. 1) ունենում ենք ածանցման փոխարեն բառաբարդմամբ կազմություն¹⁵, 2) **-ǵā-* ն ղիտում ենք առանձին արմատ, որից էլ, ըստ այսմ, ծագում է հայ. *qh-* (< **qh-*) բաղադրիչը, այլն՝ *qh-նի* («որթատունկի պտղից ստացվող հյութ», «գինի»), *qh (qhhh)* «մի տեսակ ծառ»: Հմմտ. *qhնի* - հիոլ. *fin*, վալլ. *gwin* «գինի» < հե.* *ueino-*)¹⁶, **qh* (< **q/h*), որթ(?) «խաղողի) որթ» - հիոլ. *feith* «(մազա-)թել», վալլ. *gwden* «կապ, հանգույց».

¹² Гамкрелидзе, Иванов 1984, 649-650: Այս 4-րդ տիպի համար հմմտ. հայ. *qh* (նոր գրականում՝ *qhhh*) «մի տեսակ ծառ՝ բազմակուտակ ասեղնաձև փշատերև, մշտադալար, կեղևը մոխրագույն և թելանման շերտիկներով անջատվող» (< **vito-*, **voito*). ստուգաբանությունը՝ Է. Լիդենի (հոդվածը՝ “Indogermanische Forschungen” հանդեսում). Աճառյան, 1971, հ. 1, 61, նաև 554: Հարությունյան, 1983, էջ 50-57:

¹³ Թարգմանությունն ըստ Ա.Ղարիբյանի «Ռուս-հայերեն բառարանի», էջ 1227:

¹⁴ Гамкрелидзе, Иванов 1984, 629, 631, 867: Հմմտ. Туманян, 1974, 194:

¹⁵ Սովորաբար **-iÁā* բաղադրիչը ղիտվում է ածանց: Ջահուկյան 1987. 231:

¹⁶ Гамкрелидзе, Иванов 1984, 647¹¹:

հմմտ. հայ. **գվհնհ* «(փաթաթվող) բույս», «որթ», (ավելի ուշ) «գինի», լատ. *uītis* «(խաղողի) որթ»¹⁷, *gh* - հինդկ. *váyati* «հյուսել», հայավ. *viti* «հյուսել», հուն. ἴτεα «ուռ(են)ի» և այլն:

Այնուհետև, Գ. Ջահուկյանը հնդեվրոպական արմատների ցանկում տալիս է հայ. *որթ* «խաղողի տունկ» (< հե. **ort-* [**ortho-*], իսկ առանձին դիտարկումներում նշում է, որ *որթ* «խաղողի տունկ, խաղող» բառը ալբ. *hardi* «որթ» բառի հետ համեմատում է Պետերսենը, իսկ Պոկոռնին բերում է ոչ միայն այդ, այլև Պետերսոնի ստուգաբանությունը, այն է՝ համեմատել հուն. *πιτοθος* «ծիլ, բողբոջ, ընձյուղ» ձևի հետ՝ բխեցնելով հե. **perth-* արմատից, այլև նկատում է հետևյալը. «Աճառյանը (տրվում է հղում.- Վ. Հ.) գերադասում է ՆՀԲ-ից եկող մեկնությունը՝ *որթ*-ը կապելով *որթ* «հորթ» բառի հետ (հմմտ. *երինջ* «մեծ հորթ» և բրբռ. «խաղողի որթի մատ»): Եթե վերջինս ճիշտ է, ապա թերևս հայ. և հուն. բառերը պետք է դնել **per-* «ծնել» արմատի տակ, որից հայ. *որթ* «հորթ»¹⁸: Թերևս ավելի հավանական է հայ. որթ «խաղողի տունկ, խաղող» բառը բխեցնել հե. **u(e)₁-t^[h]i-* արմատից, որի դեպքում, հավանաբար, միակ դժվարությունը կարող է հարուցել հե. **₁* > հայ. *ր* անցումը. հմմտ. լատ. *uītis* «խաղողի որթ», ավեստ. *vaēiti* «ուռի», «ուռենու շիվ», հիոլ. *féith* «մազ, մազի թել», վալլ. *gwden* «կապ, հանգույց», սլավ. *viti* «գործք» և այլն. հմմտ. հայ. *gh-նի* (< **գվհ-նի*) - միոլ. *fé* «շյուղ, ճաղ. շիվ», վալլ. *gwial-en* «ճյուղ, ոստ, ուղեշ»¹⁹: Այս իմաստը պահպանվել է նաև հայերենի ներկայիս բարբառներում²⁰:

Ըստ այսմ՝ հայ. *ghնի* բառի ստուգաբանությունը, եթե հաշվի ենք առնում նորագույն տվյալները, այլ ուղղությամբ է գնում, իսկ

¹⁷ Հմմտ. Гамкрелидзе, Иванов 1984., 650:

¹⁸ Ջահուկյան 1987, 141, նաև 184:

¹⁹ Гамкрелидзе, . Иванов 1984, 650:

²⁰ Հայերենի որոշ բարբառներում (Աշտ., Երև. և այլն) այգի (բրբռ. իքի) նշանակում է միայն «(խաղողի) այգի», ի տարբերության մյուս տեսակի պտղատու ծառերի՝ խնձորի, ծիրանի և այլն այգիների:

ցեղակից լեզուների (հին հնդկերեն, հունարեն, սլավոններեն, լատիներեն և այլն) ձևերը, ինչպես նաև իմաստային հնագույն և վերջինի՝ հետագա զարգացումները դրան լիովին նպաստում են:

Ուստի *այգի* բառի *-գի* մասը նախնական իմաստով նշանակում է «ոլոր(վ)ել», «փաթաթ(վ)ել» հմմտ. ռուս. *вить* «հյուսել, ոլորել և այլն», *виться* «պտտվել, փաթաթվել և այլն» [թերևս հմմտ. բնասողծ.] *витазь* (< *вит-язь*) «ըյուցազն, քաջամարտիկ» ?]. հե. *g > հայ. *վ* անցումը սովորական է. հե. **uet*'- («ջուր») > գետ «ջուր» (հմմտ. ռուս. *вода* «ջուր» և այլն), հե. **uel*- («պատառել» «վնասել. սպանել») > *գայլ* «պատառող. գայլ» (հմմտ. ռուս. *волк* «գայլ»), հե. **uoino*- > *գինի* «(խաղողի քացախացված) հեղուկ՝ հյութ. գինի», հե. **uit*'- > հայ. *գէտ* (**գէյտ*) «գիտեմ. գիտենալ» (հմմտ. ռուս. *ведать* «գիտենալ. իմանալ») և այլն. *գինի* - հիռլ. *fin*, կիմր. *gwin* (<հե. **uei*-, **ueiə*- «ծալել, ոլորել (որթատունկը)»²¹,

Այնուհետև, *այ(գի)* - հիռլ. *eo* «կարմրածառ, գեղձի, կենի», վալլ. *ywen*, հկոռն. *hiuin*, բրետ. *ivin*, գալլ. *ivo*- «կարմրածառ, գեղձի, կենի» (< հե. **e*₁- / **o*₁- «կարմրածառ, գեղձի, կենի») ²²: Այս դեպքում նույնպես մենք ունենք բոլորովին այլ մոտեցում, գտնում ենք, որ ունենք հայ. *այ* < հե. **e*₁- / **o*₁- «կարմրածառ, գեղձի, կենի»:

2. Հայ. *հալ(անի)*- < **g*^[h]*ab*^[h]-

Բառարանները *հալանի* «արու. որձ (զուգընկեր)» բառը դնում են առանձին, քան *հալան* «համոզում, հաճություն» բառը, որի ծագման վերաբերյալ Մեյերի (ոչ անկախ Ս. Տերվիշյանից) հայտնած կարծիքը Հյուբշմանը «կեղծ է համարում»: Եվ իրոք, հավանական է, որ դրանք լինեն տարբեր՝ համանուն արմատներ, թեև Աճառյանը, առանձին բերելով հանդերձ, այնուամենայնիվ, փորձում է դրանց միջև կապ տեսնել՝ նույնացնել, այնուհետև՝ Աճառյանը բերում է նաև *հալ*- արմատից

²¹ *St' u* Туманян 1974, 194-195:

²² Гамкрелидзе, Иванов 1984, 629, 631, 867: Туманян 1974, 194:

կազմված ձևեր, որոնք հին մատենագրության մեջ ավանդված են. *հաւանի* «անասունների արուն». «Ո՞ր մատակ առիւծ զիր *հաւանին* ի սպանումն մատնէ» (*Ոսկ. Հերովդ.*, էջ 617). ընդ որում Աճառյանը ավելացնում է հուն. ἄρρην «արու». ուստի բառի արմատն է *հաւան*: Նշվում է նաև, որ Ոսկեբերանի մոտ կա «*հաւանընկեր* «զուգակից, ամուլակից» բառը, որ ծագում է *հաւան* արմատից, ուստի թերևս այս բառն էլ բուն նշանակում է «ընկեր» և ծագում է նույն արմատից»²³:

Հաւան «համոզում, հաճություն». ըստ Աճառյանի՝ «անստույգ բառ», որ հայ մատենագրության մեջ ունի բազմապիսի ձևերով գործածություն՝ *հաւանիլ*, *հաւանեցուցանել* (*հաւանել*), *հաւանագոյն*, *հաւանընկերք*, *հաւանութիւն*, *անհաւան*, *դիրահաւան* և այլն: Դրանցից *հաւանընկերք*-ը վկայաբերված է ոչ միայն, ինչպես վերը նշվեց, Ոսկեբերանից, այլև Բարսեղ Կեսարացու «Վեցօրեայք»-ից²⁴:

Ջահուկյանի՝ հետազայում բառարանում հայտնաձև կարծիքն այդ բառերի ծագման վերաբերյալ թեական է կամ բացասական. «*հաւան* «հավանություն, հավանող. թերևս փոխառություն իրանական աղբյուրից, բայց բուն աղբյուրը չի հավաստված», «*հաւանի* «արու, որձ (կամ ընկեր): Ծագումն անհայտ է (իրանական)»²⁵: Իսկ «Հայոց լեզվի պատմություն» գրքում (էջ 113), օրինակ, բերվում է *հաւան(իւ)*, որ ծագած է համարվում հե. *Hauə- (*au-) արմատից:

Նույն (կամ նույնարմատ) բառի տարբեր իմաստների հիման վրա բառարանում առանձին-առանձին արմատ համարելը վերանայելի է, և ըստ այդմ՝ դրանցից *հաւան*-ի ծագման վերաբերյալ կարծիքը (քանի որ «կեղծ է համարվում»)՝ անընդունելի է, և այդ ամենը՝ դրանց նախնական, ընդհանուր իմաստի նկատառումով. դա «սիրտ՝ սիրային կապվածության, հաճության» իմաստն է, որ պարզվում է տվյալ

²³ Աճառեան, 1977, 69: Առաջ անցնելով նկատենք, որի Ջահուկյանը հետևում է Մեյլի կարծիքին՝ շարունակելով այն կապել հե. *au- (*av-) արմատի հետ: Джаукян, 1967 241: Ջահուկյան, 1987 113, 218 և այլն):

²⁴ Ջահուկյան 1987, 68:

²⁵ Ջահուկյան 2010, 453-454:

դեպքում հայերենի և հնդեվրոպական մյուս լեզուների հնարավոր տվյալների համեմատությունից: Ըստ այդմ՝ դրանցում ամենանախնականը «բոնել - ունենալ, առնել, ուզել» իմաստն է, որ գտնում ենք ցեղակից լեզուներից մի քանիսում, այնինչ գրավոր հայերենում այն, ինչպես երևում է, ինչ-որ չափով փոփոխվել է, նույնիսկ կիրառության ոլորտների տարբերությամբ պայմանավորված՝ առանձնացվել (հմմտ. «համոզում, հաճություն» և «արու. ընկեր»):

Այնուհետև, նախագրային հայերենից ունենք (Խորենացու բնագրով պահպանված), այսպես կոչված, միջանկյալ՝ «համաձայն լինել. մի խոսքի գալ» իմաստի օրինակ («Ե՛կ *հաւանեաց* բանից աչագեղոյ դստերս Ալանաց»): աղջկա ոչ միայն «գեղեցիկ», այլև «հոժար» հատկանիշներ են իմաստային հիմքը առևանգման և ամուսնության. հմմտ. ընդհանուր հնդեվրոպական իմաստաբանություն՝ «բոնել - ունենալ, առնել, ուզել»:

Ուստի հայ. *հաւան* և *հաւանի* ձևով հայտնի բառերի *հաւ* արմատը բացատրելի է իբրև բնիկ բառապաշարի միավորի հիմք. հմմտ. հայ. *հաւ*, հինդկ. *gábhasti* «ձեռք», լատ. *habeō* «ունենալ», *inhibeō* («բռնած պահել. ձեռքից բաց չթողնել»), հիբլ. *gaibid* «բռնում է», «առնում է. վերցնում է», գոթ. *gabei* «ունեցվածք. հարստություն», գերմ. *haben* «ունենալ», անգլ. *have* «ունենալ» և այլն (< հե. *g^[h]ab^[h]-)²⁶: Հայերենում հետնալեզվային ձայնեղի անցումը հազագայինի հնչյունափոխական նույն երևույթի արտացոլումն է, ինչ լատիներենում, գերմաներենում և այլն:

3. Հայ. -*սկել* «հսկել» < հե. *sek'- / *sk'-

Հայ. *սկել* «տքնել. արթուն մնալ և ուշադիր հսկել», որից՝ *հսկել* «հետևել, հսկել» ըստ Աճառյանի՝ «անստույգ բառ»: Ընդուն-

²⁶ Հմմտ. Гамкрелидзе, Иванов 1984, 146, 289:

ված է հայ. *հսկել*-ը առնչել *սկել*-ին, այսինքն՝ *հ*-ն համարել նախահավելված²⁷ :

Ջահուկյանը «Հայոց լեզվի պատմություն» գրքում (էջ 314-315) բառն առնչում է իւեթ. սձկ- «տեսնել», հսձկ- Տսպասել՝ ձևերին (թեականով՝ իբրև բաղարկություն): Իսկ բառարանում *հսկել*-ը ուղղակիորեն հանգեցվում է *սկել* «արթուն մնալ, չքնել, ուշադիր լինել, հսկել»ձևին, գրելով՝ թերևս փոխառություն իւեթ. հսձկ «սպասել» բառից²⁸ :

Բառի փոխառությունն լինելը առարկելի է, քանի որ նկատի չեն առնված, նախ՝ չի լուծվում իւեթ. *ս*-ի հարցը, այլև՝ պարզություն չի մտցնում «բաղարկություն» համարելը, այնուհետև իմաստային կողմը դիտվում է ավելի շուտ հետին, քան բուն նախնական ընդգրկման մեջ (օր.՝ ավեստերենի տվյալը, որն այս դեպքում կարևոր է): Հմմտ. ավեստ. *vohuna-zga* (*spā*) «շուն՝ վարժեցված արյան» - հայ. *արալէզ* [**ար*-(*իւն* <**esr*), *լէզ* (*լիզ-ուլ* (< հե. **leig* 'հ- «լիզել» (?), «լիզել. ընդունել»)], որ կարող է կռվան հանդիսանալ մի կողմից՝ հայ. *սկել*-ի ստուգաբանության («արյան սովոր՝ վարժեցված շան) հսկել», իսկ մյուս կողմից՝ հայ. *սկունդ* (*սկ-ունդ*) «շուն. շնիկ» բառն ավելի հավաստի ծագում վերագրելու համար, իմաստային այլ համատեքստում քննելու առումով: Հայ. *արալէզ* -ը իրավամբ համարվում է «ժողովրդական ստուգաբանություն» (արդյունք ոչ գիտական մեկնաբանության), *սկունդ*-ը՝ թեականով (տե՛ս ՀՄԲ, էջ 83, 684): Վերջինիս նոր տվյալների հիման վրա ստուգաբանության, ըստ այդմ՝ վերանայման հարցը այլ առիթի է, քան որ այստեղ շոշափվեց:

Ավելի իրական կլինի այն, եթե ընդունենք, որ հայ. *սկ*- [*սկ-ել*, (h)*սկ-այ*, *սկ-ունդ* և այլն] արմատը բնիկ է, ծագում է հե. **sek'* - / **sk'*- լծորդական արմատից. հմմտ հինդկ. *sájati* «մոտ է գտնվում. կից է», միռլ. *sén* «ծուղակ. թակարդ», լիտվ. *ségti* «մոտ գտնվել», այլև ա-

²⁷ Աճառյան 1979, 227: Մալխասեանց 1944, 141: Մալխասեանց 1945, 228:

²⁸ Ջահուկյան 2010, 683:

վեստ. *vohuna-zga* (*spā*) §2ուն՝ վարժեցված արյան՝ (տե՛ս Դ.-ՊԵ., 1984, էջ 155):

Հայերենի այս տվյալը նախ՝ լրացնում է հե. արմատի համար վերը բերված ցեղակից լեզուների շարքը, այնուհետև՝ հայ. *շուն-սկունդ-արալեզ* կապը, իմաստի առումով, իր նախնականության մեջ կարող է ստանալ նոր մեկնաբանության և ըստ այդմ՝ առավել հավանական բնութագիր:

4. Հայ. *êr̥³Ñ³Ī < Ñ̃*». *(s)t^(h)aHi-

Հայ. *ստահակ* «անառակ, ըմբոստ». բառն ունի Մեղրեցին՝ «*Ստահակ* - անառակ, անիրաւ, ըմբոստ»²⁹: Ըստ Աճառյանի՝ «Թերևս փոխառյալ իրան. *stāhak ձևից. սրա հետ հմմտ. պիլ. *vistāxv* < հարս. **vistāhuva*, զնդ. *vistāka* > հայ. *վստահ*, կազմված *stak* «դեմ կանցնել» արմատից^a՝ *vi-* նախդիրով: Առանց նախդիրի ունինք պիլ. *staxmak*, զնդ. *staxra* «ամուր, հաստատ», և հատկապես *ստահակ* բառի համաձայն՝ պրս. *ustāx* «հանդուզն» (Horn. Grdr. § 920 [= Հռոնի «Հիմունքներ»-ի պարագրաֆը.- Վ.Հ]), որ դժբախտաբար չի վկայված»³⁰: Աճառյանի քննությունը թեական է, իրանական ձևերի մի մասը նշվում է աստղանիշով, որ իջեցնում է մեկնաբանության հավաստիությունը:

Այնուհետև՝ Ջահուկյանը «Հայոց լեզվի պատմություն» գրքում (էջ 544) *ստահակ* բառը բերում է իբրև իրանական փոխառություն (< **stāhvak*. հմմտ. մպրսկ. *vi-stāxv* «վստահ»)»³¹: Գրեթե նույնը գտնում ենք հեղինակի բառարանում (իրան. **stāhak*) որ նույնն է, ինչ Աճառյանի մեկնաբանությունը³²:

Նման պարագայում ստուգաբանությունը վերանայելի է: Նախ՝ նոր փաստերի ընդգրկումը հուշում է, որ բառի «անառակ, անիրավ,

²⁹ Երեմիա Մեղրեցի 1975, 293:

³⁰ Աճառյան 1971, 268:

³¹ Ջահուկյան 1987 այլև 547, 576:

³² Ջահուկյան 2010, 693:

ըմբոստ» իմաստները հետին են, որ հայերենում ավանդաբար բերվում են տարբեր գրավոր աղբյուրների հիման վրա, իսկ նախնականը, կարելի է մտածել, որ «գող. գողանալ. թալանել» իմաստը պիտի լինի, որ առանձնացվում է հնդեվրոպական մեծ թվով լեզուների օրինակով: Եվ ըստ այդմ՝ հայ. *ստահակ* բառի արմատն է *ստահ-*, իսկ *-ակ-*ը ածանց է, այն ծագում է հե. *(s)t^(h)aHi- «գողանալ», «թաքցնել», «գող» արմատից. հմմտ. իւեթ. *taja-* «գողություն անել, գողանալ», (եգ. 3-րդ դ.) *ta-ja-az-zi, ta-a-i-iz-zi* «գողության է անում», «գողանում է», *tajazzi* «գողություն», հինդկ. (s)tāyú «գող», *stéyam* «գողություն», *stená* «գող», ավեստ. *tāyu-* «գող», *tāya-* «գողություն», հուն. *τητόμοι* «գրկվում եմ. ունեմ կարիք», հիոլ. *táid* «գող», հայավ. *tatī* «գող», *tajiti* «թաքցնել», «գաղտնի պահել», ռուս. *тайть* և այլն³³:

Իմաստի առումով հայերենում տեղի է ունեցել զգալի փոփոխություն, և դա միանգամայն բնական է, որ այլ բան չէ, քան լեզվի բովանդակության պլանի (բառիմաստի) տեղաշարժի վկայություն:

Գրականություն

- Աճառեան Հ., 1971. Հայերէն արմատական բառարան, հ. 1, Ե.:
 Աճառեան Հ., 1977. Հայերէն արմատական բառարան, հ. 3, Ե.:
 Աճառեան Հ., 1979. Հայերէն արմատական բառարան, հ. 4, Ե.:
 Աւետիքեան Գ., Միրմիւղեան Խ., Աւգերեան Մ., 1836. Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. 1, Վենետիկ:
 Երեմիա Մեղրեցի, 1975. Բառգիրք հայոց, Ե.:
 Հարությունյան Լ. Վ., 1983, Քո շրջապատի ծանրերը, Ե.:
 Հովհաննիսյան Լ. Շ. 2014, Գրաբարի «խաղող» և «զինի» բառերի շուրջ // «Լեզու և լեզվաբանություն», 1-2:
 Ղարիբյան Ա. Ս., 1982, Ռուս-հայերեն բառարան, Ե. «Հայաստան» հրատ.:
 Մալխասեանց Ստ., 1944. Հայերէն բացատրական բառարան, հ. 3, Ե.:

³³ Հմմտ. Pokorny 1959, 1010: Гамкрелидзе, Ивановяв 1984, 748:

Մալխասեանց Ստ., 1945. Հայերէն բացատրական բառարան, հ. 4, Ե.:
Ջահուկյան Գ.Բ., 1987. Հայոց լեզվի պատմություն. նախազրային
ժամանակաշրջան, Ե.:

Ջահուկյան Գ. Բ., 2010. Հայերէն ստուգաբանական բառարան, Ե.:

Гамкрелидзе Т. В., Иванов Вяч. Вс., 1984. Индоевропейский язык и индоевропейцы: Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры, II, Тбилиси.

Джаукян Г. Б., 1967. Очерки по истории дописьменного периода армянского языка, Ереван:

Туманян Э. Г., 1974. Структура индоевропейских имен в армянском языке, М.:

Pokorny J., 1959. Indogermanisches etymologisches Wörterbuch, I Band, Bern-München.

В. Г. Амбарцумян. Этимологические заметки. - В статье дается этимология следующих слов, с корнем индоевропейского происхождения: *այգի* [aygi] ‘сад; виноградник’ < IE *oi- υ i(ā). *հաւ(աւ)*- [haw(an)] ‘приятный, согласный’ < IE *g^[h]ab^[h]-, *սկիզ* [skel] ‘проявлять бдительность; следовать’ < ht.*sek’- / *sk’- .

V. G. Hambardzumyan. Etymological review. The paper sets forth the etymology of the following words of Indo-European origin: *այգի* [aygi] ‘garden; vineyard’ < IE *oi- υ i(ā). *հաւ(աւ)*- [haw(an)] ‘like; agreeable’ < IE *g^[h]ab^[h]-, *սկիզ* [skel] ‘guard; keep watch over’ < IE .*sek’- / *sk’- .

ԲԱՐԲԱՌԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔԸ

Հայերենագիտության կարևորագույն ճյուղերից մեկը՝ բարբառագիտությունը, մշտապես եղել է ինչպես հայ և օտարազգի բազմաթիվ ուսումնասիրողների, այնպես էլ ՀՀ ԳԱԱ Ն. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ուշադրության կենտրոնում: Հայ լեզվաբանության երախտավորներ Ն. Աճառյանի, Ա. Ղարիբյանի, Է. Աղայանի, Գ. Ջահուկյանի և այլոց գիտական մեծ վաստակի զգալի մասն են կազմում բարբառագիտական աշխատանքները:

Այսօր էլ շարունակում են արդիական մնալ հայերենի առանձին բարբառների համաժամանակյա և տարաժամանակյա քննության, նրանց մերձավոր խոսվածքների, բարբառների և բարբառային խմբերի համեմատական և պատմական ուսումնասիրության, բառապաշարի շերտերի, իմաստային խմբերի տարածագործառական բնութագրման, բարբառային հատկանիշների և զուգաբանությունների տարածման, ինչպես նաև հարակից մյուս հարցերը:

Լեզվի ինստիտուտն իր գոյության յոթուկես տասնամյակներում հսկայածավալ աշխատանք է կատարել հայերենի բարբառների ուսումնասիրության բնագավառում, սակայն դեռևս չկա այն համապարփակ աշխատանքը, որն ընդգրկուն ձևով ներկայացնի մեր երկրի տարածքի արդի ողջ բարբառային համապատկերը: Հենց այս հանգամանքը հաշվի առնելով՝ ինստիտուտի բարբառագիտության բաժինը Հայաստանի բարբառային միավորների և հատկանիշների տարածման արդի պատկերի ձևավորման, բարբառային քարտեզների կազմման նպատակով իրականացնում է «Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր» համալիր ծրագիրը:

Հետազոտությունը, որի առաջին փուլը կատարվել է 2013-2015 թթ. ինստիտուտի տնօրեն Վ. Կատվալյանի և բարբառագիտության բաժնի աշխատակիցներ Ն. Խաչատրյանի, Ժ. Միքայելյանի, Գ. Մկրտչ-

յանի կողմից, իրականացվել է Գեղարքունիքի մարզում՝ ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի ֆինանսական աջակցությամբ:

Կատարված հավաքչական մանրակրկիտ աշխատանքների, համապատասխան գիտական գրականության և ինստիտուտում առկա՝ «Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով» գրանցված նյութերի հիման վրա ձևավորվել են Գեղարքունիքի մարզի բնակավայրերի բարբառային բնութագրերը, դրանք համալրվել բարբառային և բանահյուսական հարուստ նյութով, ժողովրդագրական տեղեկություններով ու փաստական տվյալներով, որոնք էլ ձևավորել են տարածքի բարբառային միավորների և դրանց հատկանիշների տարածման համընդգրկուն պատկերը:

Վ. Կատվայանի հեղինակությամբ է ամբողջացել «Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր» խորագրով ուսումնասիրությունների շարքի առաջին՝ «Գեղարքունիքի մարզ» հատորը («Ասողիկ» հրատ., 2018, էջ):

Աշխատությունը ներառում է բարբառային հայերենի արդի վիճակը հիշյալ մարզի շուրջ վեց տասնյակ բնակավայրերում, բաղկացած է երեք մասերից և յոթ գլուխներից:

Առաջին մասում ընդհանուր տեղեկություններով ներկայացվում են տարածքի բնակավայրերում այսօր գործառող Մշո, Բայազետի և Դիադինի բարբառները, Գանձակի միջբարբառը, Մակուի և Արծափի խոսվածքները: Երկրորդ մասում ներկայացվում են մարզի բնակավայրերը՝ իրենց բարբառային խոսքի գործառական հատկանիշներով և զարգացման միտումներով, բարբառային բնութագրերով, ինչպես նաև խոսվածքային առանձնահատկություններով: Բարբառային հատկանիշները համեմատական կարգով ներկայացվում են նաև Գ Ջահուկյանի մշակած բազմահատկանիշ վիճակագրական դասակարգման աղյուսակներով: Երրորդ մասը ընդգրկում է գիտական տառադարձությամբ գրանցված բարբառային կենդանի խոսքի բազմաթիվ տարաբնույթ նմուշներ:

Աշխատության վերջում գետեղված է նաև մարզի տարածքի խոսվածքների բարբառային բառերի ցանկը, որտեղ յուրաքանչյուր բառային միավոր նշանակված է ըստ բնակավայրերի:

Բարբառագիտական աշխատանքները լույս են սփռում ոչ միայն հայերենագիտության, այլև հայոց պատմության, ազգագրության, բանահյուսության, ձեռագրագիտության և հարակից այլ բնագավառների խնդիրներին: Նման նպատակ ունի նաև հայ բարբառագիտական առկա գրականությունը ևս մեկ ուշագրավ միավորով համալրող արժեքավոր այս գիրքը, որ ծնվել է տարիների աշխատանքով:

Սույն գիրքը նախատեսված է բարբառագետների, ազգագրագետների և ուսանողների, առհասարակ հայագիտությամբ հետաքրքրվողների համար: Այն կարևոր նյութ է մատուցում հայագիտական հետազոտություններին, կարող է օգնել բարբառագիտության, հայոց լեզվի պատմության հարցերի պարզաբանմանը, օգտակար լինել նաև ժողովրդագրական, հանրագիտաբանային տեղեկատու աշխատանքների մասնագետներին:

Հուսանք, որ այն նախօրինակ կլինի ՀՀ մարզերի, Արցախի Հանրապետության և Ջավախքի բարբառային համապատկերի ուսումնասիրության և հրատարակման գործում:

Բանասիր. գիտ. թեկնածու Ա. Վարդանյան

Ա. Վ. Գալստյան, Արևելահայ գեղարվեստական վավերագրության լեզուն (19-րդ դ. 60-ական-21-րդ դ. 10-ական թթ.), գիրք Ա., «Էդիթ Պրինտ», Երևան, 2020, 264 էջ:

Գեղարվեստական վավերագրությունը միշտ հաճույքով և հետաքրքրությամբ եմ կարդում: Այն քեզ կարծես տեղափոխում է այլ ժամանակներ, ծանոթացնում նշանավոր մարդկանց, ներկայացնում մեծ ու փոքր զանազան դեպքեր, ու մի պահ թվում է, թե ապրել ես այդ ժամանակներում, քայլել մեծերի կողքին, մասնակից եղել նրանց առօրյային: Ընթերցելիս այդ ամենը կատարվում է ակամա, և հաճախ չես էլ մտածում, թե ինչպես է վավերագրողը քեզ տեղափոխում իր ժամանակները, բացում իր և ուրիշների հոգեկան աշխարհը, մասնակից դարձնում տարբեր իրադարձություններին:

Բ. գ. թ., դոց. Ա. Գալստյանի «Արևելահայ գեղարվեստական վավերագրության լեզուն» գիրքը նվիրված է հենց այս խնդրին. լեզվաճական ի՞նչ առանձնահատկություններ ունի գեղարվեստական վավերագրության լեզուն, հեղինակները ի՞նչ միջոցներով են կառուցում իրենց խոսքը, որով ներկայացնում են թե՛ իրենց, թե՛ այն մարդկանց ներաշխարհը, որոնց մասին խոսում են, ինչպե՞ս են վերստեղծում, կենդանացնում անցած դեպքերն ու իրադարձությունները: Սա այս մենագրության միայն հիմնական նպատակադրումն է, որն իրականացնելու համար գրքում նաև հարակից այլ բազմաթիվ հարցեր են արծարծվել:

Աշխատության մեջ հեղինակն առաջին հերթին ներկայացրել է, թե ինչ է ընդգրկում գեղարվեստական վավերագրությունը (հիշատակարան, հուշագրություն, ուղեգրություն, օրագրություն, էսսե): Մեղմ անդրադարձով պատկերվում են հայ գեղարվեստական վավերագրության ակունքները, վերջինիս դրսևորումները նաև բանահյուսության մեջ, բայց քանի որ հեղինակի նպատակը այդ ժանրի զարգացման ամբողջ պատմության ընթացքն ուսումնասիրելը չէ, այդ ամենն արվում է ներածական բաժնում՝ որպես հիմք ու նախաբան կատարվելիք բուն աշխատանքի:

Գրքի առաջին գլխում հանգամանորեն քննվում են ուսումնասիրվող բուն շրջանին վերաբերող նյութերը, թեև ըստ անհրաժեշտության

երբեմն կա անդրադարձ նախորդող շրջանների աղբյուրներին: Հեղինակը ներկայացնում է հարցի վերաբերյալ տեսակետները, հստակեցնում իր մոտեցումները, ներկայացնում սկզբնաղբյուրների ընտրության սկզբունքները, այնուհետև անցնում մյուս հարցերի քննությանը:

Ուսումնասիրության մեջ ուշադրության են արժանանում լեզվի պատմական զարգացման ընթացքը և նրա դրսևորումը գեղարվեստական վավերագրության մեջ, ազդեցությունը լեզվաոճական հատկանիշների վրա: Տեսական դրույթներն առատորեն ուղեկցվում են համապատասխան մեջբերում-օրինակներով, որոնք ավելի հստակ և հիմնավոր են դարձնում ասվածը, նպաստում նյութի հեշտ ընկալմանը:

Պարզ է, որ ամեն մի հեղինակ մտքերը շարադրում է իր անհատական խոսքի միջոցներով, իր ոճով, և դա նկատի է առնվում տվյալ հեղինակի երկի լեզվաոճական առանձնահատկությունները քննելիս: Սակայն գեղարվեստական վավերագրության լեզվի դեպքում անհատական ոճի ուսումնասիրությունն է՛լ ավելի է կարևորվում, քանի որ գրվածքն իր էությամբ անձնական է, հեղինակի տեսածի և ապրածի անմիջական նկարագրություն՝ կատարված իր իսկ տեսանկյունից: Եվ այստեղ առաջ է գալիս նաև վավերագրության հեղինակի հոգեբանական գծերի ուսումնասիրման կարևորությունը, քանի որ այն մեծ ազդեցություն ունի մարդու աշխարհընկալման վրա:

Այդ պատճառով էլ Ա. Գալստյանը, լեզվական քննություն կատարելով հանդերձ, աշխատության երկրորդ գլխի առաջին մասում, որը վերնագրված է «Գեղարվեստական վավերագրության հոգեբանական հիմքերը՝ որպես բնագրի լեզվի կառուցվածքը պայմանավորող գործոններ», ուսումնասիրության նյութ է դարձնում նաև վավերագրությունների հեղինակների հոգեբանական ինչ-ինչ հատկանիշներ՝ ասվածը հիմնավորելով հոգեբանությանն առնչվող տարբեր աղբյուրների, տեսական ուսումնասիրությունների ներկայացրած փաստերով: Փաստական նյութի քննություն կատարելիս հեղինակը առանձին-առանձին ներկայացրել է պատմողական և նկարագրական խոսքի ոճական դրսևորումները, քննել դիմանկարը, բնանկարը վավերագրության մեջ, երկխոսության դերը խոսքի կառուցման գործընթացում:

Գրքի երկրորդ գլուխը նվիրված է բառապաշարին: Բառի քննությունը կարևոր է ոչ միայն նրանով, որ բացահայտում է հեղինակային լեզվին բնորոշ բառաշերտերը, բառի գործածության յուրահատկությունները, լեզվի զարգացման ընթացքին առնչվող տարբեր իրողություններ, այլև նրանով, որ բառագործածության քննության միջոցով հնարավոր է դառնում բացահայտել հեղինակների վերաբերմունքը, քանի որ բառի ընտրությունը նաև վերջինի արտահայտման միջոց է: Բառաշերտերի առանձնացման միջոցով վեր են հանվում ներկայացվող ժամանակի լեզվական մի շարք առանձնահատկություններ, հասարակական կյանքի տարբեր իրողություններ, ինչպես նաև բացահայտվում են այն յուրահատկությունները, որոնք բնորոշ են հատկապես վավերագրության լեզվին: Բառային միավորները քննելիս հեղինակն անդրադարձել է նաև օտար բառերի գործածությանը: Այստեղ խմբերով ներկայացված են տարբեր լեզուներից անցած բառեր՝ բնագրային օրինակներով:

Բառակազմական քննությամբ ներկայացվում են այն կաղապարները և բաղադրիչները, որոնցով կերտված բառերն առավել շատ են հանդիպում գեղարվեստական վավերագրություններում: Այստեղ քննությունը հանգամանորեն է կատարված, սակայն, կարծում ենք, որոշ դեպքերում ներկայացված են այնպիսի բառեր, որոնք լայն գործածություն ունեն, ուստի դրանք վավերագրությունների լեզվի առանձնահատկությունները ներկայացնող միավորներ չեն: Սա, անշուշտ, չի ստվերում կատարված ահռելի աշխատանքը:

Հեղինակին լիովին հաջողվել է ստեղծել գիտական մի աշխատություն, որ առաջ քաշված տարբեր հարցադրումները ստիպում են մտածել, վերլուծել ասվածը, համաձայնել կամ չհամաձայնել հեղինակին, երբեմն էլ մտովի նոր հարցադրումներ առաջ քաշել, որն էլ հենց գիտական ցանկացած ուսումնասիրության նպատակն է:

Բանասիր. գիտ. թեկնածու, դոց. Ա. Մարգարյան

artashes.sargsyan@ysu.am

Ձահուկյանական ընթերցումներ (գիտական հոդվածների ժողովածու), Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2019, 224: Լույս է տեսել ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հիշյալ վերտառությամբ արդեն ամենամյա դարձած գիտական հոդվածների ժողովածուն, որ ներառում է ինստիտուտի, ինչպես նաև գիտական այլ հաստատությունների (ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության, արևելագիտության ինստիտուտների, բուհերի՝ ԵՊՀ, ՀՊՄՀ, ԵԲՊՀ, Երևանի պետական կոնսերվատորիայի, այլև «Տաթև» գիտակրթական հաստատության) աշխատակիցների զեկուցումները:

Գիտական նման փորձառությունը հայերենագիտության հարցերի կոորդինացման լավագույն օրինակ է: Դրանք վերաբերում են հայերենի ընդհանուր և համեմատական, լեզվի պատմության, բարբառագիտության, իմաստաբանության, նրա արդի վիճակի, բնագրի վերլուծության, ձևային նկարագրության, թարգմանության հարցերին, որոնք ընդհանուր առմամբ, կարելի է ասել, հաջողված են, թեև կան քննվող որոշ հարցերի ոչ այնքան համոզիչ վերլուծության դեպքեր, որոնք ոչ էսպես, այլ ըստ երևույթին չեն բռնում այս արժեքավոր ժողովածուին:

Համեմատական լեզվաբանության ոլորտում Ն.Սիմոնյանը ճշտիվ անդրադարձել է *լավոտել* «ապականել», *խարել / խարխափել, հեւալ / հինհնալ* «շնչակտուր լինել» / *հնհնալ* (նույնը) բառերի ծագմանը, Հ. Ջաքարյանը քննել է, իր ձևակերպմամբ, *ծ* վերջնահնչյունով մի խումբ բառեր, Հ. Հմայակյանը փորձել է ստուգաբանել *սօսի* բուսանունը, Վ. Գ. Համբարձումյանը ներկայացրել է *մարգարիտ* բառի ծագումը, Ա. Վարդանյանի հոդվածը վերաբերում է մի քանի անձնանունների բարբառային ձևերի ստուգաբանությանը:

Հետաքրքիր աշխատանքներ են կատարվել բառաքնության և ստուգաբանության ոլորտում: Լ. Հովհաննիսյանը մանրամասն, նոր փաստերով անդրադարձել է հայ. *խծուծ* «զգած վուշի կամ կանեփի

մնացուկը», *խոշորձ(ն)* «մի բույսի անուն», *հուշտ* «խրտնելը», *սկսել* և սրանցից մեկ-երկուսին հարակից բառերին՝ դրանց ծագման և գործածության հիմքով. Ն. Հովհաննիսյանը ներկայացրել է արդի հայերենի իմաստափոխված մի քանի բառեր՝ *արգահատել, գռեհիկ, զիւղակ(ան), զլանալ, խօսնակ, ձեռնտու (լինել), սեթևեթել*. Բառագիտական-ապացուցողական լայն վերլուծությամբ: Այս բաժնում քննության առարկա են եղել նաև «հագուստ» իմաստային խմբի միավորները նոր գրականի երկու տարբերակներում (Լ. Ղամոյան), այլև *կիսել / կիսվել* բայերի իմաստային տարբերությանը (հեղ.՝ Վ. Ներսիսյան): Ուշագրավ է հայ. *արջ* (բառ)արմատով բուսանուններին վերաբերող քննությունը (Ա. Ամիրխանյան):

Հայոց լեզվի պատմության ոլորտի մեջ առանձին հոդվածներ են նվիրված միջնադարյան բժշկարանի (Հ. Թադևոսյան), Գ. Տաթևացու հայտնի երկի (Ս. Գրիգորյան), Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսարանի ձեռագրերի (Վ. Խաչատրյան) բառապաշարին, Ս, Գրքի հարցական նախադասությանը (Ս. Ղուկասյան), Մովսես Սյունեցու ճառերի նորակազմ բառերին (Ս. Գրիգորյան, Ն. Պարոնյան): Խիկար Իմաստունի հայտնի երկի մեջ գործածված դարձվածային միավորները հաջողությամբ քննված են Ն. Դիլբարյանի հոդվածում: Կարևոր ենք համարում Ֆ. Հակոբյանը հոդվածը՝ նվիրված էլեկտրոնային թարգմանության խնդիրներին, քանի որ այդ բնագավառը հայերենի ուսումնասիրության մեջ բավականին հեռանկարային է:

Հայերենի բարբառների շատ հարցերի վերաբերող նոր քննությունը այս դեպքում ևս ակնառու է: Ինստիտուտի բարբառագիտության բաժինը տասնամյակներ շարունակ հավաքել է արևելյան և արևմտյան տարածքների բարբառային հարուստ նյութ, որը ներկայումս դառնում է վերլուծության առարկա: Ըստ այդմ՝ Վ. Կատվայանն անդրադարձել է արևմտահայ խմբակցության Խուռնավուլի խոսվածքի հնչյունական, քերականական հատկանիշների վերլուծությանը: Ջ. Բառնասյանը ներկայացրել է հայենի բարբառներին վերաբերող մենագրություններում Հ.

Թումանյանի հայտնի պատմվածքի հնչադարձություն-գրադարձությամբ տարբերակների վերլուծությունը:

Միանգամայն գնահատելի է նման ծավալի աշխատանքը, որը կարևոր նպաստ է հայերենագիտության առաջընթացին

Ժողովածուի վերջում՝ բովանդակության ցանկում, նշվում է, որ «Խմբագրական խորհուրդը պատասխանատու չէ հոդվածներում առկա ոճական և իմաստային վիճելի ձևակերպումների համար», որն առարկելի է, քանի որ տեղին չէ:

Վ. Գ. Համբարձումյան, Լեզվաբանության հիմունքներ, Ե., «Աստղիկ» հրատ., 2019, 368 էջ: Դասագիրքը երաշխավորված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից որպես ուսումնական ձեռնարկ բուհերի բանասիրական ֆակուլտետների համար:

Այն իր ընդգրկումով, թեմատիկ բաշխումով և մեթոդիկայով նորություն է, գրված է այդ գիտաճյուղի նորագույն տվյալների ներառումով՝ ներկայիս կրթական ծրագրերին համապատասխան:

Բանասիրական կրթության իրականացման նպատակով կազմված սույն դասագիրքը, ի համեմատություն լեզվի մասին գիտելիքներին նվիրված ուսումնական այլ ձեռնարկների, նոր է ամենից առաջ տեսական մոտեցումներով, կառուցվածքով, տվյալ բնագավառի հիմնահարցերի արդի լուծումների ներդրումով, ավանդական, ժամանակի քննությունը բռնած դրույթների ճիշտ օգտագործմամբ:

Այն կառուցված է նոր մեթոդիկայով, մասնավորապես վերջին տարիներին մուտք գործած համակարգչային առկա և հեռավար ուսուցման պայմաններում: Նման մեթոդիկայի կիրառմամբ մատուցվող նյութը («փաթեթները») այստեղ ներկայացվում են իբրև ընդհանուր թեմատիկայի մեջ մտնող առանձին թեմաներ:

Ձեռնարկն ընդգրկում է երկու՝ լեզվի ընդհանուր (տեսական) և կոնկրետ (գործնական) գիտելիքների բաղադրիչներ («Լեզվի իմացության սահմանումները» և «Լեզվական իրականությունների առանձնացումները»), առաջինը լեզվի և հասարակության առնչությամբ:

յանը վերաբերող հիմնական հարցերի տեսական մատչելի վերլուծություն է, իսկ երկրորդը՝ լեզվի հնչյունական, բառային (բառապաշարային) և քերականական երևույթների նույնպիսի քննություն:

Այն կազմված է ըստ բուհական ուսուցման ժամաքանակով նախատեսված ծրագրի՝ ելնելով ոչ միայն լսարանային, այլև փաթեթային ձևով (համակարգչի միջոցով) ուսուցման պահանջներից: Ընդ որում՝ յուրաքանչյուր թեմա, որ մտնում է այս կամ այն ընդհանուր թեմատիկայի մեջ, սկզբում ունի հարցերի այն ամբողջությունը (իբրև *հիմնահարցեր*), որն իր լուծումն է գտնում բուն շարադրանքում: Իսկ վերջում նշվում է երկու կարգի գրականություն՝ *հիմնական* և *լրացուցիչ*, որ ընձեռում է ավանդականի և նորագույնի միասին օգտագործման հնարավորություն՝ լեզվի մասին գիտության մեջ առավել մասնագիտանալու նպատակով: Երբեմն շարադրանքի տողատակում տրվում են ուղղակի կամ համեմատելի հղումներ՝ նորմատիվ կամ տեսական գրականությանը, որն ինքնուրույն աշխատանքի աղբյուր կարող է լինել:

Ձեռնարկն ունի երկու բաժին, առաջինում երկու թեմատիկա՝ «Լեզվաբանության առարկան և խնդիրները» և «Լեզվի հիմնական բնութագրերը», իսկ երկրորդում չորս՝ (ավանդական անվանումով) «Հնչյունաբանություն», «Բառագիտություն», «Ձևաբանություն» և «Շարահյուսություն»՝ իրենց առանձին թեմաներով, և ըստ անհրաժեշտության բերվում են գծապատկերներ (թվով՝ 17):

Հայոց լեզվի պատմական ուսումնասիրության արդի խնդիրներ (գիտական հոդվածների ժողովածու), ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2020, 227 էջ: Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը գիտական արտադրանքի հրապարակման առումով, կարելի է ասել, չի զիջում ակադեմիական մյուս ինստիտուտներին: Հիշյալ ժողովածուն, որ լույս է տեսել ՀՀ ԳԱԱ հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի օժանդակությամբ, ունի լայն ընդգր-

կում, էջեր է հատկացրել ինստիտուտի, այլև ուրիշ հաստատությունների ուսումնասիրողների աշխատանքներին:

Առանձին ուշադրության առարկա են հայերենի ներքին կողմին վերաբերող աշխատանքները. վերջինիս բարբառներում, գրական հուշարձաններում լեզվական նյութի վերաբերյալ բառաքննական-բառագործածության առանձին հարցերի լուծումն ունի այն նշանակությունը, որ ավելի մեծ հնարավորություն է ստեղծվում լեզվի պատմության ամբողջացման համար:

Հայերենի բառաքննության և ստուգաբանության հարցերը այս ժողովածուի ոչ պակաս կարևոր մասն են, թերևս դժվարին մասը՝ գիտական ապարատի գործադրման իմաստով: Առաջ են քաշվում Հ. Աճառյանի և Գ. Ջահուկյանի այդ բնույթի աշխատություններում (Հյուբշմանից և Մեյեից հետո) տեղ գտած բառաքննական լուծումների վերանայման առաջարկներ, որը տեղին է, բայց ոչ անառարկելի, որովհետև նախ՝ դա արվում է առանց հինանատոլիական, թոխարական և այլ լեզուների տվյալների, գրեթե չեն բացատրվում հնչյունական հնարավոր նոր անցումների մեխանիզմները, դրանց գործառության ժամանակագրությունը, այլև անհայտ են մնում գրավոր և նախագրային շրջաններում հայերենի և մյուս (ցեղակից և այլ) լեզուների առնչությունների բնույթը և տեմպերը:

Ուշագրավ հոդվածներ են նվիրված լեզվի պատմության, նրա բառապաշարի քննության և ստուգաբանության, բարբառների, այլև անվանաբանության, վավերագրության, տերմինաբանության հարցերին, որոնց լուծումը կամ առաջադրումը, անշուշտ, ձեռքբերում է հայերենագիտության բնագավառում: Դրանք ժողովածուի հիմնական և ամենաուշագրավ մասն են, դրանցում կա հայերենի գիտական ուսումնասիրության արդյունք:

Նշենք նաև, որ ժողովածուն լույս է տեսել ակնհայտ թերացումներով, որ թերևս հետևանք է հապճեպ հրատարակման: Հոդվածներից մի քանիսում կան ակնհայտ շեղումներ թեմայից, ծավալի անհարկի ուռճացում, տողատակերի և այլ տեղերի ավելորդություններ, շարադրանքի այնպիսի մասեր, որոնք կապ չունեն լեզվագիտական, առավել ևս հայերենագիտական ոլորտի հետ: Հոդվածներում գիտական ապարատի

անճշտությունը, անմիակեպ դրվածքը թողնում են տարակուսելի տպավորություն. կան գրականության հղումների, մեջբերումների, ձևակերպումների սխալներ և այլն: Տարօրինակ է նաև այն, որ այս անգամ ևս (հմմտ. «Ջահուկյանական ընթերցումներ (գիտական հոդվածների ժողովածու)», Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2019, էջ 222) ժողովածուի վերջում՝ բովանդակության ցանկում, նշվում է՝ «Խմբագրական խորհուրդը պատասխանատու չէ հոդվածներում առկա ոճական և իմաստային վիճելի ձևակերպումների համար»:

Հայերենի բնագավառում ակադեմիական յուրաքանչյուր գրավոր խոսք անպայման պիտի լինի պատշաճ մակարդակով՝ թե՛ բովանդակության և թե՛ հրատարակման առումով:

«Նոր բառեր» (Ե պրակ), ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2020, 176 էջ: Լույս է տեսել Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բառարանագրության բաժնի աշխատակիցների հեղինակությամբ (Ա. Ս. Գալստյան, Ս. Ա. Գալստյան, Ֆ. Ա. Հակոբյան. Գ. Կ. Հովսեփյան. Ա. Հ. Մուշեղյան, Ա. Գ. Սահակյան) հիշյալ վերտառությամբ շարքի հերթական պրակը, որը ներառում է 1510 նոր բառ:

Նախ՝ միանգամայն օրինակելի է այն, որ նորաստեղծ այդ բաժինը իր փոքրաթիվ կազմով արդեն մի քանի տարի է, ինչ արդյունավետ աշխատանք է ծավալում արդի հայերենի բառապաշարի բառարանային մշակման ուղղությամբ:

Առանձնապես վերջին տասնամյակների մեր իրականությունը, բնականաբար, հազեցած է գրավոր խոսքի մեջ նոր բառերի և եղած բառերի նոր իմաստների (տեղին կամ անտեղի) գործածությամբ: Նման պարագայում այս բաժինը (ղեկավար Ա. Ս. Գալստյան) մեզանում թերևս միակն է, որ ամենօրյա եռանդ և մասնագիտական հմտություն է ի սպաս դնում նման միավորների հավաքման, բառարանային մշակման, լույսընծայման գործին:

Բառարանն ընդգրկում է 1510 բառ և իմաստային գործածություն: Բառահոդվածները ներկայացվում են իրենց իսկ հեղինակների մշակած

սկզբունքներով (քերականական նշումներ, բառի տվյալ իմաստի ընդգծում՝ ըստ բնագրի, այլև բերվում են համապատասխան օրինակ կամ օրինակներ՝ կից գրավոր աղբյուրի (գրականության) էջի նշումով: Նկատենք, որ նման բառերը հիմնականում ներկայացվում են եզակի կիրառությունների հիման վրա, չեն հանդիպում հրապարակի վրա եղած բառարաններում՝ անկախ վերջիններիս բնույթից և ծավալից. հմմտ. *Իմաստաբեռ*, ած. Մտքերով ծանրաբեռնված: Մեր երկրում էլ չի լսվում նրանց ահեղ մոնչյունը, հանդարտ, իմաստաբեռ քայլերն էլ չկան մեր փղերի (ԱԱ, էջ 62. իմա՛ Ա. Ափինյան, Արդի գրականություն, Ե., 2010): Այս կետում, թերևս, հարկ կա հեղինակների ուշադրությունը հրավիրելու նյութի բառագիտական ուսումնասիրման անհրաժեշտության վրա. օրինակ՝ այդ նյութի շուրջ զեկուցել գիտական կոնֆերանսներում, գրել և լույս ընծայել հոդվածներ՝ գիտական հանդեսներում և այլն: Հանդիպում են նոր բառեր, որոնք կա՛մ իմաստով, կա՛մ կազմությամբ ճիշտ չեն (օր.՝ *այրահատիկ*, *հախունորեն* և այլն), ուստի պիտի քննության և գնահատության առարկա դառնան հայերենի բառագիտական նորմի տեսանկյունից:

Գիրքը, ինչպես նախորդ պրակների դեպքում է եղել, ունի համառոտագրությունների, օգտագործված աղբյուրների (գրքեր, ամսագրեր, հանդեսներ, բառարաններ և այլն) ցանկեր, որոնք անհրաժեշտ են բառի բնագրային գործածության հավաստիության տեսանկյունից:

Նման բառարանի պարբերական կազմումը և հրապարակումը լիովին արդարացվում են հայերենի նորագույն բառապաշարի բառագիտական-բառարանագրական արժևորման տեսանկյունից: Ուստի կարելի է ասել, որ հեղինակները մեծ գործի են ձեռնամուխ եղել հայ բազմադարյան բառարանագրության ներկայիս շրջանում, որ պատիվ կբերեր ամեն մի նվիրյալ ուսումնասիրողի:

Վ. Գ. Հ.

SCIENCE NEWS .

Հայոց գիտական-մշակութային կյանքը այսօր բնությանը հասած դժվարին, արգելանք պայմաններում շարունակում է մնալ անվարան, առաջընթացի մեջ:

Ամենօրյա առցանց գործունեությանը զուգընթաց՝ կազմակերպվում են գիտաժողովներ, տեղի են ունենում հանդիպումներ, որոնք կարևոր են իրականության ճանաչման, մշակութային անցյալի շատ խնդիրների նոր քննարկման ու լուսաբանման համար:

Այդպիսի էր այս տարվա հուլիս ամսվա 6-8-ին ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի կազմակերպած առցանց գիտական նստաշրջանը, որը նվիրված է նոր ժամանակի մեծություններից Մխիթարյան միաբանության պարծանք Հ. Ղ. Ալիշանի ծննդյան 200-ամյակին: Թե ինչ դեր է խաղացել այդ միաբանությունը հայ մտավոր կյանքի առաջընթացի մեջ, դժվար է գերագնահատել:

Այսօր ևս Ալիշանի գրական, հնագիտական, աղբյուրագիտական, պատմական-աշխարհագրական գրավոր ժառանգությունը անսպառ աղբյուր է

հայագիտության և հայերենագիտության անդաստանում:

Լայն ընդգրկում ունեն այդ նստաշրջանը, մասնակցում էին մայր հայրենիքի և արտերկրի գիտական բազմաթիվ հաստատությունների գիտնականներ՝ հոգևոր դասի ներկայացուցիչներ, բանասերներ, գրականագետներ, գրողներ, պատմաբաններ, աղբյուրագետներ, լեզվաբաններ: Միջոցառումը կազմակերպված էր մեծ հոգածությամբ, հաջողությամբ ավարտվեց ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Յու. Մ. Սուվարյան), Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի (բ. գ. դ. Վ. Գ. Դերիկյան) ներդրած ջանքերի շնորհիվ:

Ի թիվս ակադեմիական հումանիտար այլ ինստիտուտների՝ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը նույնպես ունեցավ իր ակտիվ մասնակցությունը: Նրա աշխատակիցներից երեքը հանդես եկան լեզվի հարցերի առնչությամբ Հ. Ղ. Ալիշանի վաստակի քննությանը վերաբերող ուշագրավ զեկուցումներով. Ինստի-

տուտի տնօրեն, ք. գ. դ. Վ. Լ. Կատվայանի զեկուցման թեման էր «Ալիշանը հայ միջնադարյան բանաստեղծության բարբառային շերտի ուսումնասիրող և կիրառող», ք. գ. դ. Հ. Հ. Մեսրոպյանի զեկուցման թեման՝ «Բուսանունները Հ. Ղ. Ալիշանի «Այրարատ»ում», ք. գ. դ. Վ. Գ. Համբարձումյանի թեման՝ «Ալիշանի մտքի երեք պահ (լեզվագետ. դիցաբան, բառագետ)»: Հիշյալ զեկուցումներում նշվեցին նաև առաջարկություններ մեծանուն հայագետի լեզվագիտական գործունեության առանձին ուսումնասիրության

վերաբերյալ, որն անհրաժեշտ է հայոց լեզվի նոր շրջանի պատմության համար: Ձեկուցումների հետ կապված եղան տարբեր կարգի հարցեր, հնչեցին գնահատության խոսքեր:

Ուստի լեզվի ինստիտուտի մասնակցությունը, թեկուզ միայն գիտական համագործակցության իմաստով, միանգամայն տեղին էր և արդյունավետ, իսկ թեմատիկայի առումով՝ կարևոր ուշ միջնադարի այդ մեծ գիտնականի գիտական ժառանգության լայն գնահատության հարցում:

ՌՈՒՔԵՐՏ ՄԱՐԿՈՍԻ ԹՈՒՄՄԱՆՅԱՆ (1937-2020)

Կյանքի 83-րդ տարում իր մահկանացուն կնքեց անվանի հնչյունաբան, գիտության դոկտոր Ռ.Մ. Թոխմախյանը: Ավելի քան կես դար անընդմեջ նա աշխատել է Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում՝ անցնելով կրտսեր գիտաշխատողի պաշտոնից մինչև բաժնի վարիչի, վերջին տարիներին առաջատար գիտաշխատողի ուղին: Մեծ է նրա ներդրումը առանձնապես հայերենի փորձառական հնչյունաբանության բնագավառում:

Անվանի լեզվաբանը բանասիրական կրթություն է ստացել Երևանի պետական համալսարանում, որն ավարտելով՝ ընդունվել լեզվի ինստիտուտի ասպիրանտուրան, որտեղ և պաշտպանել է թեկնածուական և դոկտորական թեզեր: Այդտեղ է նա իր գիտական հմտությունն ու կարողությունը ներդրել արդի հայերենի ուսումնասիրության մեջ:

Այդ բնագավառում նա գրեց «Հայերենի շեշտադրությունը» և «Հայերենի հնչաշղթան» մենագրությունները, որոնք անփոխարինելի աշխատություններ են, ունեն բացառիկ նշանակություն արդի հայերենի շեշտի, վերհատույթային մյուս միավորների, հնչույթային բաղադրիչների շարակարգային հարաբերությունների վերհանման առումով, ճշգրտումներ են մտցնում հնչյունական համակարգի բնույթի որոշման հարցերում:

Տարիներ շարունակ, համատեղությամբ, դասավանդել է տարբեր բուհերում, հեղինակակիցների հետ միասին գրել բուհական գործնական ձեռնարկ, արևելահայերենի և արևմտահայերենի խոսակցական հիմքերի վերաբերյալ ուսումնասիրություն: Գիտական հանդեսներում, մեզանում և արտերկրի կոնֆերանսներում հանդես է եկել ուշագրավ հոդվածներով, կարդացել զեկուցումներ, որոնք վերաբերում են հնչյունաբանության կարևոր խնդիրներին:

Նա ինստիտուտի հարգված աշխատակից էր, ընտանիքի հոգատար հայր, ներհուն մտավորական, միջավայրի օրինակելի անձնավորություն: Նրա անունը մնալու է հայ լեզվաբանական գիտության մեջ:

ԽԱՉԻԿ ԳԱԲՐԻԵԼԻ ԲԱՂԻԿՅԱՆ (1933- 2020)

Վախճանվել է հայագիտության անխոնջ մշակ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Խ. Գ. Բաղիկյանը: Նա իր գիտակցական կյանքը նվիրել է դպրոցին և բուհին, եղել է Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի աշխատակից: Հեղինակ է տարբեր բնույթի գրքերի, գրել է բուհական ձեռնարկներ, ունի մի շարք մենագրություններ: Այս ոլորտում նա հանդես բերեց մեծ նվիրում, մեկ տասնյակից ավելի գրքերից բացի՝ գրեց մի քանի հարյուրից անցնող գիտական հոդվածներ, զեկուցման թեզեր՝ հայերենի տարբեր ոլորտների վերաբերյալ, այլև գրքեր՝ նվիրված անվանի հայագետների և մշակույթի դեմքերի կյանքին:

Նա անվանի շարահյուսագետ էր, բուհական և ակադեմիական մենագրությունների համահեղինակ, լավագույն հուշագիր-կենսագիր, հեղինակ բուհական տարբեր դասագրքերի; Նրա լեզվաբանական աշխատությունները վերաբերում են հայերենի կոչականի, պարզ նախադասության, վերջինիս շարադասության, ժամանակակից հայերենի դարձվածային միավորների ուսումնասիրությանը:

1960-ական թթ. ուսուցչությունից անցավ գիտությանը՝ լինելով լեզվի ինստիտուտի ասպիրանտ, որտեղ էլ պաշտպանեց իր թեկնածուական և դոկտորական թեզերը: Իր գործին նվիրված գիտնական էր, լավ ուսումնասիրող, արդյունքը՝ բազմաթիվ, տարբեր ծավալի ու բնույթի աշխատությունները, որոնք մնում են արդիական և անշրջանցելի: Մասնակցել է հայերենագիտական գիտաժողովների և կոնֆերանսների՝ մեզանում և արտերկրում, հանդես գալով կարևոր զեկուցումներով:

Հայ մշակույթի գործիչների, գիտության լեզվաբան ներկայացուցիչների կյանքին ու գործունեությանը նվիրված նրա գրքերը պարունակում են հարուստ նյութ, կարդացվում են մեծ հետաքրքրությամբ. այդ գրքերում նա լավագույն պատմող ու վերլուծող է:

Նա Շիրակի սարահարթի ծնունդ էր, տոհմիկ հայի զավակ, իր խառնվածքով մարդամոտ և բնավորությամբ շիտակ, ընտանիքի օրինակելի հայր: Նրա անունը մնալու է լեզվի ինստիտուտի պատմության մեջ, լեզվաբանական ժառանգությունը՝ հայագիտության անդաստանում:

ՖԵԼԻՔՍ ՓԱՌՆԱԿԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ (1933- 2020)

2020 թ. հուլիսի 1-ին հանկարծահաս մահը խլեց ֆենոլոգիայի և կենսաբանության բնագավառի անվանի մասնագետ Ֆ. Փ. Հայրապետյանի երկրային ներկայությունը:

Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի նորաստեղծ բաժնի աշխատակից էր տասնամյակներ շարունակ, որ հետագայում անցել էր այլ աշխատանքի՝ լավագույն հիշողություններ թողնելով ինստիտուտի գիտական միջավայրում՝ իբրև աշխարհագրության և կենսաբանության ճյուղային տերմինաբանության ուսումնասիրող:

Ինքնատիպ անձնավորություն էր և ներկայանալի գիտաշխատող, աչքի էր ընկնում գիտական իր լրջմիտ իմացությամբ, բավականին զուսպ մտածողությամբ և մարդկային լավագույն գծերով: Նման գիտնականի կորուստը ցավալի է հայագիտության համար:

Ավարտել էր Երևանի պետական համալսարանը, վերջինիս ասպիրանտուրան՝ Պետերբուրգում, աշխատել ՀՀ Հանրագիտարանում, եղել Հայաստանի աշխարհագրության ընկերության գիտնական քարտուղար: Նրա տարերքը գիտական տերմինաբանությունն էր:

Լեզվի ինստիտուտում աշխատելու տարիներին գրեց աշխարհագրության, կենսաբանության տերմինաբանությանը վերաբերող գիտական հոդվածներ, թեկնածուական ատենախոսություն՝ ֆենոլոգիայի ոլորտին վերաբերող: Նա հեղինակ է «Ֆենոլոգիայի հայերեն-ռուսերեն-անգլերեն բացատրական բառարանի» (Ե., 2007 թ.), որը լուրջ ներդրում է այդ գիտաճյուղի մեջ: Իր գիտելիքներն ու փորձը միաժամանակ ավանդում էր ոչ միայն բուհում, այլև դպրոցում, որ վկայություն է նվիրումի և աշխատասիրության:

Տարիներ ի վեր Հանրապետական 1-ին ալիքով վարել է «Կես ժամ աշխարհի շուրջը» հաղորդումը, որը ժամանակին ամենահետաքրքիր հեռուստատեսային ծրագրերից էր՝ ամենից առաջ միջին և բարձր տարիքի աշակերտության համար, շատ ուսանելի ու տեղեկությամբ հարուստ մի հաղորդում:

Բավականին մարդամոտ, ընկերական, բանիմաց, ընտանիքի օրինակելի հայր, և նրա հիշատակը դեռ երկար կմնա լեզվի ինստիտուտի միջավայրում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

100-րդ տարեդարձ	
Վ. Գ. Համբարձումյան. Գիտության նվիրյալ, գիտության առաջատար.....	3

ՀՈԴՎԱԾՆԵՐ

Կ. Շ. Աբրահամյան, Կ. Վեյլան, Անգլերեն և հայերեն հանպատրաստից խոսքի ընդհատումների մի քանի պատճառների մասին	5
Հ. Հ. Մեսրոպյան. <i>Նունկ</i> հասկացության անվանումները հայերենի բարբառներում .	14
Ա. Ռ. Մարտիրոսյան, Բառաիմաստային համակարգի զարգացման ըմբռնումը լեզվաբանական ուսմունքներում.....	25

ԲԱՆԱԿԵՃ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Լ. Գ. Թեյլան, Շարահյուսագիտական մի քանի դիտարկում.....	39
Ա. Հ. Աբաջյան, Ա. Լ. Յուզբաշյան, Դարձվածային միավորների գործածությունը Թաղևուս Առաքյալի «Վկայաբանություն» և «Գյուտ նշխարաց» երկերում.....	49
Լ. Ն. Ավետիսյան, Քրիստոնեական վարդապետությանն առնչվող բայական կայուն կապակցությունների իմաստային առանձնահատկությունները գրաբարում....	58

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Մ. Ռ. Բաղդոյան Անձի հատկանիշ արտահայտող բայական դարձվածային միավորների կառուցվածքային տիպերը հայերենում, ռուսերենում և անգլերենում.....	70
Վ. Գ. Համբարձումյան. Ստուգաբանական դիտարկումներ.....	78

ԳՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆ

Ա. Վարդանյան. Բարբառագիտական մատենաշարի առաջին գիրքը.....	92
Ա. Վ. Գալստյան, Արևելահայ գեղարվեստական վավերագրության լեզուն (19-րդ դ. 60-ական-21-րդ դ. 10-ական թթ.), գիրք Ա., «Էդիթ Պրինտ», հրատ., Ե., 2020, 264 էջ.....	95
ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ	98
ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ	105
ԼՐԱՏՈՒ	107

СОДЕРЖАНИЕ

К 100 - летию. В. Г. Амбарцумян. Выдающийся исследователь, ведущий науки. 3: Статьи: К. Ш. Абрамян, К. А. Велян. О некоторых причинах прерываний в спонтанной речи в английском и армянском языках - 5 : А. О. Месропян. Названия понятия *խնկ* [hunk] “ладан” в армянских диалектах - 14: А. Р. Мартиросян. О развитии семасиологической системы в лингвистических учениях - 25 : **Дискуссии и обсуждения:** Л. Г. Телян. *Некоторые наблюдения по синтаксису*-39: А. Г. Абаджян, А. Л. Юзбашян. Идиомы в трудах “Свидетельство апостола Таддея, проповедь, приход в Айк” и “Изобретение реликвий”-49. Л. Н. Аветисян. Семантические особенности глагольных устойчивых сочетаний, связанных с христианским архимандритством вграбаре -58 : **Сообщения:** М. Р. Бададян. Структурные типы вербальных фразеологических единиц характеризующие качества человека на армянском, русском и английском-70 : В. Г. Амбарцумян. Этимологические заметки.-78: **Рецензия 92: Книжное обозрение 98 : Научная жизнь 105.** Хроника - 107.

CONTENTS

On the 100th Anniversary. V. G. Hambardzumyan - Outstanding researcher, leading science 3: Articles: K. Sh. Abrahamyan, K. A. Velyan. - On some causes for interruptions in spontaneous talk in English and Armenian - 5 : *A. H. Mesropyan.* Dialectal variants of the concept of Armenian words *խնկ*[xunk] “incense”- 14 : *A. R. Martirosyan.* On the development of the system of lexical meaning in Studies of Linguistics - 25: **Discussion:** *L. G. Telyan. Some syntaxological review - 39. A. H. Abajyan, A. L. Yuzbashyan.* Idioms in the works “Apostle Thaddeus testimony, preaching, coming to Hayk (Armenia)” and “The invention of the relics” - 49: *L. N. Avetisyan.* The semantic specifications of verbal stable compounds relating to the Christian archimandrite in old Armenian.- 58 : **Reports. M. R. Badadyan.** Structural types of verbal phraseological units characterizing a person in Armenian, Russian and English - 70 : *V. G. Hambardzumyan.* Etimological notes- 78: **Book reviews - 92: Science News - 105: News - 107.**

Ի Գ Ի Տ Ո Ի Թ Յ Ո Ի Ն

ՀՀ ԳԱԱ Ն. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը հրատարակում է «Լեզու և լեզվաբանություն» հանդեսը, որի առաջի նհամարը լույս է տեսել 2003 թ.:

Հոդվածները պետք է ուղարկել տպված և համակարգչային տեսքով (դիսկետով կամ կրիչով), 8-10 էջի սահմաններում, տողերի միջակայքը՝ 1,5, տառաչափը՝ 12 և Sylfaen տառատեսակով (ամփոփումները ռուսերեն և անգլերեն՝ Times New Roman): Վերևում նշվում է հեղինակի անունը, ազգանունը, հաստատության անվանումը, հոդվածի վերնագիրը:

Հղումները և գրականության ցանկը պետք է համապատասխանեն:

Խնդրում ենք գրախոսական հոդվածներն ուղարկել գրախոսվող գրքի հետ:

Մեր հասցեն՝ ԳԱԱ Ն. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ

ՀՀ, 3750015, Երևան, Լուսավորչի 15

Հեռ.՝ (+374 10) 565 337

Կայքէջ՝ www.language.sci.am

Էլ.փոստ՝ inslang@sci.am

Հանդեսի պատասխանատու քարտուղար՝ meri-sargsyan@mail.ru

К С В Е Д Е Н И Ю

НАН РА институт языка имени Р. Ачаряна издает журнал “Язык и языкознание”, первый номер которого был издан в 2003г.

Статьи следует присылать в виде распечатки и компьютерного набора (на дискете), объем- в пределах 8-10 машинописных страниц, интервал– 1,5, размер шрифта - 12, шрифт- Sylfaen (резюме на русском и английском- TimesNewRoman). В начале указываются имя, фамилия, наименование учреждения, заглавие статьи.

Ссылки и список литературы должны соответствовать друг другу.

Просим статьи с отзывом или рецензией прислать с рецензируемой книгой.

Наш адрес: НАН институт языка имени Р. Ачаряна

РА, Ереван, Лусаворича 15

Тел.: (+374 10) 565 337

Веб. сайт: www.language.sci.am

Эл.-почта: inslang@sci.am

Ответственный секретарь: meri-sargsyan@mail.ru

ACKNOWLEDGEMENT

NAS RA language institute named after H. Acharyan is publishing afresh «Language and linguistics» magazine, the first number of which was published in 2003.

Please, send articles in hard and soft (on diskette) copies, within 8-10 pages, line spacing- 1,5, font size- 12, fonts- Sylfaen (the summary in Russian and English - Times New Roman). Author's name, institution and contact data should be placed in the upper right corner of the title page.

References or footnotes should be adequate to the list of bibliography.

Please, send reviews with the corresponding book.

Our address: NAS language institute named after H. Acharyan

RA, Yeravan, Lusavorich 15

Phone: (+374 10) 565 337